



ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոն
28th President of the United States Woodrow Wilson



Գեներալ-մայոր Ջեյմս Գ. Հարբորդ
Lieutenant General James G. Harbord



CONDITIONS IN THE NEAR EAST

**REPORT OF THE
AMERICAN MILITARY MISSION
TO ARMENIA**

By

MAJ. GEN. JAMES G. HARBORD
U. S. ARMY

(APPENDIX ONLY)



PRESENTED BY MR. LODGE
APRIL 18, 1920.—Ordered to be printed

WASHINGTON
GOVERNMENT PRINTING OFFICE
1920

Ս Ե Լ Կ Ա Մ

ԻՐԱՎԻՃԱԿԸ ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Ամերիկյան զինվորական առաքելության զեկույցը

Նախարանը՝
զեներալ-մայոր Ջեյմս Գ. Հարբորդի
Միացյալ Նահանգների բանակ

ՆԵՐԿԱՅԱՅՎԱԾ Է ՊՐՆ. ԼՈՂՋԻ ԿՈՂՄԻՑ
13 ապրիլի, 1920 – հաստատված է
տպագրության

ՎԱՇԻՆԳՏՈՆ
ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
1920

Նախաբանը՝
գեներալ-մայոր Ջեյմս Գ. Հարբորդի
Միացյալ Նահանգների բանակ
ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է ՊՐՆ. ԼՈՂՋԻ ԿՈՂՄԻՑ
13 ապրիլի, 1920 – հաստատված է տպագրության
ՎԱՇԻՆԳՏՈՆ
ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
1920

ԱՌԱՋԱԲԱՆ*

Առաջին համաշխարհային պատերազմը մարդկային քաղաքակրթության աղետալի իրադարձություններից մեկն էր: Պատերազմի ավարտական և վճռական փուլը նշանավորվել է ռազմական գործողություններին Դաշնակից երկրների (Անտանտ. բացառությամբ Ռուսաստանի, որը 1917 թ. միակողմանի դուրս էր եկել պատերազմից) կողմից Միացյալ Նահանգների մասնակցությամբ: Ռազմական գործողությունների կազմակերպման մեջ աչքի են ընկնում էքսպեդիցիոն ուժերի հրամանատար գեներալ Ջեյմս Պերշինգը և նրա վստահված զինվորականներից գեներալ Ջեյմս Գուտֆրիդ Հարբորդը:

Պատերազմի ավարտից հետո նրա ղեկավարությամբ 1919 թ. օգոստոսին նախագահ Վուդրո Վիլսոնը առաքելություն է ուղարկում Մերձավոր Արևելք: ԱՄՆ-ին անհրաժեշտ էր հետազոտել Բալֆորի Հռչակագրի իրականացման նախադրյալները:

Միաժամանակ առաքելության հիմնական խնդիրը Հայաստանի մանդատի ուսումնասիրումն էր: Առաքելությունն ուներ ավելի քան 50 ներկայացուցիչ: Միսիան ուսումնասիրելու էր տարածաշրջանը քաղաքական, ռազմական, աշխարհագրական, վարչական, տնտեսական ու այլ տեսանկյուններից:

Առաքելությունը այցելում է Թուրքիա, Արևմտյան Հայաստան, Հայաստանի Հանրապետություն, Թիֆլիս, Բաքու: Առաքելությունը ԱՄՆ-ի նախագահին և Կոնգրեսին է ներկայացրել համապատասխան զեկուցագիր, որն առ այսօր հայերենով ներկայացված չէ հայ ընթերցողին, որն էլ հանդիսացել է մեր նպատակը:

* Միաժամանակ հայտնում ենք, որ 66-րդ կոնգրեսի 2-րդ նստաշրջանի Հարբորդի ներկայացրած զեկույցի հավելվածն է, իսկ առաքելության կատարած աշխատանքները ամփոփված են մյուս հավելվածներում, որի ցանկը ներկայացվում է: Մինևույն դեպքում սենատին ներկայացրած այս զեկույցը ամփոփիչ տեղեկություններ է պարունակում առաքելության կատարած ողջ գործունեության մասին:

- Կազմողներ՝ **Ա. Հ. Միմոնյան, Ա. Ա. Ղարիբյան**
- Գլխավոր խմբագիր՝ **Ա. Հ. Միմոնյան**
- Թարգմանիչներ՝ **Մ. Վրացյան,
Ա. Բագրատունյան,
Գ. Իշխանյան
Դ. Հարությունյան
Ա. Միմոնյան**

Դ 392 ԴԵՊՐ ԶԱՅԱՍՏԱՆ. Ամերիկյան զինվորական առաքելության զեկույցը.- Եր.: ԵՊՀ հրատ., 2014.- 160 էջ:

Սույն աշխատասիրությունը ներկայացնում է ամերիկյան առաքելության ուղևորության նկարագրությունը Թուրքիա, Արևմտյան Հայաստան և Այսրկովկաս: Տրված է առաքելության ղեկավար գեներալ-մայոր Ջեյմս Հարբորդի Ամերիկյան առաքելության նկարագրությունը:

Սույն հավելվածի թարգմանությունը արժեքավոր նյութեր է պարունակում բացահայտելու նոր շերտեր հայ ժողովրդի նկատմամբ թուրքական ցեղասպան քաղաքականությունից, ինչպես նաև պարունակում է XX դարում հայ ժողովրդի կենսագործունեության տարբեր ոլորտներին վերաբերող տեղեկություններ:

Նախատեսված է ընթերցող լայն շրջանակների համար:

Ջեկույցը առաջ է քաշում ԱՄՆ-ի կողմից Հայաստանի, Անդրկովկասի, ինչպես նաև Թուրքական պետության մանդատի ստանձնումը:

Մանդատային քաղաքականության հիմքում իհարկե ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական շահերն էին ընկած: Միննույն ժամանակ, Հարբորդը մատնանշում է այն մեծ հումանիստական առաքելությունը, որը դրսևորում է ԱՄՆ-ը, կոչված լինելով խաղաղության ապահովման: Միաժամանակ զեկույցում կատարվում է եզրակացություն, ըստ որի Ամերիկյան հայերի միակ հույսն է, քանզի նրա կողմից վերահսկողության հաստատումը կդադարեցնի հայերի և մյուս քրիստոնյաների հետագա զանգվածային ջարդերը: Այս մասին իր մտահոգությունն անձամբ է արտահայտում Հարբորդը Մուստաֆա Քեմալի հռչակագրին:


Առաքելությունը կատարելով տարածաշրջանի համակողմանի ուսումնասիրություն, փաստեց, որ առանց 59.000-ոց, հարկ եղած դեպքում 200.000 զինուժի հնարավոր չէ իրականացնել մանդատային տարածքի (տվյալ դեպքում Հայաստանի՝ Ա. Ղ.) պաշտպանությունը: Միաժամանակ անհրաժեշտ է փաստել, որ առաքելության ուսումնասիրությունները և մասնավորապես զեկույցը, արժանավոր փաստական նյութով հազեցած հավաստագիր է թուրքական իշխանությունների ողջ պետության տարածքում և մասնավորապես Արևմտյան Հայաստանում հայերի մասսայական կոտորածների և բռնագաղթի:

Ջեկույցի քննարկումները և 1920 թ. մայիսին կոնգրեսում մանդատի քվեարկությունը մերժեցին նախագահ Վուդրո Վիլսոնի առաջարկը:

Այդ զարգացումը իհարկե հետևանք էր նաև Անդրկովկասում Խորհրդային Ռուսաստանի դիրքերի ուժեղացման, Խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի մերձեցումը, հակասությունների սրումը նախկին դաշնակիցների միջև, որոնք էլ ազդեցին մանդատի իրականացման քաղաքականության վրա:

Այս ամենը չէն խամրեցնում զեներալ Ջեյմս Հարբորդի և նրա մարդասիրական առաքելության կատարած աշխատանքը: Միաժամանակ ընթերցողի դատին են ներկայացվում թեմային առնչվող տարաբնույթ հետաքրքիր այլ նյութեր:

ՎՈՒԴՐՈ ՎԻԼՍՈՆ



Քաղաքական և պետական գործիչ Վուդրո Վիլսոնը ԱՄՆ-ի 28-րդ նախագահն է (1913-21 թթ.), Խաղաղության նոբելյան մրցանակի դափնեկիր (1919 թ.): Հայկական հարցի հայանպաստ լուծման և անկախ հայկական պետության ստեղծման կողմնակից էր:

Վուդրո Վիլսոնը 1879 թ. ավարտել է Փրինսթոնի համալսարանը, 1886 թ. ստացել է փիլիսոփայության դոկտորի աստիճան: 1890-1902 թթ. Փրինսթոնի

համալսարանի իրավունքի պրոֆեսոր էր, 1902-10 թթ.՝ ռեկտոր, 1910-12 թթ.՝ Նյու Ջերսի նահանգի նահանգապետ: 1913 թ. Վիլսոնն ընտրվել է ԱՄՆ-ի նախագահ՝ դեմոկրատական կուսակցությունից: Նախագահության առաջին տարիներին նպաստել է մի շարք օրենքների ընդունմանը և վաստակել «առաջադեմ բարենորոգչի» անուն:

1917-ից Վիլսոնի օրոք ԱՄՆ-ը մասնակցել է Առաջին աշխարհամարտին (1914-18 թթ.)՝ Անտանտի կողմից:

1918 թ. հունվարին Վիլսոնն առաջադրել է խաղաղության ծրագիր («14 կետով»)՝ ԱՄՆ-ի դերը միջազգային հարաբերություններում բարձրացնելու նպատակով: Նա գլխավորել է ԱՄՆ-ի պատվիրակությունը 1919-20 թթ. Փարիզի հաշտության խորհրդաժողովում, որի արդյունքները, սակայն, աննպաստ

եղան նրա վարչակազմի և ԱՄՆ-ի համար. չհաջողվեց սասանել Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի առաջատար դիրքերը եվրոպական քաղաքականության մեջ:

Վիլսոնը Հայկական հարցի դրական լուծման կողմնակից էր, որն արտահայտվել է Հայաստանի մանդատը (հովանավորություն) 1920 թ. ստանձնելու նրա պատրաստակամությամբ: Դեռևս 1919-ի կեսերին նա Հայաստան է ուղարկել պատվիրակություն՝ գեներալ Ջեյմս Հարբորդի գլխավորությամբ՝ ծանոթանալու երկրի կացությանը և հստակեցնելու նրա մանդատը ստանձնելու հարցը, իսկ 1920-ի ապրիլին ԱՄՆ-ը փաստացի (դե ֆակտո) ճանաչել է Հայաստանի առաջին հանրապետությունը: Մակայն նույն թվականի հունիսին ԱՄՆ-ի Սենատը մերժել է (52 դեմ, 23 կողմ) Հայաստանի մանդատը:

Ազգերի լիգայի (ստեղծողներից մեկն ինքը Վիլսոնն էր) հանձնարարությամբ նա ստանձնել է հայ-թուրքական սահմանի որոշումը 1920 թ. Սևրի հաշտության պայմանագրով: Դա հայտնի է «Վիլսոնի իրավարար պայմանակարգ» անվամբ, որը ներկայացվել է 1920 թ. նոյեմբերի 22-ին: Այս պայմանակարգի համաձայն՝ Արևմտյան Հայաստանի տարածքը կազմելու էր 90 հզ. կմ²:

Մակայն հակասությունների սրումը ԱՄՆ-ի և եվրոպական տերությունների (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա և այլն) միջև, ինչպես նաև նորաստեղծ Խորհրդային Ռուսաստանի մերձեցումը քեմալական Թուրքիայի հետ և բացասական վերաբերմունքը Հայաստանի Հանրապետության նկատմամբ, ձախողել են ինչպես Հայաստանի մանդատի ընդունումը ԱՄՆ-ի Սենատում, այնպես էլ Սևրի պայմանագրի իրագործումը:

Նախագահության ժամկետն ավարտվելուց հետո Վիլսոնը հեռացել է քաղաքական գործունեությունից:

ՋԵՅՄՍ ԳԱԹՐԻ ՀԱՐԲՈՐԴ



Գեներալ Ջեյմս Գաթրի Հարբորդը ծնվել է 1866 թ. մարտի 21-ին, Իլինոյս նահանգի Բլումինգթոն քաղաքում: Կանգաացի Հարբորդը աչքի ընկնող զինվոր է եղել Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում: Ծնվելով Իլինոյսում՝ մեծացել է Բուշնոգին մերձակա Լայրն բնակավայրում և 1886-ին ավարտել Կանգասի նահանգային գյուղատնտեսական քոլեջը: Կարճատև ուսուցչական գործունեությունից հետո կամավոր զինվորագրվել է բանակում՝ որպես շարքային և 1891-ին ստացել սպայի կոչում:

Արտասահմանում Հարբորդի զինվորական առաջին փորձն Իսպանա-ամերիկյան պատերազմից հետո օկուպացիոն բանակի անդամությունն էր Կուբայում: Սրան հաջորդում են ծառայության 12 տարիները Ֆիլիպիններում: 1916-ին նա գեներալ Ջոն Ջ. Փերշինգի հետ մեքսիկական սահմանին էր և երբ Միացյալ Նահանգները ներգրավվեց Եվրոպական կոնֆլիկտի մեջ, նա ուղևորվեց Ֆրանսիա՝ որպես Փերշինգի շտաբի պետ և ստացավ բրիգադային գեներալի կոչում:

Երբ Ֆրանսիայում ամերիկյան ռազմածովային հրամանատարը հիվանդացավ, Հարբորդը փոխարինեց վերջինիս՝ ծովային գործողություններն ուղղորդելով դեպի Շատո-Թիերի և Բելու

Վուդ: Այս ռազմածովային գործողությունները 1918-ի հունիսին կոտրեցին դեպի Փարիզ միտվող գերմանական պաշտպանությունը:

1918-ի օգոստոսին ջոկատներում առավել արդյունավետ գործողությունների անհրաժեշտությունն ստիպեց նորից Հարբորդին կանչել ռազմաճակատից և համարել զինվորական ծառայությունը: Սա պատմության մեջ արձանագրվել է՝ որպես խոշորագույն գործողություն, որ երբևէ իրականացվել է մեկ մարդու կողմից: Հարբորդն իր այս հաջողության համար արժանացավ 'Դաշինքի' խորին երախտագիտությանը և «Անգնահատելի ծառայության համար» շքանշանի¹:

Պատերազմի ավարտին նա արժանացավ կանոնավոր բանակի գեներալ-մայորի կոչման և հրամանատարության անցավ Քամփ Թրավիսում ու Տեխասում: Երբ Փերշինգը Գլխավոր շտաբի պետ նշանակվեց, Հարբորդը դարձավ նրա տեղակալը:

1922-ին Ջեյմս Գ. Հարբորդը զինվորական ծառայությունից անցավ թոշակի և ստանձնեց Ամերիկայի ռադիոկոորպորացիայի նախագահության պաշտոնը: Այստեղ նա աշխատեց 7 տարի, ապա՝ մինչև 1947 թ.՝ իր մահվան տարին, որպես տնօրենների խորհրդի կառավարման նախագահ²:

Գեներալ Հարբորդը մշտապես սերտ կապի մեջ է եղել Կանգասի և իր հարազատ քույրչի հետ: Բազմիցս եղել է Սանհեթենում, հանդես եկել հանդիսավոր ճառերով և արժանացել Կան-

գասի նահանգի գիտնականի պատվավոր աստիճանի: Մինչև մահ միշտ ակտիվություն դրսևորելով և՛ գործարար, և՛ քաղաքական շրջանակներում, այնուամենայնիվ լավագույնս հիշվել է Առաջին աշխարհամարտում ամերիկյան էքսպեդիցիոն ուժերում իր մատուցած անգնահատելի ծառայությամբ:

¹ **Դաշինք** - դաշնակից տերություններ, Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հակազերմանական բլոկի անդամ-պետությունները՝ Ֆրանսիան, Ռուսաստանը և Մեծ Բրիտանիան: (Մ. Թ.)

² **"Distinguished Service Medal"** - «Անգնահատելի ծառայության համար» շքանշան: ԱՄՆ բարձրագույն զինվորական պարգևը ոչ ռազմական գործողությունների համար: Օրինակելի ծառայության համար և՛ պատերազմական, և՛ խաղաղ պայմաններում այս շքանշանին արժանանում են ԱՄՆ բանակի բոլոր զորքերի զինծառայողները: Պատերազմական դրության դեպքում այս շքանշանը կարող է շնորհվել նաև օտարազգիներին: (Մ. Թ.)

³ **Տնօրենների խորհրդի նախագահ** - Ամերիկայում ընկերությունում/կազմակերպությունում սա համարվում է ամենաբարձր պաշտոնը: (Մ. Թ.)

ԱՄՆ-Ի ՆԱԽԱԳԱՀԻ ՆԱՄԱԿԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ

1919 թ. մայիսի 13-ին, Փարիզ

Սիրելի պարոն,

Ինչպես բոլոր սիրտ ունեցող մարդիկ, այնպես էլ ես մեծ վշտով իմացա հայ ժողովրդի կրած տառապանքները և կարող եմ Ձեզ վստահեցնել, որ եթե որևէ գործնական միջոց ներկայանա նրանց օգնության հասնելու համար, ես շատ ուրախ կլինեի անմիջապես այն գործադրել:

Այդ ողբերգական դրությունը առավել ևս լրջանում է նրանով, որ կարծես գոյություն ունեցող բոլոր միջոցները արդեն գործադրված են, որպեսզի հայերի տանջանքներին վերջ դրվի: Ամբողջ աշխարհը համակրանքով է վերաբերվում հայերի նկատմամբ:

Ես կարող եմ միայն հուսալ, որ այժմ հաշտության հարցը արագացվում է և արդեն որոշ միջոցներ ձեռք են առնված, որոնց վրա կարելի է հիմնվել և հարմար առիթը ներկայանալուն պես այն գործադրել Հայաստանի ժողովրդի դրությունը բարելավելու և նրա ապահովությունը երաշխավորելու համար:

Խորապես հուզված եմ, որ ստիպված Ձեզ այսպիսի պատասխան եմ տալիս՝ Ձեր մայիսի 10-ի գրած նամակին:

Մրտահեղ և անկեղծությամբ
Վ. Վիլսոն (ստորագրություն)

THE LETTER OF THE PRESIDENT
OF THE UNITED STATES TO THE PRESIDENT
OF THE DELEGATION OF ARMENIA

1919 year, March 13th, Paris.

Dear Sir.

Like all people with heart I also knew about the sufferings beared by Armenian Nation with great sorrow, and I can make you sure to help them, I would be glad to apply it immediately.

This tragic situation is becoming more serious as it seems that all the existing means for putting the full stop to the sufferings of Armenian people have already been used.

The whole world has sympathy towards Armenians.

I can only hope that now the question of reconciliation is being accelerated and already some means have been undertaken on which we can rely and in a suitable case use these means to improve the situation of Armenian nation and ensure its safety.

I am deeply excited that I have to give you such answer to the letter wtitten by you on May 10.

Heartily and sincerely
W. Wilson

**ԻՐԱՎԻՃԱԿԸ ՄԵՐՉԱՎՈՐ
ԱՐԵՎԵԼՔՈՒՄ**

**Ամերիկյան զինվորական
առաքելությունը դեպի Հայաստան**

*Միացյալ Նահանգների Մարթա
Վաշինգտոն ռազմանավ,
16 հոկտեմբերի, 1919*

**Գեներալ-մայոր
Ջեյմս Գ. Հարբորդից
(Միացյալ Նահանգների բանակ)**

Նահանգային քարտուղարին

*Թեմա. Դեպի Հայաստան
Ամերիկյան զինվորական առաքե-
լության զեկույցը*

Ներքոստորագրյալները հաստատում են Ամերիկյան զինվորական առաքելության զեկույցը: Նախագահի հովանավորությամբ ստեղծված առաքելության կազմում ընդգրկված են.

Գեն.-մայոր Ջեյմս Գ. Հարբորդը,
Միացյալ Նահանգների բանակ,
Բրիգադային գեներալ Ֆրանկ Ռ.
Մըքքոյ, Միացյալ Նահանգների
բանակ,
Բրիգադային գեներալ Ջորջ Վան
Հորն Մուզլի, Միացյալ Նահանգ-
ների բանակ,

**CONDITIONS IN THE
NEAR EAST**

**AMERICAN MILITARY
MISSION TO ARMENIA**

*On Board U. S. S. Martha
Washington, October 16,
1919*

**From: Maj. Gen. James G.
Harbord, United States
Army.**

To: The Secretary of State.

**Subject: Report of the
American Military Mission
to Armenia.**

The undersigned submits herewith the report of the American Military Mission to Armenia. The mission, organized under authority of the President, consisted of Maj. Gen. James G. Harbord, United States Army; Brig. Gen. Frank R. McCoy, United States Army; Brig. Gen. George Van Horn Moseley, United States Army; Col. Henry Beeuwkes, Medical Corps, United States Army; Lieut. Col. John

Հենրի Բյուքս, Բժշկական ջոկատ,
 Միացյալ Նահանգների բանակ,
 Լեյտենանտ-գնդապետ Ջոն Փրայս
 Ջեքսոն, ինժեներ, Միացյալ Նա-
 հանգների բանակ,
 Լեյտենանտ-գնդապետ Ջեպիեր Յ.
 Բրինթոն, դատապաշտպան,
 Միացյալ Նահանգների բանակ,
 Լեյտենանտ-գնդապետ Էդվարդ
 Բոուդիչ, Միացյալ Նահանգների
 բանակի հետևազոր,
 Հրամանատար Ու. Ու. Բերթոլֆ,
 Միացյալ Նահանգների նավա-
 տորմ,
 Մայոր Լոուրենս Մարտին, Միաց-
 յալ Նահանգների բանակ, Գլխա-
 վոր շտաբ,
 Մայոր Հարոլդ Քլարք, Միացյալ
 նահանգների բանակի հետևազոր,
 Կապիտան Սթենլի Կ. Հորնբեք,
 Միացյալ Նահանգների բանակ,
 հրանոթային բաժանմունք (Հեռա-
 վորարևելյան դիվիզիայի, Խաղաղ
 բանակցությունների Ամերիկյան
 կոմիտեի ղեկավար),
 Պրն. Ուիլյամ Բ. Փոլանդ, Բելգիայի
 և Հյուսիսային Ֆրանսիայի Ամե-
 րիկյան օգնության բարեգործա-
 կան կոմիտեի ղեկավար,
 Պրոֆեսոր Ու. Ու. Քամբերլենդ,
 Խաղաղ բանակցությունների Ա-
 մերիկյան կոմիտեի տնտեսական
 խորհրդատու,
 Պրն. Էլիոթ Գրինել Միլլըս, առևտ-
 րային հանձնակատար, Առևտրի
 բաժանմունք,

Price Jackson, United States
 Engineers; Lieut. Col. Jas-
 per Y. Brinton, judge advo-
 cate, United States Army;
 Lieut. Col. Edward Bow-
 ditch, jr., Infantry, United
 States Army; Commander
 W. W. Bertholf, United Sta-
 tes Navy; Maj. Lawrence
 Martin, General Staff, Uni-
 ted States Army; Maj. Ha-
 rold Clark, Infantry, United
 States Army; Capt. Stanley
 K. Hornbeck, Ordnance De-
 partment, United States Ar-
 my (chief of Far Eastern
 Division, American Com-
 mission to Negotiate Pea-
 ce); Mr. William B. Poland,
 chief of the American Relief
 Commission for Belgium
 and Northern France; Prof.
 W. W. Cumberland, econo-
 mic advisor to the American
 Commission to Negotiate
 Peace; Mr. Eliot Grinnell
 Mears, trade commissioner,
 Department of Commerce,
 with other —officers, clerks,
 interpreters, etc.

այլ պետական այրեր, հոգևորա-
 կաններ, թարգմանիչներ և այլն:

Առաքելության հրահանգավորումներն էին

Առանց հետաձգման կառավա-
 րական նավով ուղևորվել դեպի Կ.
 Պոլիս, Բաթում, այլ վայրեր Հայաս-
 տանում, Ռուսական Անդրկովկաս
 և Սիրիա, որը ձեզ կթույլատրի ար-
 դեն Ձեզ հետ քննարկված հրա-
 հանգներն իրականացնել: Շատ
 ցանկալի է, որ դուք հետազոտեք և
 զեկուցեք հիշյալ տարածաշրջանի
 քաղաքական, ռազմական, աշխար-
 հագրական, վարչական, տնտեսա-
 կան և այլ հայեցակետերի մասին,
 որոնք կներառեն հնարավոր ամե-
 րիկյան շահերն ու պարտավորու-
 թյունները այդ շրջանում:

Առաքելությունը նավով ուղևոր-
 վեց Կ. Պոլիս: Այնտեղից Բաղդադի
 երկաթուղով շարժվեց Միջերկրա-
 կան ծովի արևելյան ափին հարա-
 կից Ադանա քաղաք. 1909-ի ջարդե-
 րի տեսարան, Կիլիկիա հարուստ
 նահանգի առաջին գլխավոր քա-
 ղաք, որտեղ 2 օր այցելություններ
 իրականացվեցին դեպի Տարսուս,
 Այաս և Մերսին: Այստեղից երկա-
 թուղով շարունակվեց ճանապարհը
 Հալեպով դեպի Մարդին, որտեղից
 էլ մեքենայով (շարժիչային)՝ դեպի
 Դիարբեքիր, Խարբեք, Մալաթիա,
 Սվազ, Երզնկա, Էրզրում, Կարս,

The instructions to the mission were to

Proceed without delay on a
 Government vessel to Con-
 stantinople, Batum, and such
 other places in Armenia,
 Russian Transcaucasia, and
 Syria, as will enable you to
 carry out instructions al-
 ready discussed with you. It
 is desired that you investi-
 gate and report on political,
 military, geographical, ad-
 ministrative, economic, and
 other considerations invol-
 ved in possible American
 interests and responsibilities
 in that region.

The mission proceeded by
 ship to Constantinople.
 From there it traveled by the
 Bagdad Railway to Adana
 near the northeastern coast
 of the Mediterranean Sea;
 the scene of the massacres
 of 1909, and the principal
 city of the rich Province of
 Cilicia, where two days
 were spent visiting Tarsus,
 and the ports of Ayas and
 Mersina; thence continued
 by rail via Aleppo to Mar-
 din; from there by motor car
 to Diarbekir, Kharput,

Երևան և Թիֆլիս: Այնտեղից գնաց-
քով ուղևորվեց դեպի Բաքու և Բա-
թում: Երևանը, Թիֆլիսը և Բաթուն
մայրաքաղաքներն են համապա-
տասխանաբար Հայաստանի, Վրաս-
տանի և Ադրբեջանի հանրապետու-
թյունների, իսկ Բաթումը վրա-
ցական համանուն շրջանում Բրի-
տանական զինվորական հրամա-
նատարության նստավայրն է: Առա-
քելության անդամները կառքով
ճանապարհվեցին Ուլա-Քըշլայից
Սվազ, Սվազից՝ Սամսուն՝ այցե-
լելով Մարզվան, որտեղ այդ ժամա-
նակ հայ բնակչության շրջանում
բավական վախվորածություն կար:
Այնուհետև առաքելությունը Տրա-
պիզոնից շարժվեց դեպի Էրզրում,
ապա ձիերով՝ Խորասանից դեպի
Բայազետ, որից հետո՝ Երևանից
դեպի Նախիջևան՝ Պարսկաստանի
սահմանի մոտ: Ամենայն Հայոց Կա-
թողիկոս Գևորգ V-ի հետ առաքե-
լությունը հանդիպում ունեցավ մ.թ.
301 թ. թվագրվող Հայոց Եկեղեցու
պատմական նստավայր Էջմիածնի
Մայր Տաճարում: Առաքելությունը,
փաստորեն, հասեց Փոքր Ասիան
իր ողջ երկայնքով և Անդրկովկա-
սը՝ հյուսիսից հարավ և արևելքից
արևմուտք: Առաքելությունը այցե-
լություններ կատարեց դեպի Թուր-
քահայաստանի բոլոր վիլայեթներ,
բացի Վանից և Բիթլիսից, ինչն ան-
հնար էր անել սահմանված ժամ-
կետներում: Բայց վերջին երկուսն էլ

Malatia, Sivas, Erzinjan,
Erzerum, Kars, Erivan, and
Tiflis; thence by rail to
Baku and Batum. Erivan,
Tiflis, and Baku are the
capitals, respectively, of the
Republics of Armenia,
Georgia, and Azarbaijan,
and Batum is the seat of the
British military government
of the Georgian district of
that name. Members of the
mission also traveled by
carriage from Ula-Kishla to
Sivas; from Sivas to Sam-
sun; visiting Marsovan whe-
re there is much apprehen-
sion among the Armenian
population at this time; from
Trebizond to Erzerum; by
horseback from Khorasan to
Bayazid; from Erivan to Na-
khichevan, near the Persian
border. The Armenian Ca-
tholicos, His Holiness Ke-
vork V, was visited at Etch-
miadzin the historic seat of
the Armenian Church, with
its ancient cathedral dated
from 301 A. D. The mission
traversed Asia Minor for its
entire length and the Trans-
caucasus from north to
south and east to west. All
of the Vilayets of Turkish
Armenia were visited ex-
cept Van and Bitlis, which
were inaccessible in the

հիանալի կերպով ուսումնասիրվել
են կապիտան Նայլդի կողմից, զին-
վորական սպա, ով օգոստոսին այդ
տարածքներում ձիով շրջելիս լավ
հետազոտել է դրանք: Նրա զեկույցը
հաստատում է նաև հարակից
շրջաններում մեր կատարած ու-
սումնասիրությունների արդյունք-
ները, ինչպես ՀՀ երկու նահանգնե-
րում, այնպես էլ Ադրբեջանի և
Վրաստանի հանրապետություննե-
րում: Թուրքական սահմանը գուգա-
հեռաբար ընթանում է Սև ծովից
Պարսկաստան ձգվող զծի երկայն-
քով: Բաթումից վերադառնալու ճա-
նապարհին առաքելությունն այցե-
լեց Սամսուն՝ աշխարհի մեծագույն
ծխախոտային շրջաններից մեկի
նավահանգիստ, ապա Տրապիզոն՝
Սև ծովի հարավային ափի մյուս
կարևոր նավահանգիստը, Պարս-
կաստան տանող հնագույն քարա-
վանային ճանապարհի վերջին
հանգրվանը: Վերջինս, ի դեպ, մի
վայր է, որը պատմաբանների հե-
տաքրքրության առարկան է՝ որ-
պես մի կետ, որտեղից 10.000 հույ-
ներ 2300 տարի առաջ՝ Քսենոփոնի
ժամանակ, հասան ծովին:

Առաքելությունը Փոքր Ասիայում
և Անդրկովկասում անցկացրեց 30
օր, այս տարածաշրջանում ինքնա-
վար յուրաքանչյուր կառավարու-
թյան մի շարք ներկայացուցիչների,
ինչպես նաև թուրք, հայ, հույն,

time available, but which
have been well covered by
Capt. Niles, an Army officer
who inspected them on hor-
seback in August, and who-
se report corroborates our
observations in the neigh-
boring regions; as well as
both Provinces of the Arme-
nian Republic, and the Re-
publics of Azarbaijan and
Georgia. The Turkish fron-
tier was paralleled from the
Black Sea to Persia. On the
return voyage from Batum
the mission visited Samsun,
the port of one of the
world's great tobacco re-
gions, and Trebizond, the
latter a principal port on the
south shore of the Black
Sea, terminus of the ancient
caravan route to Persia, of
historic interest as the point
where the Greek 10,000
reached the sea under Xeno-
phon over 2,300 years ago.

The mission spent 30 days
in Asia Minor and Tran-
scaucasias, and interviewed
at length representatives of
every Government exerci-
sing sovereignty in that re-
gion, as well as individual

քուրդ, թաթար, վրացի, ռուս, պարսիկ, հրեա, արաբ, բրիտանացի և ֆրանսիացի անհատների հետ զրույցներ ունեցավ՝ ներառյալ նաև այն ամերիկացիները, ովքեր միաժամանակ հանգրվանել էին տվյալ պետությունում: Առաքելությունը նաև մեծ ուշադրություն է դարձրել Ամերիկայի կողմից հովանավորվող կրթական, կրոնական ու բարեգործական տարբեր կազմակերպությունների գործունեությանը: Ի հավելումն անձնական այս կապերի, առաքելությունը մինչ Փարիզից հեռանալը խաղաղություն հաստատելու ուղղությամբ հաճախակի խորհրդակցություններ է ունեցել իր այցելած շրջանների՝ Խաղաղության կոնֆերանսի բազմաթիվ պատվիրակությունների հետ: Սրանից առաջ ունեցել է նաև բազմաթիվ զեկույցներ՝ իրականացված Մերձավոր Արևելքի փոխօգնության Ամերիկյան կոմիտեի, դեպի Անդրկովկաս խաղաղության կոնֆերանսի հրահանգով գործուղված պարոն Բենջամին Բ. Մուրի կողմից, ինչպես նաև բավական համապարփակ գրադարանային նյութ է հավաքագրել տարածաշրջանի վերաբերյալ Կոնգրեսի գրադարանավարի տրամադրած աշխարհագրական, պատմական և կառավարությունների մասին տեղեկությունների հիման վրա: Զեկույցներ են ստացվել նաև

Turks, Armenians, Greeks, Kurds, Tartars, Georgians, Russians, Persians, Jews, Arabs, British, and French, including Americans for some time domiciled in the country. It also gave consideration to the views of the various educational, religious, and charitable organizations supported by America. In addition to this personal contact the mission before leaving Paris was in frequent conference with the various delegations to the peace conference from the regions visited. It has had before it numerous reports of the American Committee for Relief in the Near East, and Food Administration, and that of the mission of Mr. Benjamin B. Moore, sent by the peace conference to Transcaucasia, as well as the very complete library on the region, its geography, history, and governments, loaned by the Librarian of Congress, the American Mission to Negotiate Peace, and others. It has listened to the personal experiences of many witnesses to the atrocities of 1915, and benefited by the views of many persons

Խաղաղ բանակցությունների ամերիկյան առաքելության և այլոց կողմից: Առաքելությունը լսել է 1915-ի ոճրագործությունների բազմաթիվ ականատեսների հիշողություններ, իր զեկույցը կազմելու համար մեծապես ազդվել նաև այցելած տարածաշրջանի տարբեր ժողովուրդների վերաբերյալ բազմաթիվ մարդկանց կարծիքներից, որոնք ձևավորվել են համատեղ ապրած տարիների ընթացքում:

Քաղաքակիրթ աշխարհի հետաքրքրվածությունը, սարսափն ու կարեկցանքն այնպես է կենտրոնացված Հայաստանի վրա, և այս առաքելության նպատակն ու գործունեությունը՝ այնպես միտված դեպի արյունահեղ այդ տարածքի քրիստոնյա բնակչության ողբերգական հատվածը, որ տրամաբանական ենք համարում զեկույցը ներկայացնել հետևյալ ենթաբաժանումներով.

- ա) Հայ ժողովրդի պատմությունն ու ներկա իրավիճակը,
- բ) Քաղաքական դրությունը և վերակառուցման առաջարկները,
- գ) Մանդատում ընդգրկված պայմաններն ու խնդիրները,
- դ) Մանդատի իրագործման կողմ և դեմ տեսակետները:

Համապատասխանաբար ըստ այս ենթակետերի ներկայացված է զեկույցը:

whose knowledge of the various peoples in the regions visited is that obtained by years spent among them.

The interest, the horror, and sympathy of the civilized world are so centered on Armenia, and the purpose and work of this mission so focus on that blood-soaked region and its tragic remnant of a Christian population that this report should seem to fall naturally under the following heads: (a) History and present situation of the Armenian people; (b) the political situation and suggestions for readjustment; (c) the conditions and problems involved in a mandatory; (d) the considerations for and against the undertaking of a mandate. The report is accordingly so presented.

**ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ՌԻ ՆԵՐԿԱ
ՎԻՃԱԿԸ**

Հայերը պատմությանն այս անունով հայտնի են դեռևս մ. թ. V դարից և այդ ժամանակից ի վեր ապրել են այն տարածքում, որտեղ դժբախտությունները նրանց գտան մեր օրերում: Նրանց երկիրը մի հսկայական կոտ բարձրավանդակ է՝ ծովի մակարդակից 3000-8000 ոտնաչափ բարձրությամբ: Դրա բարձրագույն կետը Արարատ լեռն է: Հնագույն ժամանակներում Հայաստանի սահմանները հատել են Միջերկրական, Կասպից և Սև ծովերը: Ավելի ուշ Հայաստանի տարածքը կրճատվել է՝ հասնելով մոտ 140.000 մղոն²(այս տարածքն իր մեծությամբ այնքան է, որքան Մոնտանան)¹: Չունի անկախ պետականություն, բայց 1914-ին գրանցված է իր երկու՝ Կարսն ու Երևանն ընդգրկող արևելյան հատվածով, որը պատկանում է Ռուսաստանին, և

**THE HISTORY AND
PRESENT SITUATION
OF ARMENIAN
PEOPLE**

The Armenians were known to history under that name in the fifth century B. C, and since that period have lived in the region where their misfortunes find them to-day. Their country is the great rough tableland, from 3,000 to 8,000 feet above the level of the sea, of which Mount Ararat is the dominant peak. In ancient times it touched the Mediterranean, Caspian, and Black Seas. In later days it has dwindled to about 140,000 square miles, an area about as large as Montana, without political identity, but existing in 1914 in two parts, the eastern belonging to Russia, which consisted of Kars and Erivan, and some portions of

¹ Մոնտանա - ԱՄՆ-ի հյուսիս-արևմուտքում գտնվող նահանգ, որ պատկանում է Լեռնային նահանգների խմբին (Mountain States): Տարածքը՝ 380.8 հզ կմ², տարածքի մեծությամբ՝ 4-րդը Միացյալ Նահանգներում: (Մ. Թ.)

Ադրբեջանի ներկայիս տարածքում^{*} ներառված որոշ մասերով: Մնացյալ տարածքը Թուրքահայաստանն էր, որն ընդգրկում է Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Դիարբեքիրի, Խարբերդի վիլայեթները և Կիլիկիան, չնայած որ հայերը քիչ թե շատ տարածված են եղել նաև Փոքր Ասիայի և Անդրկովկասի ողջ տարածքով: *Հայ ժողովուրդը դեռևս 1000 տարի առաջ միակ կազմավորված ազգն է եղել Եվրոպայում, բացի հույներից և հռոմեացիներից* (ընդգծումը մերն է՝ Ա. Ղ.): Իր պատմության 25 դարերից ավելի քան 12-ի ընթացքում Հայաստանը վայելել է իր անկախությունը սեփական սահմաններում, որոնք փոփոխվել են ժամանակների փոփոխություններին գուզընթաց: Այս երկրի վերջին արքան՝ Լևոն VI-ը, ով վտարված էր սեփական հայրենիքից, կյանքի վերջին տարիներն անցկացրել է ջանքեր գործադրելով՝ համաձայնության գալ Ֆրանսիայի և Անգլիայի հետ: Մասնակցություն է ունեցել նաև 100-ամյա պատերազմում և, ի վերջո, Բոլոնիային մոտ մի վայրում 1386-ին նախագահել է ընթացող Խաղաղության կոնֆերանսը, որը բերեց դեպի պատերազմի ավարտը տանող համաձայնության: Դեռևս մ.

the present territory of Azarbaijan: the remainder being Turkish Armenia, comprised in the Villayets of Van, Bitlis, Erzerum, Diarbekir, Kharput, and Cilicia, though Armenians were scattered more or less throughout the whole of Transcaucasia and Asia Minor. Armenia was an organized nation 1,000 years before there was one in Europe, except Greece and Rome. For over 12 of the 25 centuries of its history Armenia enjoyed independence within borders that shifted with the events of the times. Its last king, Leon VI, an exile from his own land, spent his last years in the effort to bring about an understanding between France and England, then in the struggle of the Hundred Years War, and actually presided at a peace conference near Boulogne in 1386, which brought about the understanding which led to the end of that war. Armenia was evangelized by Apostles fresh from the memory of our Lord, as early as 33 A. D., and as a

^{*} Պետք է արձանագրել, որ Ամերիկյան բարձրաստիճան հրամանատարությունը ևս ընդունում է այն, որ Ադրբեջան պետությունը ստեղծվել է հայ ժողովրդի ազգային մի շարք տարածքների վրա: (Ա. Ղ.)

թ. 33 թ. ժամանակի առաքյալները Տիրոջ հուշերի մասին պատմություններով շրջել և քրիստոնեություն են քարոզել Հայաստանում: Եվ, որպես քրիստոնեություն ընդունած և մ. թ. 301 թ. իր Ազգային Եկեղեցին հիմնած ազգ, որ հաղթել է դարերի փոթորիկներին, ապրում է և այսօր: Հայ ժողովուրդը պաշտոնապես քրիստոնեությունը պետական կրոն հռչակած առաջին ազգն է (ներառյալ հեթանոս աշխարհի բոլոր ժողովուրդները):

Եկեղեցու հիմնադրմանը հաջորդած առաջին երկու դարերը հայ գրականության Ոսկեդարի ժամանակաշրջանն է եղել. դա է վկայում Հայոց այբուբենի ստեղծումը, Աստվածաշնչի թարգմանությունը մայրենիի, հայերի հոսքը դեպի ժամանակի խոշորագույն կրթօջախներով հայտնի Աթենք, Հռոմ և Ալեքսանդրիա, ճկուն գրական լեզվի զարգացումը, ինչը ժամանակի ազգային կյանքի մեծագույն հարստություններից մեկն էր:

Իր աշխարհագրական դիրքով այն մեծ հարթակ է եղել արևելքից արևմուտք ձգվող Պարսկաստանի, սարակինոսների՝ և բարձրացող իս-

nation adopted Christianity and founded a National Church in 301 A. D., which has outridden the storms of the centuries, and is vital today. Armenia was the first nation to officially adopt Christianity, with all that act involved in a pagan world.

The first two centuries following the foundation of the church were a golden age of Armenian literature, witnessing the invention of an Armenian alphabet; the translation of the Bible into the vernacular; the thronging of Armenians to the great centers of learning at Athens, Rome, and Alexandria; and the development of a flexible literary language, one of the great assets of national life.

By its geographical location on the great highway of invasion from east to west the ambitions of Persia, the Sa-

լամական ալիքի ներխուժումների համար: Խաչակիրները իրենց հերթին Արևելքում գտան քրիստոնեական չափազանց մեծ գոտի՝ Հայաստանը: Պարսիկները, պարթևները, սարակինոսները, թաթարները և թուրքերը հայ եկեղեցու զավակների անհամեմատ մեծ թվով նահատակությունների պատճառ են դարձել, շատ ավելի, քան որևէ այլ ազգ: Հայոց վերջին թագավորությունը տապալվել է Եգիպտոսի սուլթանի կողմից 78 տարի առաջ մինչ 1453 թվականին Մուհամեդ II-ը կգրավեր Կ. Պոլիսը: Այդ ժամանակից մինչ օրս նրանց նահատակության պատմությունը անխախտ է: Հայերը պարսիկների, հռոմեացիների, բյուզանդացիների մեջ բարեկամ են գտնում և նրանց նկատմամբ հալածանքն այդ ընթացքում մասամբ մեղմանում է. այդպիսով հայերին մասնակի ինքնավարություն է տրվում: Անգամ ազնվացեղ սարակինոսների հետ հնարավոր է եղել փոխհամաձայնության գալ: Թուրքերը, ում զոհն են նրանք հիմա, ապստամբ վաչկատուններ էին Կենտրոնական Ասիայից: Նրանց գործողությունների գլխավոր շարժառիթներն են եղել թալանը, սպանությունները և ստրկացումը: Նրանց գործիքներն էին յաթաղանն ու աղեղնալարը: Խաչակիրները վաղուց չկային: Եվրոպան զբաղված էր սեփական Վերածննդով և բավա-

racens and the rising tide of Islam, and the Crusades found Armenia the extreme frontier of Christianity in the East. Persians, Partians, Saracens, Tartars, and Turks have exacted more martyrs from the Armenian church in proportion to its numbers than have been sacrificed by any other race. The last Armenian dynasty was overthrown by the Sultan of Egypt 78 years before the fall of Constantinople to Mahomet II in 1453. From that time until to-day the story of their martyrdom is unbroken. In the Persian, the Roman, the Byzantine, the Armenian found Aryan kinsmen and tyranny was tempered with partial autonomy. Even the Saracen was a high racial type and reciprocal adjustments had been possible. The Turk to whom they now fall prey was a raiding nomad from central Asia. His mainsprings of action were plunder, murder, and enslavement; his methods the scimitar and the bowstring. The Crusades were long ended. Europe busy with her own renaissance contented herself with standing on the

* Սարակինոս - արաբ կամ մահմեդական՝ հատկապես հայտնի որպես ընդվզողներ խաչակիրների դեմ, Սիրիական կամ Արաբական անապատի քոչվոր ելուզակներ Հռոմեական կայսրության օրոք: Ավելի ուշ «սարակինոս» տերմինը վերագրվում էր արդեն ցանկացած արաբի, ապա նաև՝ Օսմանյան Թուրքիայի բնակիչներին: (Օ. Թ.)

րարվեց մահմեդականներից պաշտպանվելով: Այսպիսով, արևելյան քրիստոնյաները մոռացված էին: Ավելի քան 3 դար հայ ժողովուրդն այդ ժամանակների պատմության համար բեկումնային դեր չի խաղացել, չնայած ավելի վաղ շրջանում 16 բյուզանդական կայսրեր հայեր էին և հաջորդաբար իշխել են Արևելյան կայսրությունում: Բազմաթիվ անհատներ կամ նույնիսկ համայնքներ, այսուհանդերձ կարևոր դեր են խաղացել հետավոր երկրներում: Եվրոպան, Հնդկաստանը և Պարսկաստանը սիրով ընդունել են շատ հայերի: Նրանք թարգմանիչներ էին, բանկիրներ, գիտնականներ, արհեստավորներ, դերասաններ և առևտրականներ: Եվ նույնսիկ իրենց բռնատերերի վերահսկողության ներքո զբաղեցրել են պաշտոններ վարչական կարողությունների շնորհիվ, դարձել դեսպաններ ու նախարարներ: Շարունակել են զբաղվել առևտրով, արտադրական շուկայով և նախագծել ու կառուցել են պալատներ: Այս ամենով հանդերձ նրանց որպես ռասա արգելվել է ունենալ զինուժ, ընչազրկության աստիճանի հարկահան են եղել, ըստ քմահաճույքի առգրավվել է նրանց սեփականությունը և նրանց կանայք բռնի տարվել են զավթիչների հարեմներ: Այսպիսի ստրկացումը իր անխուսափելի ու անցանկալի հետքն է թողել նրանց

defensive against the Moslem, and the eastern Christian was forgotten. For more than three centuries the Armenian people figure little in the history of the times, though at an earlier period 16 Byzantine Emperors were of that race, and ruled the eastern Empire with distinction. Many individuals, and even colonies, however, played a part in distant lands. Europe, India, and Persia welcomed them. They were translators, bankers, scholars, artisans, artists, and traders, and even under their tyrannical masters filled posts which called for administrative ability, became ambassadors and ministers, and more than once saved a tottering throne. They carried on trades, conducted commerce, and designed and constructed palaces. Nevertheless as a race they were forbidden military service, taxed to poverty, their property confiscated at pleasure, and their women forced into the harems of the conqueror. Such slavery leaves some inevitable and unlovable traces upon the character, but in the main the Armenian preserved his

խառնվածքում: Չնայած այս ամենին հայերը պահպանել են իրենց կրոնը, լեզուն, ռասայական մաքրությունը և միշտ հետամուտ են եղել ազգային միասնության:

Ժամանակի, խառնվածքի և տաղանդի շնորհիվ աստիճանաբար Օսմանյան կայսրության արդյունաբերության, ֆինանսների, առևտրի մտավոր ու վարչական աշխատանքների մեծ մասը անցավ հայերի ձեռքը:

19-րդ դարի սկզբին Եվրոպայում զարգացող իրադարձությունները նոր հետաքրքրություն առաջացրին մոռացված Մերձավոր Արևելքի նկատմամբ: 1744 թ. Կայնարջեի պայմանագրում տեղ գտավ Կայսերական Ռուսաստանը՝ որպես Մերձավոր Արևելքի քրիստոնյաների պաշտպան. մի հանգամանք, որ ժամանակակից պաշտոնյաներին բազմիցս կասկածի տեղիք է տալիս: Բայց ինչ էլ լինեն Կայսերական Ռուսաստանի շարժառիթները, այնուամենայնիվ դա Եվրոպական որևէ ազգի կողմից օգնության ձեռք մեկնելու միակ իրավական փորձն է եղել՝ ի պաշտպանություն անօգնական Հայաստանի: Ռուսահայաստանում հանրաքվեն, եթե արդարությամբ իրականացվեր, հավանաբար այս տարածաշրջանում Ռուսաստանի մանդատի վերստեղծման օգտին կքվեարկեր:

religion, his language, and his racial purity, persecution bringing cohesion.

Time, temperament and talent eventually brought most of the industry, finance, commerce, and much of the intellectual and administrative work of the Ottoman Empire into Armenian hands.

The progress of events in Europe brought about in the early nineteenth century a revival of interest in the forgotten Near East. As early as 1744 the treaty of Kainardje had placed Imperial Russia, in the role of a protector of the Christians of the Near East, an attitude many times under suspicion by contemporary statesmen, but whatever its motives, the only genuine attempt by any European nation to afford such protection to helpless Armenia. A plebiscite in Russian Armenia, if fairly held, would probably vote a reconstituted Russia into a mandatory for that region.

Հայերի առևտրային, վարչական և ուրիշների անունից կառավարելու ունակության գիտակցմամբ՝ 19-րդ դարի վերջին քառորդին հնարավորություն տրվեց նրանց իրենց հաշվին հավասարակշռել կշեռքի նժարները՝ բարեփոխելով Թուրքիան ներսից: Եվ սա այն ժամանակ, երբ Թուրքիայի մասնատվածությունը հավասարակշռված էր ընդդեմ իր տարածքները ետ գրավելու հնարավորության: 1876 թ. բարեփոխիչ Միդհաթ փաշայի քարտուղար հայազգի Գրիգոր Օսյանի կողմից կազմվում է Թուրքիայի սահմանադրությունը, հռչակվում և գրեթե անմիջապես չեղյալ է հայտարարվում Սուլթան Աբդուլ Համիդի կողմից:

Վերոնշյալը անբավարար կերպով է ուրվագծում Հայաստանի սխալների պատմությունը, որը նրան բերել է մինչև մեր ժամանակները: 1876-ից դա ջարդերի ու չիրագործված երաշխիքների պատմությունն է:

Ռուս-թուրքական պատերազմն ավարտվեց 1877 թ. Սան Ստեֆանոյի պայմանագրով: Դրանով Ռուսաստանը որոշակի շրջաններ էր գրավում, մինչ Թուրքիայում փաստացի բարեփոխումներ կիրականացվեին: Հաջորդ տարի այս պայմանագիրը Ռուսաստանի հանդեպ

With Armenian consciousness of their own capacity to trade, to administer, and to govern in the name of others, there came in the last quarter of the nineteenth century the opportunity to throw their weight into the scale for the reform of Turkey from within, at a time when the dismemberment of Turkey was balanced in European politics against the possibility of her self-redemption. In 1876 a constitution for Turkey was drawn up by the Armenian Krikor Odian, secretary to Midhat Pasha the reformer, and was proclaimed and almost immediately revoked by Sultan Abdul Hamid.

The foregoing inadequately sketches the story of the wrongs of Armenia down to our own times. From 1876 it is a story of massacre and of broken and violated guarantees.

The Russo-Turkish War ended in 1877 by the treaty of San Stefano, under which Russia was to occupy certain regions until actual reforms had taken place in Turkey. This treaty, through British jealousy of Russia, was torn up the following

բրիտանական անբարեհաճ վերաբերմունքի պատճառով լուծվում է և փոխվում Բեռլինի անպտուղ պայմանագրի, որով հայցվում էր պաշտպանություն, սակայն առանց երաշխիքների: Միևնույն ժամանակ այստեղ ստորագրվել էր Կիպրոսի համաձայնագիրը, որով հիշյալ կղզին՝ անցավ Մեծ Բրիտանիային, և Թուրքիայի հովանավորությունը խոստացված էր հայերին՝ ի պատասխան Մեծ Բրիտանիայի Թուրքիայի հետ համաձայնության՝ հանդես գալ Ռուսաստանի դեմ: 1880 թ. գերտերությունների կողմից ներկայացված համատեղ փաստաթուղթը մերժվում է Թուրքիայի կողմից: Սրան հաջորդում է 1895 թ. համաձայնագիրը, որն այդպես էլ կյանքի չկոչվեց, ինչպես և 1876 թ. Սահմանադրությունը՝ 1908 թվականին: Հետագա համաձայնագիրը 1914 թ. չեղյալ է հայտարարվում՝ Թուրքիայի պատերազմի մեջ մտնելով: Համաձայնագրերի վերջին շարքը 1916 թ. Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև կնքված գաղտնի պայմանագիրն էր, որի ստեղծումը ու հրապարակումը ընկնում է բուլղարիայի իշխանության ուսերին, որով էլ Հայաստանը պետք է բաժանվեր Ռուսաստանի և

year and the futile treaty of Berlin substituted, asking protection but without guaranties. Meantime there had been the convention of Cyprus, by which that island passed to Great Britain, and the protection of Turkey was promised for the Armenians in return for Great Britain's agreement to come to the aid of Turkey against Russia. A collective note of the powers in 1880 was ignored by Turkey. Then followed the agreement of 1895, which was never carried out, and the restoration of the constitution of 1876 in 1908. A further agreement in 1914 was abrogated at the entrance of Turkey in the war – and the last of the series is a secret treaty of 1916 between Great Britain, France and Russia, the existence and publication of which rests on Bolshevik authority, by which Armenia was to be divided between Russia and France. Meanwhile there have been organized official massacres of the Armenians ordered every few years since Abdul

* Խոսքը Կիպրոս կղզու մասին է, որը Թուրքիան, կոնֆերանսում Ռուսաստանի վրա ճնշում գործադրելու դիմաց, գաղտնի համաձայնագրով զիջեց Մեծ Բրիտանիային: (Ա. Ղ.)

Ֆրանսիայի միջև: *Այս ընթացքում է, որ Արդուլ Համիդի գահ բարձրանալուց ի վեր, յուրաքանչյուր մի քանի տարին մեկ հայ բնակչության շրջանում իրականացվում են պետական մակարդակով կազմակերպված զանգվածային ջարդեր (ընդգծումը - Ա. Ղ.):* 1895 թ. 100 հազար զոհ է գրանցվում: 1908 թ. Վանում, 1909 թ. Ադանայում և Կիլիկիայի բազմաթիվ բնակավայրերում ավելի քան 30 հազար մարդ է սպանվում: Վերջինը և ամենազանգվածայինն այս ողբերգություններից տեղի ունեցավ 1915 թվականին: *Բավական համեստ գնահատումներով հայերի թիվը Ասիական Թուրքիայում 1914 թ. 1.500.000-ից ավելի էր, որոշ գնահատումներով ավելի շատ էր, 1915-ի գարնանը ջարդերն ու տեղահանումները կազմակերպվում էին բնակավայրից բնակավայր շրջող զինվորների կողմից իրագործվող կանխամտածված հստակ ծրագրով: Թուրքական կառավարության պաշտոնական փաստաթղթերի համաձայն տեղահանվել է 1,100,000 հայ (ընդգծումը - Ա. Ղ.):* Երիտասարդ տղամարդիկ սկզբում կանչվում էին յուրաքանչյուր գյուղի կառավարական շենք, որտեղից նրանց անմիջապես տանում էին և սպանում: Մի քանի օր անց կանայք, ծերերն ու երեխաները քշվում էին, ինչպես Թալեաթ փաշան էր անվանում, «գյուղատնտեսական գաղութներ»,

(Hamid ascended the throne. In 1895, 100,000 perished. At Van in 1908, and at Adana and elsewhere in Cilicia in 1909, over 30,000 were murdered. The last and greatest of these tragedies was in 1915. Conservative estimates place the number of Armenians in Asiatic Turkey in 1914 over 1,500,000, though some make it higher. Massacres and deportations were organized in the spring of 1915 under definite system, the soldiers going from town to town. The official reports of the Turkish Government show 1,100,000 as having been deported. Young men were first summoned to the government building in each village and then marched out and killed. The women, the old men, and children were, after a few days, deported to what Talaat Pasha called "agricultural colonies", from the high, cool, breeze-swept plateau of Armenia to the malarial flats of the Euphrates and the burning sands of Syria and Arabia. The dead from this wholesale attempt on the race are variously estimated from 500,000 to more than a million, the usual figure being about 800,000.

հայոց բարձր, մեղմ զեփյուռի լեռնադաշտից դեպի Եփրատի մալարիայով վարակված տափաստաններ և Սիրիայի ու Արաբիայի այրող ավազուտներ: Ազգի բնաջնջման այսպիսի մեծածավալ փորձը տարբեր հաշվարկներով գնահատվել է 500.000-ից մինչև ավելի քան մեկ միլիոն: Ջոհերի ընդհանուր թիվը մոտ 800.000 է:

Նրանց ոտքով քշում են կիզիչ արևի տակ, խլում հագուստը և այն քիչ իրերը, որ ունեին, սվինահարում էին, եթե հանկարծ հետ էին մնում: Սովամահությունը, տիֆն ու դիզենտերիան հազարավոր դիակներ են թողել այդ ճանապարհներին: Նրանց սննդակարգն էր մեկ ֆունտ՝ հաց օրումեջ, այն դեպքում, երբ շատերը դա էլ չէին ստանում, և հետո իրենց հետ տված զանգվածի օրական չափաբաժինը նրանց մեկնած ձեռքերում միակ ուտելիքն էր: Շատերը մեռնում էին ծարավից կամ սպանվում էին ճանապարհին հանդիպած գետակներում ծարավը հագեցնելու փորձերի համար: Մեծ թվով հայերի սպանել են վայրենի քրդերը, ումից պաշտպանելու ոչ մի փորձ թուրք զինվորները չեն կատարել: 9 կամ 10 տարեկան հայ

Driven on foot under a fierce summer sun, robbed of their clothing and such petty articles as they carried, prodded by bayonet if they lagged; starvation, typhus, and dysentery left thousands dead by the trail side. The ration was a pound of bread every alternate day, which many did not receive, and later a small daily sprinkling of meal on the palm of the outstretched hand was the only food. Many perished from thirst or were killed as they attempted to slake thirst at the crossing of running streams. Numbers were murdered by savage Kurds, against whom the Turkish soldiery afforded no protection. Little girls of 9 or 10

* Ֆունտ - Նախկինում ոսկի, արծաթ և այլ մետաղներ կշռելու համար կիրառվող չափման միավոր, համապատասխանում է 373,2 գ-ի: Ներկայումս անգլախոս երկրներում գործածվող քաշի չափման միավոր է: 1 ֆունտ = 453,6 գ: (Մ. Թ.)

աղջիկներին վաճառում էին քուրդ ավազակներին մի քանի դահեկանով, իսկ կանայք անխտիր ու անխնա բռնաբարվում էին: Սվազի մանկավարժական քոլեջի ուսուցիչներից մեկի ազգականուհու հետ տեղի ունեցած մի դեպք. մի քնքուշ ազնվական հայուհու, որ տիրապետել է անգլերենին, երաժշտության գիտակ է եղել, անչափ հմայիչ բոլոր երկրների գեղեցկության չափանիշներով, բռնի կնության են տալիս հարևան քրդական գյուղի մի բեյի՝ մի ստորի, տարիքով 3 անգամ մեծ աղջկանից, ով ստիպված ապրում է սրա հետ և մի երեխա ունի: 150 «հայ հարսնացուներ» շատերը դեռատի, որոնք ապրել էին մահմեդական հարեմներում ու տներում, բայց կարողացել էին փրկվել, ապաստան գտան Ամերիկյան օգնության ֆոնդի ներքո գտնվող որբանոցում: Կին փախստականներից շուրջ 75.000-ը ներգաղթել են Միջագետքից և Միջագետքից: Հավելում մեզ տեղեկացրին, որ նրանց 40%-ը վարակվել է վեներական հիվանդություններով այն կենսակերպի հետևանքով, որը նրանց պարտադրվել է: Մինչ տեղահանությունը այս ազգի կանայք զերծ են եղել նման հիվանդություններից: Հաշվումը, բնությունները, կտտանքներն ու մահը իրենց անջնջելի հետքերն են թողել հայոց հարյուրավոր չքնաղ հովիտներում, և այս շրջաններով ճամփորդողը

were sold to Kurdish brigands for a few piastres, and women were promiscuously violated. At Sivas an instance was related of a teacher in the Sivas Teachers' College, a gentle, refined Armenian girl, speaking English, knowing music, attractive by the standards of any land, who was given in enforced marriage to the beg of a neighboring Kurdish village, a filthy, ragged ruffian three times her age, with whom she still has to live, and by whom she has borne a child. In the orphanage there maintained under American relief auspices, there were 150 "brides," being girls, many of them of tender age, who had been living as wives in Moslem homes and had been rescued. Of the female refugees among some 75,000 repatriated from Syria and Mesopotamia, we were informed at Aleppo that 40 per cent are infected with venereal disease from the lives to which they have been forced. The women of this race were free from such diseases before the deportation. Mutilation, violation, torture, and death have left their haunting memories

հազվադեպ կարող է զերծ մնալ երբևէ գործված այս հսկայածավալ ոճրագործության մասին վկայող բազմաթիվ տեսարաններից: Դեռ ավելին, այդ ամենից ինքնապահպանումը, պետք է որ ձեռք բերված լինի յուրաքանչյուր հայ աղջկա կամ գեղեցիկ կնոջ՝ իրենց կրոնից բնությամբ հրաժարումի և մահմեդականությունն ընդունելու գնով: Իրավամբ, ոչ մի դավանանք աշխարհում երբևէ ավելի սարսափելի ձևով փորձության չի ենթարկվել կամ պաշտպանվել այսքան թանկ գնով:

Նույնիսկ պատերազմից առաջ հայերը շատ հեռու են եղել մեծամասնություն կազմելուց Թուրքահայաստան կոչվող տարածքում, բացառությամբ մի քանի վայրերի: Մինչ օրս էլ մենք կասկածում ենք՝ արդյո՞ք հայերը մեծամասնություն կկազմեին մեկ համայնքում, անգամ եթե ջարդերից ու տեղահանումներից վերջին փրկվածները վերադառնային իրենց հողերը: Չնայած թուրք բնակչության մեծ կորուստները ինչ-որ առումով հավասարակշռում է նախճիրի հետևանքով առաջացած տարբերությունը: Ըստ մեր հաշվարկների, Թուրքահայաստանում մինչ օրս կան մոտ 270.000 հայեր: Մոտ 75.000-ը ներգաղթել են

in a hundred beautiful Armenian valleys, and the traveler in that region is seldom free from the evidence of this most colossal crime of all the ages. Yet immunity from it all might have been purchased for any Armenian girl or comely woman by abjuring her religion and turning Moslem. Surely no faith has ever been put to harder test or has been cherished at greater cost.

Even before the war the Armenians were far from being in the majority in the region claimed as Turkish Armenia, excepting in a few places. To-day we doubt if they would be in the majority in a single community even when the last survivors of the massacres and deportations have returned to the soil, though the great losses of Turkish population to some extent offset the difference brought about by slaughter. We estimate that there are probably 270,000 Armenians to-day in Turkish Armenia. Some 75,000

* Այս կարծիքը ձևավորվել է, քանզի Հարբորդի առաքելությունը չի եղել հայաբնակ և հայկական մեծամասնություն կազմող՝ Վանի և Բիթլիսի նահանգներում (ծանոթագրությունը՝ Ա. Ղ.):

Միրիայից և Միջագետքից, մյուսներն աստիճանաբար վերադառնում են այլ շրջաններից, որոշ մասն էլ այս կամ այն պատճառով մնացել է երկրում: Անդրկովկասում Թուրքահայաստանից մոտ 300.000 փախստական կա, մի քանի հազարից ավելի հայեր կան այլ երկրներում. քանի որ նրանք թշվել են դեպի Մերձավոր Արևելքի բոլոր կողմերը: Թուրքիայի և Ռուսահայաստանի որբանոցները վկայում են չափահասների շրջանում կյանքերի մեծ թվով կորստի մասին: Նրանք և՛ թուրքեր են, և՛ հայեր. առաքելությունը տեսել է պատերազմի դժբախտ տարիների հազարավոր թշվառ փրկվածների: Թուրքիայի 20 կայարանների զեկույցները արձանագրում են Ամերիկյան օգնություն ստացող 15.000 որբերի մասին տեղեկություններ: Անկասկած, վերանայման կարիք ունեցող այս թիվը կրկնակի է, քանի որ որբերից շատերի մասին հոգացել են Կարմիր մահիկի՝ հովանավորությամբ՝ մի կազմակերպություն, որը մահմեդական երկրներում համապատասխանում է մեր Կարմիր խաչին: Քսան հազար որբերի մասին հոգ են տանում Անդրկովկասում գտնվող տարբեր բարեգործական կազմակերպությունների միջոցներով: Ա-

have been repatriated from the Syrian and Mesopotamian side, others are slowly returning from other regions, and some from one cause or another remained in the country. There are in the Transcaucasus probably 300,000 refugees from Turkish Armenia, and some thousands more in other lands, for they have drifted to all parts of the Near East. The orphanages seen throughout Turkey and Russian Armenia testify to the loss of life among adults. They are Turkish as well as Armenian, and the mission has seen thousands of these pathetic little survivors of the unhappy years of the war. Reports from 20 stations in Turkey show 15,000 orphans receiving American aid, and undoubtedly the number demanding care is double this, for many were seen cared for under the auspices of the Red Crescent, the organization which in Moslem countries corresponds to our Red Cross. Twenty thousand are being cared for at the expense of the various

առաքելության կատարած ուղևորության ճանապարհին մինչ օրս էլ հանդիպում են կառավարական կամ այլ կազմակերպված հոգածության ներքո գտնվող ավելի քան 50.000 որբեր: Մեր գնահատականներով հայ փախստականների ընդհանուր թիվը մոտ կես միլիոն է, որոնք առաջին իսկ հնարավորության դեպքում պիտի նոր կյանք սկսեն Նյու Յորքի, Փենսիլվանիայի և Օհայոյի մեծությամբ մի տարածքում: Այստեղ նրանց պիտի միանալին մյուս հայերը՝ ոչ փախստականներ, ովքեր կվերադառնային այլ երկրներից: Փախստականների վիճակը Անդրկովկասում ծայրաստիճան խղճալի է: Նրանք գոյատևում էին ամերիկյան բարեգործական կազմակերպությունների օգնությամբ: Ոչ մեծ օգնություն տրամադրվում էր տարածաշրջանում հանգրվանած առավել բարգավաճ երկրներից: Փախստականների մեծ մասը կրում են այն քրջերը, որ իրենց հագին էին շուրջ չորս տարի: Նրանց ութսուն տոկոսը տառապում է մալարիայով, 10 տոկոսը՝ վեներական ցավերով և բոլորն անխտիր՝ սովամահության եզրին գտնվելու հետևանքով գլուխ բարձրացրած հիվանդություններով: Կան նաև հիվանդություններ, որոնք ուղեկցում են ախտին, մաշկային դյուրազգացությանը և աչքի հիվանդություններին. վերջինս հատկապես

relief agencies in the Transcaucasus. On the route traveled by the mission fully 50,000 orphans are to-day receiving Government or other organized care. We estimate a total of perhaps half a million refugee Armenians as available to eventually begin life anew in a region about the size of New York, Pennsylvania, and Ohio, to which would be added those, not refugees, who might return from other lands. The condition of the refugees seen in the Transcaucasus is pitiable to the last degree. They subsist on the charity of the American relief organizations with some help, not great, however, from their more prosperous kinsmen domiciled in that region. Generally they wear the rags they have worn for four years. Eighty per cent of them suffer from malaria, 10 per cent from venereal troubles, and practically all from diseases that flourish on the frontiers of starvation. There are also the diseases that accompany filth, loathsome skin troubles, and great numbers of sore eyes, the latter especially among the children.

* Կարմիր մահիկ - Կազմակերպություն, որ մահմեդական երկրներում համապատասխանում է Կարմիր խաչին: (Մ. Թ.)

տարածված է երեխաների շրջանում: Հիվանդանոցները գերբեռնված են այսպիսի դեպքերով:

Ռուսահայաստանի փախստականները մինչ օրս էլ կուտակվում են այստեղից այնտեղ, բայց այժմ գնդապետ Հասկելի խնամակալությամբ ջանքեր են գործադրվում նրանց կենտրոնացնելու փախստականների մի քանի ճամբարներում: Չմեռային սեզոնը բազմաթիվ մահեր է ենթադրում, քանի որ ձմեռներն այստեղ անսահման դաժան են, վառելիքը՝ խիստ սակավ, ապաստարաններն՝ անպատշաճ հարմարություններով: Բուժամիջոցները սակավ են և շատ թանկ: Խինինի՝ մեկ ֆունտն արժեք մոտավորապես 30 դոլար: Մահմանի թուրքական հատվածում, ուր արդեն վերադարձել են հայերը, նրանք աստիճանաբար վերագտնում են իրենց սեփականությունը, որոշ դեպքերում վճար են ստացել դրա դիմաց, բայց մեծ մասամբ նրանք ավերակներ են գտնում և ձմռանը դիմակայում են առանց ամերիկյան օգնության, միայն այն ընդհատ օգնություններով, որն իրեն կարող է թույլ տալ

* Քինին – ակալոիդ, պարունակվում է քիմածառի կեղևում: Մաքուր վիճակում առաջին անգամ անջատել են 1820 թ. ֆրանսիացի քիմիկոսներ Պիեռ Շոգել և Պելետիեն և ժողովրդական բժիշկներ Կավանտուն: Բուժիչ դեղաչափերով ազդում է օրգանիզմի տարբեր համակարգերի վրա. ընկճում է ջերմակարգավորման կենտրոնները, իջեցնում սրտամկանի դրոդողականությունը, նվազեցնում կծկողունակությունը, դրդում է արգանդի մկանունքը և ուժեղացնում կծկումները: Քինինը հակամալարիային դեղամիջոց է: (Մ. Թ.)

The hospitals are crowded with such cases.

The refugees in Russian Armenia have hitherto drifted from place to place, but an effort is now being made by the administration of Col. Haskell to concentrate them in several refugee camps. The winter season will see many deaths, for the winters there are extremely severe, fuel is scarce, and shelter inadequate. Medicines are scarce and very dear. Quinine cost approximately \$30 a pound. On the Turkish side of the border where Armenians have returned they are gradually recovering their property, and in some cases have received rent for it, but generally they find things in ruins, and face winter out of touch with the American relief, and with only such desultory assistance as the Turkish Government can afford. Things are little if

թուրքական կառավարությունը: Այրուստի միակ միջոցը չնչին էր, եթե չասենք գրեթե բացակայում էր նաև նույն շրջանի թուրք գյուղացիների մեջ: Նրանք թշվառ, նույնքան անօգնական ու անպաշտպան գյուղացիներ էին ձմռանը դիմակայելու համար: Ո՛չ բժիշկներ, ո՛չ դեղամիջոցներ չէին կարող ունենալ: Գյուղերը փլատակների մեջ են, դրանցից որոշները ավերվել են, երբ հայերը փախել են կամ տեղահանվել, որոշները՝ ռուսների առաջխաղացման ժամանակ, մյուսներն էլ ռուսական կայսրության անկումից հետո հայկական անկախության գործի ու ռուսների նահանջից: Պատերազմ մեկնած թուրք գյուղացիների ոչ ավելի, քան 20 տոկոսն է վերադարձել: 20-35 տարեկան տղամարդկանց բացակայությունը խիստ նկատելի է: Վեց հարյուր հազար թուրք զինվոր մահացել է միայն տիֆից: Մա արձանագրված փաստ է, և սակավ բժշկական ծառայությունները և մատակարարման բացարձակ սղությունը էապես մեծացրին մահվան ցանկերը:

Այս տարածքում, որն ականատես եղավ ռուսական և թուրքական բանակների տեղաշարժերին, նյութական պայմանները շատ ողորմելի վիճակում են: Այստեղ տարիներ ի վեր ոչ մի սերմնահատիկ չի ցանվել ու աճել, և կանոնավոր մշակվող հողը հիմա միայն մոլա-

any better with the peasant Turks in the same region. They are practically serfs equally destitute, and equally defenseless against the winter. No doctors or medicines are to be had. Villages are in ruins, some having been destroyed when the Armenians fled or were deported; some during the Russian advance; some on the retreat of the Armenian irregulars and Russians after the fall of the Empire. Not over 20 per cent of the Turkish peasants who went to war have returned. The absence of men between the ages of 20 and 35 is very noticeable. Six hundred thousand Turkish soldiers died of typhus alone, it is stated, and insufficient hospital service and absolute poverty of supply greatly swelled the death lists.

In the region which witnessed the ebb and flow of the Russian and Turkish Armies, the physical condition of the country is very deplorable. No crops have been raised for several years and the land ordinarily cultiva-

խոտով է պատվել: Հազիվ թե լինի մի գյուղ կամ քաղաք, որ ամբողջապես ավերակի չի վերածվել: Երկիրը գրեթե զուրկ է ծառերից:

Որտեղ պատերազմի անողոր շունչը մի տեղ հրո ճարակներով, մյուսում՝ անընդհատ ընդլայնվող ավերածություններով չէր հասցրել կործանել, հիմնականում փայտյա գերաններով բնակելի կացարանները, այնտեղ դրանք հրի էին մատնվել և ավերվել: Պատերազմից անմասն մնացած տարածքում, որտեղից հայերը քշվել են, ավերված գյուղերն անվարան ենթարկվել են թուրքական սատանայությանը: Բայց որտեղ հայերն առաջ են մղվել և նահանջել ռուսների հետ, վերջիններիս պատասխան դաժանություններն անառարկելիորեն սկսել են մրցել թուրքական անմարդկային վերաբերմունքի հետ: Երկրի վերակառուցումը ավելի հեշտ կլինի կուսական անապատից արգավանդ վիճակի անցնելու, քան այն ժամանակ, երբ երկիրը դեռ երիտասարդ էր:

Որտեղ եղել են ռուսները, այնտեղ խճապատ հիանալի պողոտաներ են կառուցել: Անգամ գլխավոր թուրքական ճանապարհները մեծ մասամբ պատերազմի ընթացքում են կառուցվել: Դրանցով է ճանա-

ted has gone to weeds. Scarcely a village or city exists which is not largely in ruins. The country is practically treeless.

Where the desperate character of the warfare with its reprisals of burning and destroying as one side and then the other advanced, has not destroyed the buildings, which are generally of abode, the wooden beams have been taken for fuel and the houses are ruined. In the territory untouched by war from which Armenians were deported the ruined villages are undoubtedly due to Turkish deviltry, but where Armenians advanced and retired with the Russians their retaliatory cruelties unquestionably rivaled the Turks in their inhumanity. The reconstruction of this country will be little short in difficulty of its original reclamation from virgin wilderness in days when the world was young.

Where the Russian went he built fine macadam highways, and even the main Turkish roads generally built during the war, over which our mission traveled,

պարհորդել մեր առաքելությունը. որոշները անցանելի էին, որոշներն էլ՝ բավականին լավը: Անտեռոյան մատնված լինելով՝ բոլոր այս ճանապարհները շատ արագ ավերվում են: Շարժիչային փոխադրամիջոցներով միանգամայն ապահովված երկիրը ետ է գնում ուղտերի քարավաններից, բեռնատար ավանակներից և արաբական աղմկոտ, մաշված փոխադրակառքերից կախվածության: Եզր հիմնական փոխադրամիջոցն է: Մի հիանալի ճանապարհ գոյություն է ունեցել Էրզրումից Տրապիզոն, աշխարհի հնագույն առևտրային ուղու երկայնքով, որը տանում էր Պարսկաստանից Մև ծով: Այստեղով դարեր ի վեր Պարսկաստանից գորգեր ու ակնեղեն են հասցրել Արևմուտք: Այս ճանապարհը մոտ 150 մղոն՝ է: 1 տոննայի նավաբեռան փոխադրավաճքը ներկայումս գնահատվում է 145-150 դոլար:

Մենք լսել էինք Թուրքիայի միջով անցնող հատվածում ավազակային հարձակումների մասին, բայց ոչ մի նման միջադեպի չհանդիպեցինք: Ըստ երևույթին, երբեմն

were passable, and some quite good. All highways are rapidly going to ruin for lack of maintenance. A country once fairly equipped for motor traffic is sliding back to dependence on the camel caravan, the diminutive pack donkey, and the rattly, ramshackly araba wagon. The ox is the principal draft animal. A good highway existed from Erzerum to Trebizond, on the line of the most ancient trade route in the world, that from Persia to the Black Sea, through which, in all ages, the carpets and jewels of Persia have reached the western world. The distance is about 150 miles. The freight rate is now between \$145 and \$150 per ton.

In the portion of Turkey traversed we heard of brigandage, but experienced no inconvenience. Apparently the Turkish Government,

* Մղոն - (լատ.՝ mille - «հազար» բառից), երկարության միավոր: Գործածվում է հիմնականում ծովային գործում: Մղոնի մեծությունը տարբեր երկրներում տարբեր է՝ կախված տեղանքի աշխարհագրական լայնությունից, և տատանվում է 0,58 կմ-ից (Եգիպտոս) մինչև 11,2 կմ (հին չեխական մղոն) սահմաններում: Մեծ Բրիտանիայում ծովային մղոնը = 1,853184 կմ, ցամաքային կանոնադրական մղոնը = 1,609344 կմ (կիրառվում է նաև ԱՄՆ-ում): (Մ. Թ.)

անբարոյական ու անարդյունավետ գործող թուրքական կառավարությունը, կարողանում է վերահսկել իր ժողովրդին և կառավարել: Մի ժամանակ Ռուսաստանի կողմից կառավարված տարածքում նրա երկաթե ձեռքից ձեռքազատումը հիանալի եղավ և շատ շրջաններում չկա կյանքի և սեփականության ապահովությունը: Մեր առաքելությունը Ռուսահայաստանի տարածքում քրդերի կողմից հարձակման ենթարկվեց և մի քանի շարժիչային մեքենա գնդակների հարվածների տակ ջարդուփշուր եղան: Այս ավագակային խմբի կեսից ավելին մահմեդականների կողմից մի գիշեր ձերբակալվեց: Նրանք պնդում էին, որ հայերի կողմից քշվել են իրենց գյուղերից:

Աղբրեջանում ևս մենք հարձակման ենթարկվեցինք: Անդրկովկասյան երկաթուղում թալանի նպատակով գնացքների վթարները շատ հաճախակի պատահող դեպքեր են, և վրացական կառավարությունը նախազգուշացում էր արել այն մասին, որ ապահովության համար մեզ հետ ունենանք օժանդակ շարժիչներ: Ճանապարհները վտանգավոր էին անգամ մեծ ավանների արվարձաններում: Վրաստանում և Աղբրեջանում քաղաքներից դուրս գործնականում յուրաքանչյուր տղամարդ հրացան էր կրում: Եթե նա

inefficient and wicked as it sometimes is, can control its people, and does govern. In the region once policed by Russia the relaxation from its iron hand has been great, and life and property are unsafe in many regions Our mission was fired upon by Kurds in Russian Armenia and several motor cars struck by bullets, and over half the party were kept prisoner one night by Moslems who claimed to have been driven from their villages by Armenians.

In Azarbaijan we were also fired upon. Train wrecks for robbery are frequent on the Transcaucasian Railroad, and the Georgian Government took the precaution to run pilot engines ahead of our train for safety. The highways are unsafe even to the suburbs of the large towns. Practically every man in Georgia and Azarbaijan, outside the cities, carries a rifle. If he desires to stop a traveler on the highway he motions or calls

ցանկանում էր կանգնեցնել որևէ ճամփորդի, ձեռքով կանչում էր կամ գոռում, և եթե ճամփորդը անտեսում էր այդ կանչը, նա կրակում էր վերջինիս ուղղությամբ:

Այս բարեգործությունն իրականացվել է Անդրկովկասի համար նախատեսված բարեգործական միջոցների հաշվին, միջոցներ, որ գոյացել էին Կոնգրեսի դաշնակից երկրներին ուղղվելիք հարյուր միլիոնավոր դոլարների ֆոնդից, ինչպես և Մերձավոր Արևելքի փոխօգնության ամերիկյան կոմիտեի հանգանակության հաշվին: Բարեգործություն է ծավալվում նաև Մերձավոր Արևելքի փոխօգնության ամերիկյան կոմիտեի հանգանակության ֆոնդերի հաշվին: Բոլոր հանգամանքները հաշվի են առնված. բարեգործական վարչությունն Անդրկովկասում թվում է ստիպված էր միջինից ավելի ավյուն ներդնել այս աշխատանքում: Դա փրկել է այնտեղ փախստականներին սովից և Ամերիկայի անունը բերել բարեհաճ վերաբերմունքի և գնահատանքի բարձրակետին, որն այն երբեք չէր վայելել այս տարածաշրջանում: Աշխատանքներ են տարվում այժմ ողջ Մերձավոր Արևելքով մեկ՝ և դաժան ու անտաշ քրդերը, առավել համակրելի վրացիները, կասկածելի աղբրեջանցիները, շնորհալի հայերը, բավականին համարձակ

to him, and if unheeded fires at him.

The relief work consists of the allotment made to the Transcaucasus from the unexpended balance of the hundred millions appropriated by Congress for relief in allied countries, and of the funds contributed through the American Committee for Relief in the Near East. All circumstances considered, the relief administration in the Transcaucasus seems to have been conducted with more than average energy. It has rescued the refugees there from starvation, and brought the name of America to a height of sympathy and esteem it has never before enjoyed in this region. It extends now throughout the Near East, and is felt by the wild, ragged Kurd, the plausible Georgian, the suspicious Azarbaijan, the able Armenian, and the grave Turk with equal seriousness. With it or probably because of it there has come widespread knowledge of the Fourteen Points submitted by the President, and "self-

թուրքերը այն զգում են հավասար լրջությամբ: Այս ամենի հետ մեկտեղ կամ հավանաբար այս ամենի պատճառով այստեղ տարածում գտան նախագահի կողմից ընդունված «14 կետերը» և ինքնորոշման գաղափարը իրագործման առաջադրվեց Շամարի ու Բասրայի վայրագ արարների, անդրկովկասյան յուրաքանչյուր կառավարության կողմից, Դադստանի լեռնաբնակների, Սվազում և Էրզրումում թուրք ազգային շարժման պատվավոր ու խելացի առաջնորդների ու վաչկատուն քրդերի կողմից, ովքեր 10 րոպե առաջ մեզ հայերի հետ շփոթելով՝ կրակ բացեցին մեզ վրա: Անկասկած, բարեգործության առնչությամբ տեղացի պաշտոնյաների շրջանում կաշառակերության սկիզբ առնելը կարող է հիմնավորվել: Նույնպիսի աղետալի պայմաններում կողմնապահության մեղադրանքները հազվադեպ չեն մահմեդականների դեմ հոգուտ քրիստոնյաների: Անփորձության, հաղորդակցության դժվարությունների և շատ այլ պատճառներով ամերիկյան աշխատակիցների ու ծառայողների շրջանում անարդյունավետություն էր: Եռանդուն երիտասարդ ամերիկացիները, սպառելով իրենց ֆոնդերի ռեսուրսները, փախստական բնակչության շրջանում բախվեցին սովի սարսափներին ու ապավինելով իրենց հայրենակից-

determination” has been quoted to the mission by wild Arabs from Samar and Basra, by every Government in Transcaucasia; by the mountaineers of Daghistan, the dignified and able chiefs of the Turkish Nationalist movement at Sivas and Erzerum, and the nomad Kurds who 10 minutes before had fired at our party thinking us to be Armenians. Undoubtedly some charges of corruption on the part of native officials connected with the relief could be substantiated. Charges of partiality favoring Christian against Moslem in equal distress are not infrequent. Due to inexperience, to difficulties of communication and other causes there has been inefficiency on the part of American officials and employees. Enthusiastic young Americans out of touch with the sources of their funds, confronted with the horrors of famine in a refugee population, drew drafts on the good faith and generosity of their countrymen, procedure not usual in the business world, but drafts that were honored nevertheless. Any criticism

ների հավատին ու առատաձեռնությանը, մի գործողություն, որ պաշտոնական մակարդակում ընդունված բան չէ, բայց, այնուամենայնիվ, ընդունվում է: Ոչ գործնական մեթոդների ցանկացած քննադատություն պետք է ուղեկցվի արված աշխատանքի արձանագրմամբ, ինչը շատ կարևոր է և գովելի Ամերիկային ու նրա հիանալի քաղաքացիների համար, ովքեր առատաձեռնորեն աջակցել են այդ գործին: Գնդապետ Հասկելն Անդրկովկասում վերակազմակերպում է աշխատանքը և ավելի լավ արդյունքներ գրանցում: Ինչ-որ կերպ միջոցներ պետք է հայթայթել և աշխատանքը պետք է շարունակվի ու մարդիկ ոտքի կանգնեն, մինչև վարուցանք ու բերք ունենալը: Եթե սերմը պիտանի լինի, արդեն 1920-ի օգոստոսին բերք կլինի: Բայց այս հուսադրող առաջընթացը իր արդյունքներով հասու է միայն նրանց, ովքեր վերստացել, վերագտել են իրենց հողերը:

Շատ բաներ կան, որ ապացուցում են այն հանգամանքը, թե զուտ իրենք՝ թուրքերն ու հայերը, առանց պաշտոնական սադրանքների, մինչ այժմ կարողացել են միասին ապրել հաշտ ու խաղաղ: 5 դար նույն հողի վրա նրանց համակեցությունը հստակորեն ցույց է տալիս նրանց փոխկապակցվածությունն ու փոխադարձ շահերը: Էրզրումի տարեց

of unbusinesslike methods must be accompanied with the statement of work accomplished, which has been very great and very creditable to America and her splendid citizens who have so generously contributed to this cause. Col. Haskell has reorganized the work in the Transcaucasus and is getting better results. In some way funds must be found and this work must be continued and the people be sustained until they can harvest a crop. If seed is available for planting, a crop should be due in August, 1920. Even this prospective amelioration only applies to those repossessed of their lands.

There is much to show that, left to themselves, the Turk and the Armenian when left without official instigation have hitherto been able to live together in peace. Their existence side by side on the same soil for five centuries unmistakably indicates their interdependence and mutual interest. The aged Vali of

նահանգապետը՝ տարիքով ու պաշտոնական փորձառությամբ մի ծեր մարդ, պատմեց մեզ, որ իր երիտասարդության տարիներին, մինչ արդուկամիդյան ջարդերի սկսվելը, թուրք և հայ ժողովուրդներն ապրել են խաղաղության ու վստահության մթնոլորտում: Թուրքերը դեպի սուրբ քաղաք Մեքքա և Մեդինա ուխտագնացության մեկնելիս թողնում էին իրենց ընտանիքն ու ինչքը հարևան հայերի հսկողությանը: Նույն կերպ և հայերը ճամփորդության նախօրեին վստահում էին իրենց հարստությունը իրենց թուրք ընկերներին: Ընդհանրական են վկայություններն այն մասին, որ ջարդերի հրամանները միշտ էլ Կ. Պոլսից են արձակվել: Ամերիկյան միսիոներները մեզ մատնանշեցին որոշ թուրք պաշտոնյաներ, որոնք հրաժարվում էին, որ 1915-ին տեղահանման հրաման են տվել: Այդ հրամանն ամբողջապես վերագրվում է Միություն և առաջադիմություն կոմիտեին, որի առաջնորդներն էին Էնվեր բեյը, Թալեաթ բեյն ու Ջեմալ փաշան: Գործնականում սկսած զինադադարից դադարը գտնվում էր մայրաքաղաքում և մի երկրորդական ստորադաս մարդ հանվեց կախաղան: Մեծ հաշվով, Թալեաթը, Էնվերը և Ջեմալը և մի խումբ մարդիկ, որոնք մեղադրվում էին պատերազմի օրենքների դեմ գործած տարբեր հանցագործություն-

Erzerum, a man old in years and in official experience, informed us that in his youth, before massacres began under Abdul Hamid, the Turk and the Armenian lived in peace and confidence. The Turk making the pilgrimage to the holy cities of Mecca and Medina left his family and property with his Armenian neighbor; similarly the Armenian on the eve of a journey intrusted his treasures to his Turkish friend. Testimony is universal that the massacres have always been ordered from Constantinople. Some Turkish officials were pointed out to us by American missionaries as having refused to carry out the 1915 order for deportation. That order is universally attributed to the Committee of Union and Progress, of which Enver Bey, Talaat Bey, and Djemal Pasha were the leaders. A court has been sitting in the capital practically since the armistice, and one man, an unimportant subordinate, has been hung. Talaat, Enver, and Djemal are at large, and a group of men charged with various crimes against the laws of war are at Malta

ներում, Մալթայում են՝ բրիտանացիների վերահսկողության տակ, սակայն անպատիժ, եթե հաշվի չառնենք անձի ազատության սահմանափակումը: Շշուկներ են տարածվում Էնվեր բեյի՝ Անդրկովկասում մի խառնակիչ լինելու մասին և ֆրանսիացի մի պաշտոնյա հեղինակն է այն հայտարարության, որ նա եղել է Թիֆլիսում՝ 2 ամիս մասնակցելով կառավարության պաշտոնյաների խորհրդակցությանը: Այս մարդը թուրքերի աչքում հերոսական կերպար է՝ անհայտությունից սեփական ջանքերով ճանաչում գտած, ամուսնությամբ օսմանյան կայսերական տան հետ բարեկամացած, ռազմական ունակություններով շնորհված խռովություն հրահրելու կարողությամբ, ինչը էական դեր պիտի խաղացած լինի մահմեդական անկանոնների հրամանատարությամբ ադրբեջանա-հայկական սահմանում հայտնվելու համար:

Այսպիսին են պայմանները մինչ այսօր այն շրջաններում, որտեղ դեռ հայեր գոյություն ունեն: Ճանապարհներն ու հողերը մեծ մասամբ նորից անմշակ ու վայրի են դառնում, սովամահությունը կանխվում է միայն ամերիկյան օգնության շնորհիվ, գյուղերն ու ավաններն ավերված են, ավազակները վխտում են Անդրկովկասում, դեղամիջոցների ու տաք հագուստի պակաս կա,

in custody of the British, unpunished, except as restrained from personal liberty. Various rumors place Enver Bey as scheming in the Transcaucasus, and a French officer is authority for the statement that he has been in Tiflis within two months conferring with Government officials. This man is in Turkish eyes a heroic figure; risen from obscurity by his own efforts, allied by marriage to the Imperial House of Osman, credited with military ability, the possibilities of disturbance are very great should he appear in command of Moslem irregulars on the Azarbaijan-Armenian frontier.

Such are conditions to-day in the regions where the remnant of the Armenian people exist; roads and lands almost back to the wild; starvation only kept off by American relief; villages and towns in ruins; brigandage rampant in the Transcaucasus; lack of medicines and warm clothing; winter coming on in a tree-

ձմեռը մոտենում է այս անձառ ու անաճուխ երկրում: Մենք ոչ մի ապացույց չտեսանք ի հաստատումն այն բանի, որ հայերը վերադառնալով Թուրքիայի տարածքում գտնվող իրենց տները՝ վտանգի տակ են դնում իրենց կյանքը, բայց նրանց բնական երկյուղը էլ ավելի էր մեծացել սպաների անկանոն հրահանգներից՝ օտարերկրյա ջոկատների որոշ շրջաններից հեռանալով: Իրադարձությունները Ձյուտնիայում, անկասկած, արժեզրկել էին Թուրքիայում գտնվող յուրաքանչյուր քրիստոնյայի կյանքը: Այստեղ հույների բնակեցումը դիտվում էր թուրքերի կողմից որպես Դաշինքի կողմից զինադադարով հաստատված պայմանների կանխամտածված խախտում և հետագա անարդարացի ագրեսիայի սկզբնապատճառ էր համարվում: Ներկայիս Թուրքիայի անկարգ վիճակի հարթմանը բարոյական աջակցություն ցուցաբերելն արտասահմանյան տերությունների վրա ծանր է նստում:

Միևնույն ժամանակ հայը, որ տեղահանման ու ջարդերի ընթացքում անզեն էր, մի քաջ զինվոր էր պատերազմի ժամանակ Ռուսաստանի, Ֆրանսիայի և Ամերիկայի բանակների հազարների մեջ, դեռևս անզեն է այն հողում, որտեղ բոլորը, բացի իրենից, զենք են կրում:

less land without coal. We saw nothing to prove that Armenians who have returned to their homes in Turkey are in danger of their lives, but their natural apprehension has been greatly increased by unbalanced advice given by officers on the withdrawal of foreign troops from certain regions. The events at Smyrna have undoubtedly cheapened every Christian life in Turkey, the landing of the Greeks there being looked upon by the Turks as deliberate violation by the Allies of the terms of their armistice and the probable forerunner of further unwarranted aggression. The moral responsibility for present unrest throughout Turkey is very heavy on foreign powers.

Meantime, the Armenian, unarmed at the time of the deportations and massacres, a brave soldier by thousands in the armies of Russia, France, and America during the war, is still unarmed in a land where every man but himself carries a rifle.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ

THE POLITICAL SITUATION AND SUGGESTIONS FOR READJUSTMENT

Լուծում գտնելու ճանապարհին այն քաղաքական պայմանների համար, որոնք ճշում էին ցավից, ավերածությունից, սովամահությունից և այս ամենի տխուր հետևանքները միայն պատերազմի մենաշնորհը չէ, այլև Աստծու կամ մարդու կողմից թույլ տրված գազանային վայրագությունները, բայց որոնք, այնուամենայնիվ, գերակշռում են գործող կառավարության շրջանակներում: Մի կառավարություն, որի հետ եվրոպական տերությունները վաղուց էին կամենում առնչվել հավասար պայմաններում. ընդամենը մի խթան է պետք բարեփոխման հավանականությունը ներսից քննելու համար: Առկա կառավարական մեքենան կարող է արդյոք վերակառուցվել կամ հիմնովին նորոգվել տեսանելի ապագայում՝ ապահովելով իր քաղաքացիների, բնակիչների կյանքի անվտանգությունը, ազատությունը և երջանկության

In seeking a remedy for political conditions which shriek of misery, ruin, starvation, and all the melancholy aftermath, not only of honorable warfare, but of bestial brutality unrestrained by God or man, but which nevertheless prevail under an existing government with which the powers of Europe have long been willing to treat on terms of equality, one's first impulse is to inquire as to the possibility of reform from within. The machinery of government existing, can it be repaired and made a going concern, affording to its people the guarantees of life, liberty, and the pursuit of happiness which the modern world expects of its governments? The case of the Turkish Empire was

ձգտումը, ինչն այս կառավարությունից ակնկալում է ժամանակակից աշխարհը: Թուրքական կայսրության խնդիրը ճիշտ պահին ներկայացվեց Փարիզի Խաղաղության կոնֆերանսում թուրք առաջին՝ Դամադ Ֆերիդ փաշայի կողմից հունիսի 17-ին, որտեղ նա թուրքական կառավարության քննարկմանն է ներկայացնում այդ դժբախտ շրջանը «չարագործությունները, որոնք միտված են հավիտյան վախով մարդկային սարսուռի գիտակցություն առաջացնելու» և որ «Փոքր Ասիան մինչ օրս ոչ այլ ինչ է, եթե ոչ ավերակների մի վիթխարի կույտ»: Խաղաղության կոնֆերանսի 10-ի խորհրդի պատասխանում, ի արդարացում Մեծ վեզիրի՝ իր կայսրության գոյության համար, հավանականությունը, որ կառավարությունը կարող է իրականացնել բարեփոխումներ, որոնք կբավարարեն ժամանակակից պահանջները և միգուցե շտկեն անցյալի հանցանքները, լավագույնս հաշվի է առնված հետևյալ խոսքերում.

Չնայած բոլոր այս փոփոխություններին, Եվրոպայում, Ասիայում կամ Աֆրիկայում դեռևս չի գրանցվել մի դեպք, երբ թուրքական օրենքի հաստատումը ցանկացած երկրում հաջորդված չլինի այդ երկրում զարգացման նվազեցմամբ: Ոչ էլ եղել է մի դեպք, երբ թուրքական

duly presented to the peace conference in Paris on June 17 last by the Turkish Grand Vizier, Damad Ferid Pasha, in which he admitted for the Turkish Government of the unhappy region under consideration, the commission of “misdeeds which are such as to make the conscience of mankind shudder with horror forever,” and that “Asia Minor is to-day nothing but a vast heap of ruins.” In the reply made by the council of ten of the peace conference, to the plea of the Grand Vizier for the life of his Empire, the probability of that Government being able to accomplish reforms from within which will satisfy modern requirements and perhaps make amends for past crimes, is well weighed in the following words:

Yet in all these changes there has been no case found either in Europe or in Asia or in Africa in which the establishment of Turkish rule in any country has not been followed by a diminution of prosperity in that country. Neither is there any

իշխանության թոթափումը չի հաջորդվել նյութական զարգացմամբ և մշակութային վերելքով... Իրենց նվաճած տարածքներում, ոչ Եվրոպայի քրիստոնյաների, ոչ Սիրիայի, Արաբիայի կամ Աֆրիկայի մահմեդականների շրջանում թուրքերը երբեք բացի ավերածություններից որևէ բան չեն արել: Նա երբեք ցույց չի տվել, որ կարող է զարգանալ այն խաղաղության պայմաններում, որը ձեռք է բերել պատերազմում: Այս ուղղությամբ է, որ նրա շնորհները չեն գործում:

Այնուամենայնիվ, հավանական է թվում, որ ինչ վերաբերվում է հայերին, թուրքն իր դարն ապրել է, և հետագա այդպիսի անվերահսկելի հնարավորությունը կմերժվի նրանց:

Ռուսաստանի տապալումով Անդրկովկասը մատնվեց ինքնահոսքի: Անդրկովկասյան այս տարածաշրջանը ազգագրական առումով ամենախրթիններից է աշխարհում: Բոլոր դարերում այն եղել է մարդկության համար ամենախոշոր մայրուղիներից մեկը: Դարեր շարունակ այստեղ հանգրվանել են ետ մնացած ռազմիկներ և ռասայական մնացուկներ, որոնց գաղթի հոսանքը գրավել է Կովկասյան մեծ լեռնաշղթայի ստորոտը: Մինչ օրս դրա մի փոքր մասը ներառում է հինգ խոշոր ցեղախմբեր՝ բաժանված մոտ

case to be found in which the withdrawal of Turkish rule has not been followed by material prosperity and a rise in culture. Never among the Christians in Europe, nor among the Moslems in Syria, Arabia, or Africa has the Turk done other than destroy wherever he has conquered. Never has he shown that he is able to develop in peace what he has gained in war. Not in this direction do his talents lie.

It seems likely, therefore, that as far as the Armenians are concerned, the Turk has had his day and that further uncontrolled opportunity will be denied him.

With the break-up of Russia the Transcaucasus found itself adrift. This Transcaucasian region is ethnographically one of the most complicated in the world. In all ages it has been one of the great highways for mankind. Here stragglers and racial remnants have lodged during all the centuries that the tides of migration have swept the base of the great Caucasus Range, until today its small area contains five great racial groups, di-

40 առանձին ցեղերի: Սրանցից 9-ը համեմատաբար վերջերս են հայտնվել այստեղ, իսկ մնացյալ 31-ը այս կամ այն չափով բնիկ են: Այստեղ գուտ կովկասյան 25 ցեղ կա: Նման ազգային բազմազանության պատճառն այն է, որ բացառությամբ վրացիների միանգամայն հոծ խմբերի և թաթարների մի խմբի, այս ժողովուրդներն անլուծելիորեն միախառնված են ողջ տարածաշրջանում: Նրանց քաղաքակրթական մակարդակը բազմազան է՝ լեռնային վայրենիներից մինչև բարձրագույն զարգացվածության անհատ: 40 ամենատարբեր ազգերի մեջ ամենակարևոր խմբերը վրացիներն են, Ադրբեջանի թաթարները և հայերը:

Այդ տարածաշրջանի բոլոր ժողովուրդների կողմից ստեղծված անդրկովկասյան միությունը հաջորդվեց հավասարությամբ այս երեք փոքր հանրապետություններում՝ Վրաստանում, Ադրբեջանում և Հայաստանում: Վրաստանը քրիստոնյա է, և նրա իբերական հատվածը մեծամասնություն է կազմում: Ադրբեջանը բնակեցված է թաթարներով ու մահմեդականներով: Հայաստանը կազմում են Ռուսահայաստանի նախկին նահանգները, ավելի փոքր է այն հատվածը, որը երկփեղկման արդյունքում գնացել է

vided into some 40 distinct races. Nine of these have arrived in comparatively recent times, but the remaining 31 are more or less indigenous. There are here 25 purely Caucasian races. This racial diversity is complicated by the fact that with the exception of the fairly compact group of Georgians, and one of Tartars, these peoples are inextricably commingled throughout the region. Their civilization varies from the mountain savage to individuals of the highest types. Of the 40 distinct races, the most important groups are the Georgians, the Azarbaijane Tartars, and the Armenians.

A Transcaucasian confederation formed by all the peoples in that region was followed by an alignment in three small Republics, Georgia, Azarbaijan, and Armenia. Georgia is Christian and its Iberian population are in the majority; Azarbaijan is Tartar and Moslem; Armenia is made up of the former provinces that composed Russian Armenia, less the part that went to Azarbaijan in the split, and the majority of its

Ադրբեջան, և այդ մարդկանց մեծամասնությունը Թուրքիայի հայերի արյունակից եղբայրներն են Ասիայում: Այս հանրապետությունները չեն ճանաչվել ոչ մի իշխանության կողմից բացի Թուրքիայից: Հայաստանի Հանրապետության ակնկալիքը Խաղաղության Կոնֆերանսից թուրքահայերի հետ միավորումն է և հայկական պետության ստեղծումը, որն իր կազմում պետք է ընդգրկի Ռուսահայաստանը, Թուրքիայում գտնվող հայկական 6 վիլայեթները (Վան, Բիթլիս, Դիարբեքիր, Խարբեղ, Սվազ, Էրզրում) և Կիլիկիան, որ պետք է կառավարվեն մեծ տերությունների մանդատի կողմից անցումային փուլում այն տարիների ընթացքում, երբ աշխարհասփյուռ հայերը կարող են վերադառնալ իրենց տները: Նաև քվեարկող հանձնաժողով պետք է հրավիրվի որոշելու համար ժամանակավոր կառավարության վերջնական ձևը: Վրաստանը և Ադրբեջանն անկախություն են փնտրում Խաղաղության կոնֆերանսում վիճելի սահմանների որոշակի ճշգրտմամբ, ինչով հետաքրքրված է ողջ Անդրկովկասը:

Ե՛վ, Վրաստանը, և՛ Ադրբեջանը, Ռուսաստանի անկումով փրկություն ձեռք բերելով, համոզել են իրենք իրենց, թե ներկա քաղաքակրթությունը, կառավարական և

people are the blood brothers of the Armenians of Turkey in Asia. These republics have been recognized by none of the powers except Turkey. The Armenian Republic seeks at the peace conference a union with the Turkish Armenians and the creation of an Armenian state to include Russian Armenia and the six Turkish Vilayets (Van, Bitlis, Diarbekir, Kharput, Sivas, Erzerum) and Cilicia, to be governed by a mandatory of the great powers during a transition state of a term of years in which Armenians of the dispersion may return to their homes, and a constituent assembly be held to determine the form of the eventual permanent Government. Georgia and Azarbaijan ask independence at the peace conference with certain adjustments of disputed boundaries in which all Transcaucasia is interested.

Both Georgia and Azarbaijan, living on the salvage from the wreck of Russia, have persuaded themselves that the civilization and go-

առևտրական մեխանիզմներն իրենցն են եղել ի սկզբանե: Վրացիները իրենց եկեղեցով, որ նախորդել է ռուսականին, և հայկական ծագմամբ վրացական դինաստիայի ավանդույթներով, որն իշխել է Թիֆլիսում Ռուսաստանի կողմից 1802 թ. երկրին տիրելուց հազարավոր տարիներ առաջ, շատ հպարտ ու համակրելի ազգ են: Նրանք մեծապես ազդվել են բուլշևիկներից, որ ծածանել են իրենց գլխավերևում հեղափոխության կարմիր դրոշը և ազգայնացրել են երկիրը՝ անհատույց վերցնելով այն իրական տերերից գյուղացուն վաճառելու համար: Այս ձեռնարկումը չէր բավարարում ոչ գյուղացուն, ոչ սեփականատիրոջը: Ադրբեջանցիները թաթարներ են արյունով և մահմեդականներ՝ կրոնով ու համոզմունքով: Նրանց փոքր երկրի խայտաբղետ տեղագրությունը և արտադրանքների բազմազանությունը երկիրը դարձնում են կողմնակի օգնությունից ավելի անկախ, քան Անդրկովկասյան որևէ այլ հանրապետություն: Ե՛վ վրացական, և՛ ադրբեջանական կառավարությունները սարսափում են Կովկասյան լեռների հարավից եկած Դենիկինի զորքերից: Վրաստանն ունի փոքր բանակ իր հյուսիսային սահմանին, իսկ Ադրբեջանն ունի լուռ համաձայնություն գեներալ Դենիկինի

vernmental and business machinery they have taken over have been theirs from the beginning. The Georgians, with a church of their own antedating that of Russia and traditions of a Georgian dynasty of Armenian origin which reigned in Tiflis for a thousand years before Russia took over the country in 1802, are a very proud and plausible race. They have been much influenced by the proximity of bolshevism, fly the red flag of revolution over their own, and have nationalized land, taking it from the original owners without compensation, to sell to peasants. This measure has been unsatisfactory to both peasant and proprietor. The Azarbaijanese are Tartars by blood and Moslem by religion and sympathy. The varied topography of their little country and the diversity of its products make them more independent of outside help than either of the other Transcaucasian Republics. Both Georgian and Azerbaijan Governments live in terror of the forces of Deniken coming south of the Caucasus Mountains. Geor-


հետ նրա դեմ ռազմական գործողությունները զսպելու մասին ի փոխարինում Կասպից ծովում նրա հրետանավակների հարձակումը կանխելու:

Ռուսահայերը Թուրքիայի հայերի արյունակից եղբայրներն են և Ռուսաստանի տիրապետության տակ են անցել 1878 թ.*: Նրանք ռուսական բազմաթիվ ավանդույթներ ու բարքեր են յուրացրել և իրենց հարստությամբ ու ունակություններով գերակա դեր են ստանձնել Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող Անդրկովկասում**։ Թիֆլիսը, որ ռուսական մայրաքաղաքն էր, Նյու Յորքից ու Կ. Պոլսից հետո հավանաբար հայկական ամենամեծ բնակչությունն ունի ողջ աշխարհում: Նրանք բարեկամական հարաբերությունների մեջ են Դենիկինի և վերակազմված սահմանադրությամբ Ռուսաստանի հետ, և նրանց մերժումը՝ միանալ Վրաստանին և Ադրբեջանին ընդդեմ Դենիկինի պատճառ դարձավ Անդրկովկասյան դաշինքի լուծարման:


* Արևելյան Հայաստանը Ռուսաստանի տիրապետության տակ է անցել 1826-28 թթ. պատերազմից հետո, 1828 թ. փետրվարի 10-ի պայմանագրով: (Ա. Ղ.)

** Խոսքը միայն Կարսի շրջանի մասին է, որը միացվեց Ռուսական տիրապետությանը:

Անդրկովկասում տիրապետող է ռուսական քաղաքակրթությունը: Ամեն զին երկրում պայմանավորված է ռուսական դրամով և ռուսական ձեռներեցությամբ: Բացի այս ընդհանուր կապից, այս երկրները փոխկապակցված են նաև փոխադրումների հարցում: Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսից երկաթգիծ է ձգվում դեպի արևմուտք՝ Սև ծով՝ Բաթումի, դեպի արևելք՝ Կասպից ծով՝ Բաքու (Ադրբեջանի մայրաքաղաք) և դեպի հարավ՝ Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երիվան: Ճանապարհը ռուսական չափանիշներով է կառուցված՝ Թիֆլիսից ձգվող 3 ուղղություններով, որոնցից յուրաքանչյուրն ավարտվում է տարբեր երկրներում, մոտավորապես այսպես.



The dominant civilization in Transcaucasia is Russian. Everything worth while in the country is due to Russian money and Russian enterprise. Besides this common bond, these countries are interdependent in the matter of transportation. From Tiflis, the capital of Georgia, a railroad runs west to the Black Sea at Batum and east to the Caspian Sea at Baku, the capital of Azarbaijan; and south to Erivan, the capital of the Republic of Armenia. The road is one of system, of the Russian gauge, with the three radii from Tiflis, each ending in a different country, something like the following:



Ռուսաստանի տիրապետության տակ այս ճանապարհը, անշուշտ, ունեւր կառավարման մեկ համակարգ՝ արհեստանոցներով, շարժակազմով և ընդհանուր քաղաքականությամբ: Այժմ Վրաստանը ղեկավարում է արհեստանոցները, Ադրբեջանը տնօրինում է վառելիքի պաշարները և երեքից յուրաքանչյուրը շարժակազմը վարում է այնպես, ինչպես կարող է: Նրանցից ոչ մեկը մյուսին չի վստահում: Ոչ մի տեսակ երթևեկություն հնարավոր չէ առանց կողմնակի ուժի միջատության, որը կերաշխավորի երկաթգծի վերադարձը, երբ այն մի ենթակայությունից մյուսն է անցնում: Վրաստանը չի վարանում Հայաստանի դեպքում արգելք դնել բեռնափոխադրումների վրա և իր դիրքորոշմամբ պարզապես խոչընդոտում է երկաթուղային երթևեկությունը դեպի այդ տարաբախտ երկիր:

Under Russia the road was, of course, under one management, with shops, rolling stock, and policy in common. Georgia now controls the shops, Azarbaijan the oil fuel, and each of the three such rolling stock as it can get. No one of the three trusts the others; no through or continuous traffic is possible without an outside power guaranteeing the return of the rolling stock when it passes from one jurisdiction to another. Georgia does not hesitate to embargo freight against Armenia, and from her position of vantage simply censors the railroad traffic to that unfortunate country. Azarbaijan controls the fuel supply and combines with Georgia against Armenia, which alone of the

Ադրբեջանը վերահսկում է վառելիքի պաշարները և համագործակցում Վրաստանի հետ Հայաստանի դեմ, որն այս երեքի մեջ միակն է, որ ոչինչ չունի լծակներ գործադրելու համար: Ազգային վերահսկողության ներքո երկաթուղին ոչ կարող է ամրապնդվել, ոչ պատշաճ կերպով գործի դրվել: Դրա ճանապարհի ու վագոնների վիճակն արագորեն վատթարանում է: Հայաստանի վրա Վրաստանի ունեցած իշխանության օրինակ է այն, որ վերջինս չի արտոնել Հայաստանին զենք ու զինամթերք ներկրել, չնայած որ այն հարևանների անմիջական սպառնալիքի տակ է:

Այս երեք կառավարությունները, ըստ արևմտյան տեսակետի, այժմ լիովին անարդյունավետ են գործում, հավատ չեն ներշնչում և, անկասկած, կոռումպացված են: Յուրաքանչյուրն առանձին ունի իր անլուծելի ֆինանսական խնդիրները: Կրոնական տարաձայնությունները, գումարվելով ազգայինին, սպառնում են գոտեցնել նրանց, քանի դեռ նրանք ընդհանուր վերահսկողության տակ չեն: Նրանցից երկուսը ոչ մի ելք չունեն դեպի Մեծով, բացի Վրաստանով անցնող երկաթուղային ճանապարհից: Նրանք չունեն ժամանակակից համագործածական արժույթ, փոստային, մաքսային միություն և, ինչպես

three has nothing by which to exert leverage. The railroad can neither be consolidated nor properly operated under native control. Roadbed and rolling stock are rapidly deteriorating. An example of the power of Georgia over Armenia is that the latter is not permitted to import either arms or ammunition, though under almost constant menace from its neighbors.

The three Governments from an occidental standpoint are now thoroughly inefficient, without credit, and undoubtedly corrupt. Alone each faces inextricable financial difficulties. , Religious differences, added to racial, threaten to embroil them unless brought under a common control. Two of them have no outlet to the Black Sea except through Georgia over the railroad. They have no present intermonetary, postal, or customs union, and, as stated, no definite agreement for common control and use of the railroad, and are in con-

նշվում է, չունեն որոշակի համաձայնություն ընդհանուր վերահսկողության կամ երկաթուղու օգտագործման համար, և սահմանների շուրջ շարունակական վեճերի մեջ են: Ադրբեջանը չունի կրթված դասակարգ, որն ունակ կլինի լավ դեկավարել կառավարությունը: Վրաստանը բոլշևիզմի սպառնալիքի տակ է: Հայաստանը ավերակների մեջ է և մասնակիորեն սովի է մատնված: Մեր բոլոր հետազոտությունները բերում են այն համոզման, որ այս երեք երկրների ժողովուրդներն էլ կողջունեն որևէ արժանահավատ արտաքին ուժի մանդատարարին: Ռուսահայաստանը հավանաբար այսօր կքվեարկեր Ռուսաստանի մանդատի օգտին, եթե այս տերությունը ոտքի կանգներ: Վրաստանը հիշեցնում է իր վաղեմի անկախությունը և երբեք չի համակերպվել ռուսական իշխանության հետ: Ադրբեջանը, թաթարներն ու մահմեդականներն առավել ամուր կապերով են կապված Թուրքիայի հետ և չեն վստահում քրիստոնյաներին, բայց ավելի խելամիտ մարդիկ հասկանում են, որ արտաքին վերահսկողությունն անխուսափելի և անգամ անհրաժեշտ է քրիստոնյա երկրների հետ իրենց հարաբերությունների համար և որ Թուրքիան քննարկումից դուրս է: Այս պետություններն աշխարհագրական, առն-

tinual squabbles over boundaries. Azerbaijan has no educated class capable of well administering a government; Georgia is threatened by bolshevism; Armenia is in ruins, and partial starvation. All our investigation brings conviction that the people in each would welcome a mandatory by a trustworthy outside power. Russian Armenia would to-day probably vote a mandate to Russia if that power were reconstituted. Georgia recalls its ancient independence and was never thoroughly reconciled to Russian rule. Azerbaijan, Tartar and Moslem, feels a double tie to Turkey and distrusts the Christian, but the more intelligent people realize that outside control is inevitable and even necessary to their relations with Christian countries and that Turkey is beyond consideration. So closely are the countries related geographically, commercially, and by the habit of generations that this mission not only believes that a mandatory is necessary for them, but that it is imperative from the standpoints of peace, order,

տրական առումներով և սերնդեսերունդ փոխանցվող սովորույթներով այնքան սերտ կապերի մեջ են, որ այս ներկայացուցչությունը հավատացած է, թե այս մանդատը ոչ միայն անհրաժեշտ է նրանց, այլև խաղաղության, կարգ ու կանոնի, արտադրողականության և տնտեսության տեսանկյունից անհետաձգելի է, որ այդ տերությունը մանդատի ուժը տարածի նրանց վրա՝ ներկայի համար անլուծելի թողնելով նրանց ներքին սահմանների հարցը: Այս պետությունների վերջնական դիրքորոշումը և կառավարության ձևը, բացի այն, որ նրանք կարող են ձգտել ինքնավարության, բայց ոչ անպայմանորեն անկախության, մեր կարծիքով այժմ չպետք է բարձրաձայնվի: Նրանց ինքնակառավարվելու կարողությունը և բարեկամական, և գործող հարաբերություններ միմյանց միջև հաստատելու ունակությունը պետք է փորձարկվեն. այնպիսի ուժի վերահսկողության տակ, ինչպիսին կարող է լինել թշնամին: Այն հարկադրված է ստանձնելու վերահսկողություն՝ հանդիպելով հնարավոր անշնորհակալ ու երախտամոռ աշակերտների համար հովանավորության երկարատև շրջանի, շատ ծախսերի, հնարավոր դիվանագիտական դժվարությունների՝ կապված Ռուսաստանի վերակառուց-

efficiency, and economy that the same power shall exercise a mandate over them all, leaving for the present their interior boundaries unsettled. The ultimate disposition or form of government of these States, other than that they may look forward to autonomy but not necessarily independence, should in our opinion not now be announced. Their capacity for self-government and their ability to sustain amicable and workable relations among themselves remain to be tested under control by such power as may be induced to undertake its supervision, facing a long period of tutelage for possibly unappreciative and ungrateful pupils, much expense, probably diplomatic embarrassment from a reconstitution of Russia, and little reward except the consciousness of having contributed to the peace of the world and the rehabilitation of oppressed humanity.

ման հետ, և փոքր վարձատրության, բացի այն գիտակցությունից, որ իր ներդրումն է ունեցել աշխարհի խաղաղության և ճնշված մարդկության վերականգնման գործում:

Ազգերի Լիգայի պայմանագիրը նախատեսում է, որ «*նախկինում* Թուրքական կառավարությանը պատկանող որոշ համայնքներ» անորոշ ժամկետով պետք է ենթարկվեն որևէ տերության մանդատին՝ այդպիսով կարծես թե նախապես ճանաչելով այդ կայսրության որոշ չափով մասնատումը: Մա, կապված թուրքական կառավարության մեղադրանքի հետ ի պատասխան Խաղաղության Կոնֆերանսի՝ մասամբ մեջբերված մինչև 15 էջը (տես էջ 6), չի կարող անհիմն կերպով մեկնաբանվել կամ վերագրվել Թուրքական կայսրության որևէ հատվածի կամ բոլոր հատվածներին՝ նրանց զարգացման որոշակի մակարդակի հասնելուն զուգընթաց: Փաստացի մասնատման և իրենց ողջ երկրի նկատմամբ վերահսկողության միջև ընտրելիս թուրքերն անկասկած կնախընտրեին մանդատը ողջ կայսրության համար, ինչպես կարող էր լինել խաղաղության կոնֆերանսի դատավճռից հետո: Նրանց նման վատ, որոշ հարցերում պատկերացման նշույլից անգամ զուրկ մարդկանց պիտի թվար, թե չէր լինելու որևէ

The covenant of the League of Nations contemplates that “certain communities formerly belonging to the Turkish Empire” shall be subject to a mandatory power for an unstated period, thus appearing to recognize in advance the dismemberment to some degree of that Empire. (The italic is ours.) This, in connection with the arraignment of the Turkish Government in the reply of the peace conference, partly quoted on page 15 ante (see page 6), may not unreasonably be construed to apply to any or all parts of the Turkish Empire, as fast as they reach a certain stage of development. As between actual dismemberment and a receivership for his entire country, the Turk would beyond doubt prefer a mandatory for the whole Empire as it may stand after adjudication by the peace conference. Bad as he is, without the pale of consideration from many standpoints, there would seem to be no

առարկություն իրենց օգտին նախաձեռնած գործողությունների և այն քայլերի դեմ, որոնք իրականացվում էին ըստ իրենց նախապատվությունների, եթե աշխարհի շահերն ու միտումները նույն ուղղությամբ ընթանային:

Տերությունը, որ պիտի հանձն առներ Հայաստանի ու Անդրկովկասի մանդատը, առանց վերահսկելու սահմանակից տարածքները՝ Փոքր Ասիա - Անատոլիա - Կ. Պոլիս՝ իր Ռումելիա ներքին շրջանով, պետք է իրականացներ այն խիստ անբարենպաստ ու դժվարին պայմաններում, այնքան բարդ, ինչպես ծախսերը՝ գրեթե արգելքային, օրենքի, կարգ ու կանոնի, կյանքի և գույքի պահպանումը՝ անորոշ, վերջնական հաջողությունը՝ խիստ կասկածելի դարձնելը: Ինչ վերաբերում է իրական իշխանությանը՝ Կ. Պոլիսը ազատորեն ղեկավարող Օսմանյան կայսրության հետ այսպիսի իշխանությունը գործնականորեն թուլացած կլիներ: Սերունդներ ի վեր այս մարդիկ դիտել են Կ. Պոլիսը որպես իշխանության կենտրոն: Ամենախելացի ու փառասեր հայերը ձգտել են դեպի մայրաքաղաք, ինչպես կարիերայի: Կ. Պոլսի հայկական եկեղեցու Պատրիարքը, թեև վարդապետության հարցում էջմիածնի Կաթողիկոսին է ենթակա, բայց իրականում հայ ժողովրդի

objection to action taken in his interest and in line with his preference if the interest and inclination of the world lie in the same direction.

A power which should undertake a mandatory for Armenia and Transcaucasia without control of the contiguous territory of Asia Minor-Anatolia-and of Constantinople, with its hinterland of Roumelia, would undertake it under most unfavorable and trying conditions, so difficult as to make the cost almost prohibitive, the maintenance of law and order and the security of life and property uncertain, and ultimate success extremely doubtful. With the Turkish Empire still freely controlling Constantinople, such a power would be practically emasculated as far as real power is concerned. For generations these peoples have looked to Constantinople as the seat of authority. The most intelligent and ambitious Armenians have sought the capital as a career. The patriarch of the Armenian Church in Cons-

թաղաքական ղեկավարն է՝ Կ. Պոլսում իր տեղակայմամբ: Կայսրության յուրաքանչյուր ժողովուրդ իր բազմաթիվ ներկայացուցիչներն ունի մայրաքաղաքում. հայերի թիվն այնտեղ պատերազմից առաջ հասնում էր 150.000-ի, ովքեր իրենց գործարար կապերով սփռված էին ողջ երկրի ամենահեռավոր անկյուններում: Իրենց հարազատ երկրի ապագա առևտուրը և արդյունաբերական զարգացումը ոչ փոքր աստիճանով կախված է լինելու այս մարդկանցից: Կ. Պոլիսը տրանսպորտային ու առևտրային կենտրոն է: Մինչև պատերազմը Կ. Պոլիսը կարևորագույն նավահանգիստն էր Մայրցամաքային Եվրոպայում, որին վստահված էր նավային վավերագրերի հաստատումը: Կան լավ տեղեկացված գործարարներ, ովքեր հավատացած են, որ նրան վիճակված է դառնալ երրորդ առևտրային կարևորագույն քաղաքն աշխարհում: Բայց սերնդեսերունդ փոխանցվող ավանդույթի համաձայն, հաշվի չառնելով անգամ մանդատի առկայության հանգամանքը, Կ. Պոլիսը կշարունակի լինել ֆինանսական ու քաղաքական հոսանքների հորձանուտ: Կոնցեսիա որսը, ֆինանսական մեքենայությունը, քաղաքական շահագործումը և միջազգային մրցակցությունը կենտրոնանալու են այնտեղ ապագայում, ինչ-

Constantinople, although subordinate in matters of doctrine to the Catholicos at Etchmiadzin, is in reality the political head of the Armenian people by his location in Constantinople. Every people in the Empire is numerously represented at the capital, the Armenians reaching before the war the number of 150,000, with business connections ramifying to distant corners of the entire country. To no small degree the future business and industrial development of their native land will depend upon these men. Transportation lines and commerce center at Constantinople. Before the war Constantinople was the most important port in Continental Europe, reckoned upon the basis of shipping clearances. There are well-informed business men who believe it is destined to become the third most important commercial city in the world. But, through generations of habit, unless put under a mandatory, Constantinople will continue to be a whirlpool of financial and political currents. Concession hunting, financial intri-

պէս եղել է անցյալում: Կ. Պոլսի կառավարման համար համաձայնեցված միջազգային գործողությունն անիրագործելի է: Կառավարական գործունեության համար բոլոր ծրագրերը բարդ են. բոլոր ծրագրերը պետք է ունենան առաջնորդ՝ արդյունավետություն ապահովելու համար և, որտեղ դա հնարավոր է, համաձայնության գան մեկ իշխանության շուրջ, որը պետք է իսկապէս առաջնորդի, մանդատի իրականությունը պիտի գոյություն ունենա քողարկված ծրագրի խոչընդոտով: Կ. Պոլսի ապագա կառավարության համար ցանկացած ծրագրում դեռ գոյություն է ունենալու գայթակղություն միայնակ իշխանությունների համար խաղալ քաղաքականություն և օգնել Թուրքիային վարձատրության համար: Պետք է իրական վերահսկողություն սահմանվի, քանի որ պատասխանատվության ստանձնումն առանց իշխանության առկայության ավելի վատ է, քան անարդյունավետ արևելյան հայացքների տեր այդ երկրում:

Քանի որ ենթադրվում էր, որ ամերիկացիները պետք է լինեն անկողմնակալ, այս առաքելությունն արժանացավ տարբեր աղբյուրների վստահությանը: Թուրքերը կամ ծաղրածանակի էին ենթարկում օտարների ջանքերը, կամ ողբում էին իրենց դժբախտ կայսրության

gue, political exploitation, and international rivalries will center there in the future as in the past. Concerted international action for administration of Constantinople is impracticable. All concerts for governmental action are cumbersome; all concerts must have a leader to secure effectiveness, and were it possible to agree upon one power which should really lead, the reality of a mandate would exist with the handicap of a camouflage concert. In any concert for the future government of Constantinople there would still exist the temptation for single powers to play politics and befriend Turkey for value received. There must be actual control, for responsibility without authority is worse than useless in a land of oriental viewpoints.

As Americans supposed to be disinterested, this mission was the recipient of confidences from the various sources. Turks when not deriding foreign efforts were deploring their effect on their unfortunate Empire. Without dependable centra-

լրա նրանց թողած ազդեցության պատճառով: Առանց հուսալի կենտրոնացված վերահսկողության Կ. Պոլսի վրա Հայաստանի մանդատն իրականացնող իշխանությունը խեղված կլինի կառավարման մեջ, սահմանափակված առևտրի զարգացման մեջ, տանջահար կոնցեսիոների կողմից, կախված թուրքական վարկաբեկված դիվանագիտությունից տեղական և սահմանային դժգոհությունների փոխհաստուցման համար և, ծայրահեղ դեպքում, գործնականորեն կտրված արևմտյան աշխարհի հետ հաղորդակցությունից: Ենթադրվում է, որ դաշնակցային տրամադրություններն այնքան հստակ են Կ. Պոլսի՝ մանդատի տակ դրվելու հարցում, որ կարելի է հանգիստ լինել սույն զեկույցի նպատակների համար, որ այն կիրականացվի:

Ընդունելով, որ Հայաստանի և Անդրկովկասի համար պետք է լինի մեկ մանդատ և մեկն էլ՝ Կ. Պոլսի և Անատոլիայի համար, կան բազմաթիվ նկատառումներ, որոնք ընդգծում են, որ նման մանդատներ ունենալու բաղձալիությունն իրականացվում է նույն ուժի կողմից: Եթե առանձին իշխանություններ նման մանդատ իրականացնեին, անխուսափելի նախանձր, ատելությունը, չափազանցված անջատողական միտումները և տնտեսական

lized control of Constantinople, a power exercising mandate in Armenia would be crippled in administration, restricted in trade development, ridden by concessionaires, dependent on Turkish discredited diplomacy for redress of local and boundary grievances, and in extreme case practically cut off from communication with the western world. It is believed that allied sentiment is so crystallized in the opinion that Constantinople must be placed under a mandatory that it may safely be assumed for the purposes of this report that this will be done.

Conceded that there shall be a mandate for Armenia and Transcaucasia and one for Constantinople and Anatolia, there are many considerations that indicate the desirability of having such mandates exercised by the same power. If separate powers exercised such mandate the inevitable jealousies, hatreds, exaggerated separatist tendencies, and economic difficulties would com-

դժվարությունները կտանեին ձախողման: Իր բոլոր սխալներով Թուրքական կայսրությունը գոյություն ունեցող ինստիտուտ է և ունի որոշակի ժանգոտած արյունաներկ քաղաքական մեխանիզմ, որը կարող է գործի դրվել ուժեղ մանդատի վերահսկողության տակ: Այս խնդրի մասնակից ժողովուրդները բնավում են կից տարածքներում և հարևաններ են՝ անկախ նրանից ուզում են նրանք դա, թե ոչ: Թուրքական կայսրության ու Անդրկովկասի համար մեկ մանդատը ամենաձեռնտու լուծումը կլիներ: Առանց ընդլայնման դեպի Անատոլիա Անդրկովկասի ու Հայաստանի երկաթուղային զարգացման ոչ մի խելամիտ նախագիծ չի կարող մշակվել: Հայաստանի բարձր լեռների միջով բնական մայրուղիները քիչ են, և տրանսպորտային զարգացումը, համապատասխան սնուցիչներով, լավագույն դեպքում կլինի ծախսատար և դժվարին, առանց Անատոլիա մուտքի դա կլինի անհնար: Երկար տարիներ շահագործման ծախսերը համարժեք չեն լինի եկամուտներին: Այս իրավիճակը կարելի է թեթևացնել երկու շրջանների վերահսկողությամբ: Եթե Կ. Պոլիսը, Անատոլիան և Հայաստանը լինեին տարբեր ձեռքերում, Հայաստանի արտադրողներն ու արտահանողները չէին կարողանա հավասար

pel failure. With all its faults the Turkish Empire is an existing institution and it has some rusty blood-stained political machinery which under control of a strong mandatory can be made to function. The peoples in question live in adjacent territory and whether they wish it or not are neighbors. A single mandatory for the Turkish Empire and the Trans-caucasus would be the most economical solution. No intelligent scheme for development of railroads for Transcaucasia and Armenia can be worked out without extension into Anatolia. Natural highways through the high mountains of Armenia are few, and transportation development will, with proper feeders, at best be costly and difficult; without access into Anatolia it will be impossible. For many years the expenses of exploitation will not be met by equivalent receipts. This situation would be alleviated by control of both regions. With Constantinople, Anatolia, and Armenia in different hands, the manufacturers and exporters of Armenia could not hope for an equal

մասնաբաժնի հույս ունենալ Մերձավոր Արևելքի առևտրի և վաճառականության հարցում:

Հայոց Պատրիարքը՝ հայ բողոքականների գլխավորը, և ուրիշներ Կ. Պոլսում Հայաստանից մեր վերադարձի ժամանակ բարձրաձայնում ու վկայակոչում էին այն մասին, որ Հայկական հարցը չէր կարող լուծվել այդ երկրի սահմաններում, և որ նրանք պատրաստ են անցնել մեկ մանդատի տակ, որը կընդգրկի նաև Թուրքական կայսրության մյուս հատվածները: Ավելի ուշ արված գրավոր հայտարարությունում, ինչևէ², նրանք վերաձևակերպել են սա՝ ասելով, որ թեև «այս կայսրության տարբեր ազգեր կարող են վայելել նույն մանդատարար ուժի օժանդակությունը», նրանք զգում են, որ Հայաստանը մտցնելը նույն կառավարական համակարգի մեջ, ինչ թուրքերինն է, կչքացներ հայկական իդեալների զարգացման առարկան, «քանի որ ապահովելով մի ժողովրդի անհատական իրավունքները, նույն ժողովրդի ազգային իրավունքները և իդեալները չեն կարող անպայմանորեն պահպանվել», որ «ողջ Թուրքական Կայսրությանը լավ կառավարում տալը չի

share in the commerce and trade of the Near East.

The Armenian Patriarch, the head of the Armenian Protestants, and others at Constantinople, on our return from Armenia, called and volunteered the belief that the Armenian question could not be settled within the boundaries of that country, and that they were prepared to pass under a single mandate which should include the other parts of the Turkish Empire. In a later written statement, however³, they modified this, stating that while “Different nations of this Empire may enjoy the help of the same mandatory power” they felt that to bring Armenia under the same system of administration as that of the Turks would defeat the object of the development of Armenian ideals, “because by assuring the individual rights of a people the national rights and ideals of the same people can not necessarily be assured”; that

² Տե՛ս Ցուցանմուշ Բ, կից նամակ Հայոց Պատրիարքից, հայոց Կաթոլիկ Պատրիարքարան և Հայ բողոքական համայնքի փոխանորդ, 15 հոկտեմբերի 1919:

³ See Exhibit B, joint letter, Oct. 15, 1919, from Armenian Patriarch, Catholic Armenian Patriarchat, and the Vekil of Armenian Protestant Community.

դրդի հայերին հավաքվել իրենց հայրենի հողում: Նրանք այդպես էլ կմնան ցիրուցան ժողովուրդ և այլն»: Հայտնի երևելի թուրքերի մի խումբ, այդ թվում նախկին կառավարության նախարարը, որը բարձր դիրք էր զբաղեցնում և շուրջ ութ տարի Եվրոպական դատարաններից մեկում իր երկիրը ներկայացնող մի պաշտոնյա էր, հայտարարեց, թե Թուրքիայի անկախությունից, ինչպիսին էր այն 1914 թ., և Կայսրության համար մանդատից, որը տրվել էր Միացյալ Նահանգներին, նրանք մեծապես նախընտրում են վերջինը և հավատացած են, որ հանդես են գալիս ողջ Թուրքիայի կրթված դասի անունից:

Այս առաքելության համար միանգամայն ակնհայտ է, որ Թուրքիան չէր առարկի իր տարածքում մեկ անաչառ մանդատի իրագործմանը, ինչպես նշված է դաշնակիցների հետ կնքած զինադադարում, և որ դա կարող է իրականացվել փոքրաթիվ օտարերկրյա զինվորականներով, որտեղ որևէ կոնկրետ շրջանի տարածքի ստեղծումը կնշանակեր տարիներ շարունակ որևէ արտաքին ուժ մշտական օկուպացիայի մեջ: Ազգայնականների կամ Ազգային Պաշտպանություն Կուսակցության նպատակը, ինչպես որակել են այն դրա հետևորդները և ինչպես նշել է կուսակցության ղեկավար

“Giving a good government to the whole Turkish Empire will not induce the Armenians to gather to their native land. They will still be a scattered people, etc.” A party of distinguished Turks, including a former cabinet minister of high standing and a diplomat who for eight years represented his country at one of the European courts, stated that as between the independence of Turkey as it existed in 1914, and a mandate for the Empire given to the United States they greatly preferred the latter, and believed that they spoke for the educated classes of all Turkey.

It has been very evident to this mission that Turkey would not object to a single disinterested power taking a mandate for her territory as outlined in the armistice with the Allies, and that it could be accomplished with a minimum of foreign soldiery, where an attempt to carve out territory for any particular region would mean a strong foreign force in constant occupation for many years. The aim of the Nationalist, or National Defense Party, as its adherents style it, as stated by Musta-

Մուստաֆա Քեմալ փաշան, կայսրության տարածքային ամբողջականության պահպանումն է մեկ անկողմնակալ իշխանության, ցանկալի է Ամերիկայի մանդատի ներքո:

Մինչ առաքելությունը Սվազում էր, խորհրդակցություն տեղի ունեցավ այս կուսակցության ղեկավարների հետ, որը համագումար է անցկացրել Էրզրումում հուլիսին և Սվազում՝ սեպտեմբերին: Այս շարժումը բազմաթիվ մտավախությունների պատճառ դարձավ նրանց համար, ովքեր հետաքրքրված են հայերի ճակատագրով, ում ապահովությունը, ենթադրվում է, վտանգված է: Առաջնորդ Մուստաֆա Քեմալ փաշան թուրքական բանակի նախկին գլխավոր սպա է, որն աչքի ընկնող հրամանատարություն է իրականացրել Դարդանելի գոբաբանակում և թվում է ուժեղ, և սուր մտքի տեր երիտասարդ: Ինչպես ենթադրվում է նա ազատվել է զինվորական ծառայությունից այս շարժումն առաջնորդելու նպատակով: Որպես վերջնանպատակ նա ձգտում էր տապալել Ֆերիդ փաշայի կաբինետը, որն ընկավ՝ պնդելով, որ դա ամբողջովին մեծ տերություններից մեկի ազդեցության տակ էր, ով ինքն է ցանկանում ստանձնել կայսրության մանդատը: Մինչ Սուլթանին լիարժեք հավա-

pha Kemal Pasha, its head, is the preservation of the territorial integrity of the Empire under a mandatory of a single disinterested power, preferably America.

The mission, while at Sivas, had a conference with the chiefs of this party, which held a congress at Erzerum in July and one at Sivas in September. This movement has been the cause of much apprehension on the part of those interested in the fate of the Armenians, to whose safety it has been supposed to portend danger. The leader, Mustapha Kemal Pasha, is a former general officer in the Turkish Army, who commanded with distinction an army corps at the Dardanelles, and appears to be a young man of force and keen intelligence. He is supposed to have resigned from the army to lead this movement. It sought, as a means to its end, the overthrow of the Ferid Pasha cabinet, which has since fallen, claiming that it was entirely under the influence of one of the great powers which itself desires a mandate for the Empire. While professing entire loyalty to

տարմությունն արտահայտելը ազգայնական առաջնորդը գնացել էր ծայրահեղության՝ կտրելով մայրաքաղաքի ու երկրի ներքին շրջանների միջև պաշտոնական հեռագրային հաղորդակցության բոլոր միջոցները՝ ակնկալելով կաբինետի հեռացումը: Հոկտեմբերին Դամադ Ֆերիդ փաշայի մինիստրության անկումը, թվում է՝ պետք է թողներ կայսրությունն առանց շարժման ետևում, քանի որ թուրքական ներքին գործերի պաշտոնյաներն արդեն կողմնորոշվել էին այդ հարցում: Հոկտեմբերի 15-ին արված հայտարարությունում Մուստաֆա Քեմալն⁴ ասել է.

«Ազգայնական կուսակցությունը ճանաչել է անաչառ օտար երկրի օգնության անհրաժեշտությունը: Մեր նպատակն է ապահովել Թուրքիայի զարգացումը, քանի որ այն զինադադարի մեջ է: Մենք չունենք

⁴ Տես ցուցանմուշ Գ, Մուստաֆա Քեմալ փաշայի պաշտոնական հայտարարությունը կազմակերպության, օբյեկտների (իրերի), Անատոլիայի և Ռումիների իրավունքների պաշտպանության լիգայի վերաբերյալ: Ցուցանմուշ Դ գն. Հարբորդի նամակը ուղղված Մուստաֆա Քեմալին, հոկ 9, 1919: Ցուցանմուշ Ե Սվազի Կոնգրեսի հայտարարությունը: Ցուցանմուշ Զ Սվազի Ազգային Կոնգրեսի որոշումը ուղղված ԱՄՆ-ի սենատին պահանջելով, որ Սենատի կոմիտեն այցելի և ուսումնասիրի պայմանները Օսմանյան կայսրության տարածքով մեկ:

⁵ See Exhibits "C," Statement of Mustapha Kemal Pasha concerning organization, objects, "League for the Defense of the Rights of Anatolia and Roumelia"; "D," Gen. Harbord's letter, Oct. 9, 1919, to Mustapha Kemal; "E," Declaration of the Congress of Sivas; "F," Resolution of National Congress of Sivas addressed to Senate of the United States of America requesting that senatorial committee visit and investigate conditions within Ottoman Empire. S D-66-2- vol 15-34

the Sultan the Nationalist leader had gone to the extremity of cutting all official telegraph communications between the capital and the interior, pending the removal of the cabinet. The fall of the Damad Ferid Pasha ministry in October would seem to put the Empire behind the movement, for the Turkish officials in the interior were already identified with it. In a statement given out on October 15, Mustapha Kemal⁵ said:

The Nationalist Party recognized the necessity of the aid of an impartial foreign country. It is our aim to secure the development of Turkey as she stood at the

ծավալապաշտական ծրագրեր, բայց մեր խորին համոզմամբ Թուրքիան կարող է լինել հարուստ և ծաղկուն երկիր, եթե լավ կառավարություն ունենա: Մեր կառավարությունը թուլացավ օտար միջամտությունների ու բանսարկությունների արդյունքում: Մեր ողջ փորձառությունը հաշվի առնելով՝ վստահ ենք, որ Ամերիկյան միակ երկիրն է, որ կարող է մեզ օգնել: Մենք երաշխավորում ենք, որ թուրքերի կողմից հայերի նկատմամբ նոր բռնություններ տեղի չեն ունենա:

Ձայնունիայում հունական շրջափակման հետ կապված իրադարձությունները և որոշ եվրոպական ուժերի գործունեության և քարոզչության հետևանքով ստեղծված շփոթությունն այնպիսի խառնաշփոթ են ստեղծել թուրք ժողովրդի շրջանում զինադադարից հետո տևած երկար ժամանակամիջոցում, որ առաքելությունը մտավախություն ունի, թե այս պահին հայկական պետությունը Թուրքիայից առանձնացնելու մտադրության մասին Փարիզից եկած հայտարարությունը եթե չկանխվի ողջ կայսրության ուժեղ ռազմական շրջափակմամբ, կարող է քրիստոնյաների կոտորածների ազդանշան լինել երկրի բոլոր հատվածներում: Խոհեմություն չկա ներկայումս թուրքական տարածքը կցել անջատ Հայաստա-

armistice. We have no expansionist plans, but it is our conviction that Turkey can be made a rich and prosperous country if she can get a good government. Our Government has become weakened through foreign interference and intrigues. After all our experience we are sure that America is the only country able to help us. We guarantee no new Turkish violences against the Armenians will take place.

The events of the Greek occupation of Smyrna and the uneasiness produced by the activities and propaganda of certain European powers have so stirred the Turkish people in the long interval since the armistice that the mission fears that an announcement from Paris at this time of an intention to carve from Turkey a State of Armenia, unless preceded by a strong military occupation of the whole Empire, might be the signal for massacres of Christians in every part of the country. There is no wisdom in now incorporating Turkish territory in a separate Armenia, no matter what the aspirations of the Armenians.

նին, անկախ նրանից, թե ինչ ձգտումներ ունեն հայերը: Իհարկե, իմաստ չունի անհանգստություններ հրահրել, ինչից կարելի է խուսափել մանդատի ենթակա շրջանը մեկ իշխանության տակ կենտրոնացնելով: Մեկ մանդատի ներքո նրանք հարևաններ կլինեն: Եթե մանդատարարները լինեն երկու կամ ավելին, նրանք կլինեն թշնամիներ՝ իրենց միջև փոքր տարաձայնությունները վերածելով դիվանագիտական ներկայացուցչության անվերջանալի գործընթացների՝ կառավարական գործունեության բազմաթիվ ոլորտներում կրկնօրինակ և համանման հաստատությունների պահպանմամբ: Միայն մեկ մանդատարարի իշխանության դեպքում վերջնական սահմաններ գծելու հարցը կհետաձգվի, ինչը, հավատացած է առաքելությունը, կարևոր է:

Թուրքական կայսրությունից անկախ Հայաստան առանձնացնելու առաջարկության մեջ թուրքերին հավելելու մի բան կա. այն է, որ իր ժողովուրդը, անգամ երբ բոլոր փախստականները վերադառնային իրենց տները, կլինեն վերականգնված Հայաստանի համար նախատեսված տարածքում մեծամասնության մեջ և նրանք մեծամասնության մեջ էին նաև տեղահանումներն սկսելուց առաջ՝ չնայած անգամ (ինչը շատ հնարավոր է)

Certainly it is unwise to invite trouble which may be avoided by the consolidation of the mandate region under a single power. Under one mandatory they will be neighbors. Under two or more they will be rivals, their small differences subjected to the interminable processes of diplomatic representation, with the maintenance of duplicate and parallel establishments in many lines of governmental activity. Only under a single mandatory can the matter of ultimate boundaries be deferred, which is believed by this mission to be important.

In the proposition to carve an independent Armenia from the Ottoman Empire there is something to be said on the part of the Turk; namely, that his people even when all the refugees shall have returned to their homes, will be in the majority in the region contemplated for a reconstituted Armenia – and they were in the majority before the deportations took place – even

նահանգային սահմանների հարցում նենգափոխումներին ու մարդկանց մասնակի բնաջնջմանը: (Օսմանյան վարչական բաժանումն իրականացվել է խտրական, չնայած դրան այն տեսակետը, թե թուրքերը մեծամասնություն էին ցեղասպանությունից առաջ, իրավացի չէ: - Ա. Ղ.): Եվ չնայած հայերի բազմաթիվ գնահատելի որակներին, նրանց մշակույթին, ռասայի և կրոնի հաստատակամությանը, հայերն ընդհանրապես չեն ստիպում իրենց սիրել այն ազգերին, ում հետ առնչվում են: Հայ ժողովուրդը կանգնած է իր հարևանների միջև այնպես, ինչպես հրեաները Ռուսաստանում և Լեհաստանում՝ ունենալով այդ ազգի ուժեղ և աչքի ընկնող ունակությունները: Նրանք պատուհասվում են տուգանքներից իրենցից հետադեմ ազգերի ներկայացուցիչ բանկրիտների, միջնորդների, պահանջատերերի, բաժնետերերի կողմից: Հետևյալ անարդարացի կարծիքը կա հայերի վերաբերյալ Մերձավոր Արևելքում. «Հայերն իրավաբանորեն երբեք սխալ չեն և բարոյապես երբեք ճիշտ չեն»: Անգամ Ամերիկյան առաքելությունը, որ շատ անգամներ վտանգել է կյանքը իր՝ հայերի հանդեպ հոգատարության համար, որպես կանոն անձնապես չի սիրում հայերին, ինչպես նաև ավելի բարեհաճ, բայց ծույլ ու հաճույքներով առաջ-

though due, as it may be, to the gerrymandering of provincial boundaries and the partial extermination of a people. Notwithstanding his many estimable qualities, his culture, and his tenacity of race and religion, the Armenian generally does not endear himself to those of other races with whom he comes in contact. The Armenian stands among his neighbors very much as the Jew stands in Russia and Poland, having as he does, the strong and preeminent ability of that race. He incurs the penalty which attaches among backward races to the banker, the middleman, and the creditor. Unjust as it may be, the sentiment regarding him is expressed by this saying current in the Near East: "The Armenian is never legally in the wrong; never morally in the right." Even the American missionary, who in so many instances has risked his life for his Armenian charges, does not as a rule personally like the Armenian as well as he does the more genial but indolent and pleasure-loving Turk. The Armenian is not guilt-

նորդվող թուրքերին: Հայերն իրենք անմեղ չեն արյունահեղության մեջ. նրանք լավ հիշողություն ունեն և բռնաճնշումները սպասված են ու տեղի կունենան, եթե հնարավորություն լինի: Ռասայական առումով դաշնակից լինելով արիական քրդերի հետ, նրանք վերջիններիս կողմից անհուն ատելության են արժանացած: Քրդերն արտասուքն աչքերին դիմել են այս առաքելությանը՝ խնդրելով պաշտպանել իրենց հայերից, ովքեր քշել են իրենց գյուղերից, իրենց տներ վերադառնալու թույլտվություն հայցելով, որպեսզի պաշտպանվեն ցրտաշունչ ձմռանից, որ արագորեն մոտենում էր բարձրալեռնային գոտիներին: Քրդերը պնդում են, որ իրենցից շատերն ամենադաժան պայմաններում կոտորվել են հայկական անկանոն զորքերի կողմից, որոնք ուղեկցում էին ռուս բոլշևիկներին, երբ ռուսական բանակը մասնատվեց կայսրության անկումից հետո:

Նմանատիպ հայց ներկայացրել են էրզրումի ժողովուրդները, ովքեր մատնանշում են հրկիզված տներ, որտեղ հարյուրավոր թուրքեր են մահացել և Հասան Քալայի իշխանությունները, ովքեր իրենց հսկայական հարթավայրում հայերի կողմից ավերված գյուղերի թիվը նշում են որպես 43: Ըստ Բրիտանական հյուպատոս Սթիվենսի, Բաթու-

less of blood himself; his memory is long and reprisals are due, and will doubtless be made if opportunity offers. Racially allied to the wild Aryan Kurd he is cordially hated by the latter. Kurds appealed to this mission with tears in their eyes to protect them from Armenians who had driven them from their villages, appealing to be allowed to go back to their homes for protection against the rigorous winter now rapidly approaching on the high interior plateau. The Kurds claim that many of their people were massacred under the most cruel circumstances by Armenian irregulars accompanying the Russian Bolsheviks when the Russian Army went to pieces after the collapse of the empire.

Similar claim is made by the people of Erzerum, who point to burned buildings in which hundreds of Turks perished, and by the authorities of Hassan-Kala, who give the number of villages destroyed by the Armenians in their great plain as 43. According to British Consul Stevens, at Batum, these

միում այս հայտարարությունները վավերացվել են մի հանձնաժողովի կողմից, որը քննել է գործերը և որտեղ հայերը ներկայացուցություն ունեն: Բաքվում 1918 թ. մարտին հայերի կողմից 2000 ադրբեջանցիների ջարդին հետևել է նույն տարվա նոյեմբերին ադրբեջանցիների կողմից իրականացված 4000 հայերի կոտորածը: Այս առաքելության կարծիքով հայերի ինքնակառավարվելու ունակությունը պետք է վերահսկվի: Այդ ամենը հաշվի առնելով՝ փոքրամասնություն կազմող հայերի իշխանության հնարավորության կասկածելի լինելը մահմեդական մեծամասնության նկատմամբ, ում դեմ նրանց սրտերը լցված են ռիսակալությամբ դարավոր բռնապետության պատճառով, միանգամայն կարող է արդարացնել մտավախությունը: Շատերը կարծում են, որ հայ ազգի լավագույն հատվածը բնաջնջված է: Կարծիք կա, որ իրենց հայրենի երկրում կարգ ու կանոնի վերահաստատմամբ այլ երկրներ գաղթած հայերից շատերը կվերադառնան: Դա, ինչևէ, կարող է տեղի ունենալ միայն ժամանակի ընթացքում, և անգամ այդ դեպքում կասկածելի է, թե արդյոք հարուստ և ազդեցիկ հայերից շատերը, որ երկար ժամանակ բնակվել են ավելի երջանիկ երկրներում, կվերադառ-

statements were verified by a commission which examined into the allegations and on which Armenians had a representation. In Baku the massacre of 2,000 Azarbaijane by Armenians in March, 1918, was followed by the killing of 4,000 Armenians by Azarbaijane in November of the same year. From the standpoint of this mission the capacity of the Armenian to govern himself is something to be tested under supervision. With that still in doubt the possibility of an Armenian minority being given authority over a Moslem majority against whom its hearts are filled with rancor for centuries of tyranny, may well justify apprehension. There are very many who believe that the best elements of the Armenian race have perished. It is believed that with the reestablishment of order in their native country many of those who have emigrated to other countries will return. That, however, can only come with time, and even then it is doubted if many of the wealthy and influential Armenians long domiciled in happier lands

նան իրենց որոշ չափով հասարակ, հին տները, անգամ եթե ինքնավար Հայաստանի համար պայքարում նրանց ձայնը բոլորից բարձր է հնչել: Բհարկե, Անատոլիայի կողմում կամայական սահմաններով, որոշված միայն հայերի ցանկություններով, նպատակահարմարությամբ, ավանդություններով կամ անգամ նախկին օկուպացիայի՝ վավերացված պատմական պահանջներով, առանց հաշվի առնելու ներկայիս բնակչությանը, և Անատոլիայի, և Հայաստանի մանդատային իշխանությունները պետք է սկսեն կառավարվել՝ վստահելի օտարերկրյա զինվորների կորդոն դնելով Սև ծովից մինչև Միջերկրական ծով: Ժողովուրդների և նրանց սահմանների վրա մեկ իշխանության հաստատմամբ, բացի այն հատվածից, որտեղ նրանք մինչև հիմա ապրել են, նման դժվարություններ չպետք է ծագեին: Իշխանության նման համակցության և սահմանազատման հետաձգման պայմաններում շատերը խորապես հավատացած էին, որ թուրքերն իրենց խնամակալության ավարտին էլ կմնան նույն թուրքերը՝ *արևախում, չվերածնվող ու ռիսակալ*, և որ անհավատալի է, որ հայերը երբևէ կրկին կազմեն մի երկրի մաս, որ կարող է կառավարվել նրա կողմից, որ դարավոր չարչարանքները վերջ կու-

will return to their somewhat primitive ancient home, even though such absentees have raised their voices most loudly for an autonomous Armenia. Certainly with arbitrary boundaries on the Anatolia side determined only by Armenian wishes, expediency, tradition, or even verified historical claims of former occupation, without regard to the present population, the mandatory powers for both Anatolia and Armenia should inaugurate government by placing a cordon of trustworthy foreign soldiers from the Black Sea to the Mediterranean. With a single power in control of both peoples and boundaries unannounced except as they have hitherto existed, such difficulties would not arise. Against such combination of authority and postponement of delimitation of boundaries is to be weighed the unchangeable belief of many that the Turk at the end of his tutelage will still be the Turk, bloodthirsty, unregenerate, and revengeful, and that it is unthinkable that Armenia shall ever again form part of a country

նենան Թուրքիայից Հայաստանի հստակ և վերջնական բաժանումով, և որ այս ծրագիրը, թվում է, անորոշ տևողության խնամակալություն է նախատեսում: Մրա պատասխանն այն է, որ հայերը չպետք է երկյուղեն ներկայացնել իրենց խնդիրն Ազգերի Լիգային՝ աշխարհի դատարանին, և որ նա պետք է միաժամանակ ապացուցի, որ ունակ է կառավարել ոչ միայն ինքն իրեն, այլ նաև ուրիշներին, և որ մեծ տերությունների թելադրանքով հանրաքվե կարող է անցկացվել և մանդատը կարող է ավարտվել ցանկացած ժամանակ Անատոլիայից իր տարածքի անջատմամբ, ինչպես և այժմ ի ավելի մեծ ապահովություն իրենց և ի հարմարություն իրենց հովանավորների:

Հայաստանի մասով ամերիկյան զինվորական առաքելության եզրակացությունն այն է, որ Հայաստանում և Անդրկովկասում գոյություն ունեցող իրավիճակից ելքը մեկ խոշոր տերության կողմից իրականացվող մանդատն է: Հայկական հարցը Հայաստանում չի կարող կարգավորվել, այն չի կարող վերջնականապես հարթվել առանց երկու հարցի պատասխանելու.

which may be governed by him; that the sufferings of centuries should now be terminated by definite and permanent separation of Armenia from Turkey, and that this plan seems to contemplate a tutelage of indefinite length. To this the reply is that the Armenian should have no fear to submit his case to the League of Nations – the court of the world – and that he must in the meantime prove his capacity not only to govern himself but others, and that at the behest of the great powers a plebiscite could be had and the mandatory at any time be terminated by detachment of his territory from Anatolia as well as now and with much greater safety to him and convenience to his benefactors.

The conclusion of the American military mission to Armenia is that the remedy for the existing conditions in Armenia and the Transcaucasus is a mandatory control to be exercised by a single-great power. The Armenian question can not be settled in Armenia, It can not be finally settled without answering two questions:

Ի՞նչ պետք է լինի Թուրքիայի հետ:

Ի՞նչ է պատրաստվում անել Ռուսաստանը:

Մինչ այս հարցերի վերջնական կարգավորումը՝ առաքելությունը հավատացած է, որ վերոնշյալ պատճառներից ելնելով, այն տերությունը, որ կվերցնի Հայաստանի մանդատը, պետք է իրականացնի նաև Անատոլիայի, Ռումելիայի, Կ. Պոլսի և Անդրկովկասի մանդատները: Հայաստանի և Անատոլիայի թուրքական վիլայեթները և Ռուսահայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի ներքին սահմանները, ըստ էության, կմնան այնպես, ինչպես դրանք ներկայում են: Այսպիսի մանդատի դիվիզիաները վարչական էլեմենտներ են, որոնք պետք է կազմվեն մանդատային իշխանության կողմից: Լավ կառավարությունը ենթադրում է, որ որևէ միջանկյալ իշխանություն պետք է գոյություն ունենա նահանգների ու մայրաքաղաքի միջև: Նման մանդատի բնական ստորաբաժանումը, ինչպես նշվել է, հավանաբար կլինի այսպիսին. Ռումելիա, ք. Կ. Պոլիս (դաշնային շրջան), Անատոլիա, Հայաստան, Անդրկովկասյան տարածաշրջան (առանց Ռուսահայաստանի):

What is to be done with Turkey?

What is Russia going to do?

Pending the ultimate settlement of these questions the mission believes that, for reasons set forth, the power which takes a mandate for Armenia should also exercise a mandate for Anatolia, Roumelia, Constantinople, and Transcaucasia; the boundaries of the Turkish vilayets of Armenia and Anatolia and the interior boundaries of Russian Armenia, Georgia, and Azarbaijan to remain substantially as they are for the present. The divisions of such mandate are an administrative detail to be worked out by the mandatory power. Good administration indicates that there should be some intermediate authority between the provinces and the capital. A natural subdivision of such a mandate as has been indicated would probably be: Roumelia, city of Constantinople (federal district), Anatolia, Armenia, district of Transcaucasia (less Russian Armenia).

Ողջ Թուրքական կայսրության ներառումը մեկ մանդատի կառավարության մեջ ավելի հեշտ և հավանաբար ավելի ձեռնտու կլինի, քան դրա բաժանումը: Արդարացիորեն իրականացված հանրաքվեն, ամենայն հավանականությամբ, պիտի խնդրի ամերիկյան մանդատ ողջ կայսրության համար: Միրիան և Միջագետքը, ինչևէ, կարևոր չհամարվելով Հայկական հարցի լուծման համար կամ հնարավոր ամերիկյան պատասխանատվությունների և հետաքրքրությունների դաշտ լինելով Մերձավոր Արևելքում, ինչպես նախատեսված է առաքելության հանձնարարականներում Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի կողմից ներկայումս շրջափակված լինելու պատճառով՝ մեր նկատառումներից դուրս են մնացել, ինչպես Արաբիան նույն պատճառով: Իր համոզման մեջ, որ Հայկական հարցը կարող է լուծվել միայն մանդատի միջոցով, որը պետք է ընդգրկի նաև Կ. Պոլիսը, Անատոլիան, Թուրքահայաստանն ու Անդրկովկասը, առաքելությունն ունի ամերիկացի շատ գաղափարակիցներ, որոնց հայացքները Մերձավոր Արևելքում երկարաժամկետ բնակության շնորհիվ մեծ կշիռ ունեն: Այս ամերիկացիները գործնականորեն միաբան են այն հարցում, որ Հայաստանի, Անատո-

The inclusion of the whole Turkish Empire under the government of a single mandatory would be simpler and proportionately more economical than to divide it. A plebiscite fairly taken would in all probability ask for an American mandate throughout the Empire. Syria and Mesopotamia, however, not being considered essential to the settlement of the Armenian question or as being the field for possible American responsibilities and interests in the Near East as contemplated in the instructions to the mission, because actually occupied by France and Great Britain at this time, have been considered by us as excluded from our considerations, as is for a similar reason Arabia. In its belief that the Armenian problem is only to be solved by a mandatory which should include also. Constantinople, Anatolia, Turkish Armenia, and the Transcaucasus, the mission has the concurrence of many Americans whose views by reason of long residence in the Near East are entitled to great weight. Such Ameri-

լիայի, Կ.Պոլսի և Անդրկովկասի խնդիրները պետք է համարվեն մի անքակտելի ամբողջություն:

Առաքելությունը խորապես հանգրված է, որ գործընկերների խրախուսանքով նման մանդատ ձեռնարկող ազգը պետք է պատրաստ լինի անսասան կերպով իրականացնել շարունակական քաղաքականություն գոնե մեկ սերնդի համար և ուղարկի իր միայն ամենաշնորհալի զավակներին հրամանատարության՝ անկախ քաղաքական պատկանելությունից: Միայն նման անկողմնակալ քաղաքականության կայուն շարունակական բնույթի որոշակիությամբ լավագույն գործիչները կթողնեն իրենց կարիերան սեփական երկրում և հանձն կանեն նման պատասխանատվություն այս արևելյան ամերում: Ոչ մի անշահախնդիր ազգ չի ձեռնարկի նման մանդատ, բացի այնպիսի մեկից, որն ունի այլասիրության ուժեղ զգացում և աշխարհի խաղաղության համար միջազգային պարտքի զգացում այս տարածքում, որտեղ պատերազմներ են աճում և Ազգերի Լիգայի դաշինքի մյուս կողմերի միաձայն ցանկությամբ:

Ժամանակակից շրջանի ոչ մի պարտականություն չպետք է ձեռ-

cans are practically a unit in believing that the problems of Armenia, Anatolia, Constantinople, and Transcaucasia must be considered as an inseparable whole.

The mission has a strong conviction that the nation which may be induced by its colleagues to undertake this mandate should be one prepared to steadfastly carry out a continuity of policy for at least a generation, and to send only its most gifted sons to leadership in the work without regard to political affiliations. Only on the certainty of continuity of a nonpartisan policy would the best men forsake their careers in their own country to take up its burdens in these eastern lands. No disinterested nation would undertake such a mandatory except from a strong sense of altruism and international duty to the peace of the world in this breeding place of wars and at the unanimous wish of other parties to the covenant of the League of Nations.

No duty of modern times would be undertaken under

նարկվի հրապարակայնության այդքան բուռն քննարկումների ներքո: Նման ազգը կլինի միջազգային ուշադրության կենտրոնում՝ իր վրա սևեռելով յուրաքանչյուր արտգործնախարարության կամ եկեղեցական մարմնի ուշադրությունը: Ոչ մի ազգ իրեն չպիտի թույլ տա ձախողում կամ նահանջ, երբ մեկ անգամ ստանձնել է այսպիսի դժվարագույն ու կարևոր խնդիր, որը ծագել է մեծ պատերազմից: Ոչ մի ազգ, որ ընդունակ չէ միաբան և անկողմնակալ երկարատև գործունեության, չպետք է նախաձեռնի դա:

so fierce a glare of publicity. Such nation would hold the center of the international stage with the spotlight from every foreign office and from every church steeple in the world focussed upon it. No nation could afford to fail, or to withdraw when once committed to this most serious and difficult problem growing out of the great war. No nation incapable of united and nonpartisan action for a long period should undertake it.

ԹՈՒՐԹԻԱՅԻ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ
ՄԱՆԴԱՏՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ
ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Այս զեկույցը մինչ այժմ ջանա-
ցել է հաշվի առնել այն պայման-
ներն ու հարցերը, որոնք այն դի-
տում է արստրակտ իմաստով՝ վե-
րագրելով յուրաքանչյուր ազգի,
որին հնարավոր կլինի դրդել
ստանձնել այս շրջանում գործնա-
կան վերածննդի խնդիրը: Մեր երկ-
րի նկատմամբ նրանց հետաքրքրու-
թյունը, ինչևէ, հանգեցնում է այն
հնարավորության, որ աշխարհը
կարող է կոչ անել Միացյալ Նա-
հանգներին ստանձնել այդ առա-
ջադրանքը, և հետևաբար անհրա-
ժեշտությունը՝ իմանալու, թե դա
ինչ կնշանակի Ամերիկայի համար:
Միացյալ Նահանգների և մեկ այլ
ազգի համար, որը կարող էր
ստանձնել մանդատը, խնդիրները
նույնական չէին լինի: Ոչ այնքան
համակրելի Հին աշխարհը, առանց
այլապիրության հավակնություննե-
րի կամ իդեալներին անմնացորդ
նվիրվածության, Մերձավոր Արևել-

THE CONDITIONS AND
PROBLEMS INVOLVED
IN A MANDATE FOR
TURKEY AND
TRANSCAUCASIA

This report has heretofore
endeavored to consider the
conditions and questions of
which it treats in the
abstract sense applicable to
any nation which might be
induced to assume the task
of a practical regeneration
of this region. Its interest for
our country, however, lies
in the possibility that the
United States may be called
upon by the world to under-
take the task, and the neces-
sity therefore of knowing
what it would mean for
America. The problems for
the United States would not
be identical with those of
any other nation which
might undertake it. A not
too sympathetic Old World,
without pretensions to alt-
ruiism or too much devotion
to ideals, will expect of
America in the Near East



Միացյալ Նահանգների ռազմանավ
Մարթա Վաշինգթոն, 16 հոկտեմբերի 1919 թ.

United States warship Martha Washington, October 16, 1919



Միացյալ Նահանգների ռազմանավ
Մարթա Վաշինգթոն, 16 հոկտեմբերի 1919 թ.

United States warship Martha Washington, October 16, 1919



Ալեքսանդր Խատիսյանը ՀՀ կառավարության ներկայացուցիչների հետ

*Alexander Khatisyan with the representatives of the Government
of the Republic of Armenia*



*Գեներալ-մայոր Ջեյմս Գ. Հարբորդ
Lieutenant General James G. Harbord*



*Ալեքսանդր Խատիսյան
Alexander Khatisian*



*Արամ Մանուկյան
Aram Manukian*



*Միմոն Վրացյան
Simon Vratsian*



*Համո Օհանջանյան
Hamo Ohanjanian*




*Ֆրենկ Մաք-Քոյ
Առաքելության անդամ*

*Frank McCoy,
Member of the mission*




*Ջորջ Վան Հորն Մոսլի
առաքելության անդամ*

*George Van Horn Mosley,
Member of the mission*



*Հարոլդ Վլարկ Ադամս,
Առաքելության անդամ*

Harold Clark Adams, Member of the mission



Ստենլի Հորնբեք
Առաքելության անդամ

Stanley Hornbeck, Member of the mission

Map showing the boundaries of Armenia as awarded by PRESIDENT WILSON.



- Turkish-Armenian boundary
- Other international boundaries
- Unmarked international boundaries
- Old Turkish-Russian boundary
- Vilayet boundaries
- Sanjak boundaries
- Kaza boundaries
- Railways, broad gauge

ERZERUM Names of the vilayets of Erzerum, Trebizond, Van, and Bitlis, and other important cities

Map compiled under the direction of Major Lawrence Martin, General Staff, U. S. Army, by the topographic branch U. S. Geological Survey, in cooperation with the Department of State, from field observations by the Harbord Mission and from maps of the Turkish General Staff, scale 1:200,000, German maps prepared during the war, scale 1:400,000, and British maps of Persian and Transcaucasian territory, scale 1:1,000,000



Woodrow Wilson

քում Ամերիկայից ակնկալելու է նույն բարձր ստանդարտները, որոնք ցուցաբերվեցին Կուբայում և Ֆիլիպիններում՝ նախ և առաջ մարդկանց, հետո միայն նյութական ռեսուրսների և առևտրի զարգացում: Հեռավորությունը, Հին աշխարհի գործերին երբևէ չմիջամտելու մեր կեցվածքը, բանսարկություններից անմասն մնալը, որոնք բնութագրել են շփումը թուրքերի հետ, աշխարհի այլ կողմերում մահմեդական հանրության կարծիքը հաշվի առնելու վերաբերյալ մեր դիրքորոշման ազատ լինելը և այն փաստը, որ մենք որևէ ֆինանսական հետաքրքրություն չունենք Օսմանյան կայսրության խոշոր արտաքին պարտքերի առնչությամբ, տալիս է Ամերիկային դիրք և առավելություն մոտենալու իրադրությանը, որ չի ունեցել ոչ մի գերտերություն:

Առաքելության աշխատանքի մեծ մասը նվիրված է եղել իրադրության քննարկմանը. թե ինչպե՞ս կազդեր մեր երկրի վրա, եթե նրան առաջարկվեր ստանձնել մանդատ Մերձավոր Արևելքում: Խնդիրը որպես ամբողջություն պահպանվել է մտապատկերում այն ժամանակ, երբ առաքելության անհատ անդամներ իրականացրել են տարբեր խնդիրների հետաքննություններ, որոնց իմացությունն անհրաժեշտ է

the same lofty standards shown in Cuba and the Philippines – the development of peoples rather than of material resources and commerce. Distance, our time-honored detachment from the affairs of the Old World, our innocence from participation in the intrigues which have hitherto characterized intercourse with the Turk, our freedom from bias through the necessity of considering moslem public opinion in other parts of the world, and the fact that we have no financial interest in the great foreign debt of the Ottoman Empire, give America a viewpoint and an advantage in approaching the situation that are enjoyed by no other great power.

A great part of the work of the mission has been devoted to a consideration of the situation as it would affect our own country should it be invited to assume a mandate in the Near East. The problem as a whole has been kept in mind while individual members of the mission have made special inquiry into different matters of which knowledge is

այս տարածաշրջանում դժվարությունների լուծման խելամիտ գնահատականի համար: Այս ուսումնասիրություններից յուրաքանչյուրը կազմում է մի միավոր այն հարցի, որի հետ առնչություն ունի. անչափ կարևոր է արդարացնել այս զեկույցը համառոտելու ռիսկի փորձը: Այդ պատճառով դրանք ներկայացված են հավելվածի տեսքով՝ այսպես.

Ա. Քաղաքական գործոններ և խնդիրներ, կապիտան Սթենլի Ք. Հորնբեք, Միացյալ Նահանգների բանակ, Ջինսամթերքի վարչություն:

Բ. Կառավարություն Թուրքիայում և Անդրկովկասում, լեյտենանտ-գնդապետ Ջեպիեր Յ. Բրինթոնի, զինվորական դատարանի դատախազ, Միացյալ Նահանգների բանակ:

Գ. Թուրքիայի և Անդրկովկասի հանրային և մասնավոր ֆինանսներ, պրոֆ. Ու. Ու. Քեմբրլենդ:

Դ. Առևտուրը և արդյունաբերությունը Թուրքիայում և Անդրկովկասում, առևտրային հարցերով հանձնակատար Էլիոթ Գրիննել Միլլըս:

Ե. Հանրային առողջություն և առողջապահություն, գնդապետ Հենրի Բիուքս, Բժշկական կորպուս, Միացյալ Նահանգների բանակ:

Զ. Բնակչությունը. արդյունա-

necessary to reach an intelligent appreciation of the difficulties to be solved in this region. Each of these studies constitutes a unit on the subject with which it deals, too important to justify the risk of an attempt at epitomizing for this report. They are therefore submitted as appendices as follows:

A. Political Factors and Problems, by Capt. Stanley K. Hornbeck, Ordnance Department, United States Army.

B. Government in Turkey and Transcaucasia, by Lieut. Col. Jasper Y. Brinton, judge advocate, United States Army.

C. Public and Private Finance of Turkey and Transcaucasia, by Prof. W. W. Cumberland.

D. Commerce and Industry in Turkey and Transcaucasia, by Trade Commissioner Eliot Grinnell Mears.

E. Public Health and Sanitation, by Col. Henry Beeukes, Medical Corps, United States Army.

F. Population; Industrial and

բերական և այլ որակներ, լեյտենանտ-գնդապետ Ջոն Փրայս Ջեքսոն, Միացյալ Նահանգների բանակ, Ճարտարագետներ:

Է. Կլիման, բնական ռեսուրսները, անասնապահությունը և գյուղատնտեսությունը, լեյտենանտ-գնդապետ Է. Բոուդիչ, Միացյալ Նահանգների բանակ, հետևազոր:

Ը. Աշխարհագրություն, հանքարդյունաբերություն և սահմաններ, մայոր Լոուրենս Մարտին, Միացյալ Նահանգների բանակ, Գլխավոր շտաբ:

Թ. Թուրքիայի և Անդրկովկասի մամուլը, մայոր Հարոլդ Ու. Քլարք, Միացյալ Նահանգների բանակ, հետևազոր:

Ժ. Մանդատարարի ռազմական խնդիրը, բրիգադային գեներալ Ջորջ Վան Հորն Մուզլի, Միացյալ Նահանգների բանակ, Գլխավոր շտաբ:

Ի. Տրանսպորտը և հաղորդակցության ուղիները Փոքր Ասիայում և Անդրկովկասում, Ուիլյամ Բ. Փոլանդ, առաքելության ինժեներ անդամ:

Լ. Բիբլիոգրաֆիա:

Other Qualities; Maintenance, by Lieut. Col. John Price Jackson, Engineers, United States Army.

G. Climate, Natural Resources, Animal Industry, and Agriculture, by Lieut. Col. E. Bowditch, Infantry, United States Army.

H. Geography, Mining and Boundaries, by Maj. Lawrence Martin, General Staff, United States Army.

I. The Press of Turkey and Transcaucasia, by Maj. Harold W. Clark, Infantry, United States Army.

J. The Military Problem of a Mandatory, by Brig. Gen. George Van Horn Moseley, General Staff, United States Army.

K. Transport and Communications in Asia Minor and the Transcaucasus, by William B. Poland, engineer member of the mission.

L. Bibliography.

ՌԱԶՄԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Մեր երկիրը վերջերս այնքան երիտասարդներ է ուղարկել արտերկիր պատերազմի, և ազգի սիրտն այնքան զգայուն է ցանկացած նախաձեռնության հանդեպ, որն իր զավակներին կանչում է հեռավոր երկրներ՝ ծառայելու որպես զինվորներ, որ ամենամեծ հետաքրքրությունն է այժմ ուղղված ցանկացած մանդատում ընդգրկված ռազմական խնդրին, որը մեր ժողովուրդը կարող է երբևէ քննարկման ենթարկել:

Անհետաձգելի խնդիրները, որ կկանգնեն Թուրքիայում և Անդրկովկասում մանդատարար իշխանության բանակի և նավատորմի առջև, հետևյալն են.

(ա) Շրջափակող զորքերի դուրսբերմանն ուղեկցող ցանկացած անկարգության ճնշում և կառավարության կազմակերպում:

(բ) Կարգ ու կանոնի պահպանում մինչև ոստիկանություն կազմակերպվի գյուղական միջավայ-

THE MILITARY PROBLEM

Our country has so recently sent its young manhood to war overseas, and the heart of the Nation is so sensitive to any enterprise which calls for its sons to serve as soldiers in distant lands, that the greatest interest attaches to the military problem involved in any mandate to which our people may ever give consideration.

The immediate problems which would lie before the Army and Navy of a mandatory power in Turkey and Transcaucasia are:

(a) The suppression of any disorder attendant upon withdrawal of occupying troops and the initiation of the government.

(b) The maintenance of order until a constabulary could be organized for the

րում կարգը պահպանելու համար մանդատի տարածաշրջանում:

(գ) Օգնել կազմակերպել և վերապատրաստել ազգային ոստիկանություն:

(դ) Բարոյական ազդեցության միջոցներ նախաձեռնել՝ արտակարգ իրավիճակների դեպքում տեղական ոստիկանության համալրումը հնարավոր փաստացի օգտագործելու և մանդատային իշխանության հեղինակության համար այն շրջանում, որը մշտապես կառավարվել է բռնի ուժով:

Մանդատային կառավարության պաշտոնակալումն անմիջապես կհաջորդվի ներկայումս տարածաշրջանը օկուպացրած օտարերկրյա զորքերի դուրսբերմամբ և այժմ Թուրքիայի և Անդրկովկասի կողմից պահպանվող մշտական ռազմական հաստատությունների հնարավորինս արագ կազմալուծմամբ: Միացյալ Նահանգները մեծ տերությունների և շահագրգիռ ազգերի խնդրանքով ընդունելով այս մանդատը, բացառում է իր զորքերի նկատմամբ որևէ դիմադրություն: Ընդհակառակը, նրանց անկասկած կողջունեն: Օկուպացված երկրի արտաքին պաշտպանության համար որևէ խնդիր չի լինելու:

rural police of the mandatory region.

(c) To help organize and train a native constabulary.

(d) To constitute a reserve for moral effect; for possible actual use in supplementing the local constabulary in case of emergency; and for the prestige of the mandatory government in a region which has been governed by force since the beginning of history.

The inauguration of a mandatory government would be followed at a very early date by the withdrawal of the foreign troops now occupying the region and by the dissolution, as soon as practicable, of the permanent military establishments now maintained by Turkey and Transcaucasia. The United States accepting the mandate at the request of the other great powers and of the peoples interested, no resistance to her troops would be anticipated. On the contrary, they would doubtless be welcomed. No problem of external defense of the country occupied would exist.

(ա) Քննարկման ենթակա տարածաշրջանը՝ Ռումելիան, Կ. Պոլիսը, Անատոլիան և Անդրկովկասը շրջապատող ներկա ուժը, բացառությամբ Զմյուռնիան օկուպացնող հինգ հունական դիվիզիաների, Սևծովյան բանակն է և բրիտանական, ֆրանսիական, իտալական ու հունական կառավարությունների շուրջ 50.000-անոց զորքը՝ տեղակայված Կիլիկիայում: Թուրքիայի և Անդրկովկասի կանտոնավոր զորքերը՝ մանդատի կառավարության հայեցողությամբ նույն տարածաշրջանում ցրված, կազմում են շուրջ 92.000: Թուրքիայի ժանդարմերիան կազմում է շուրջ 30.000: Մարդկային ուժի կորուստը Թուրքիայում սարսափելի չափերի է հասնում, և այժմ շատ մարդիկ դեռ բացակայում են աշխատանքից ու զինված շրջում:

Ենթադրվում է, որ մանդատային ուժի զորքերի այս հերթափոխը չի ուղեկցվի օկուպացնող բանակի և ազգային կանտոնավոր զորքերի համար լուրջ անկարգություններով:

(բ) Արդյունավետ ազգային ոստիկանության ձևավորման ընթացքում՝ վեց ամսից մեկ տարի ընկած ժամանակահատվածում, փոքր կայազորներ կտեղակայվեն երկաթգծերի երկայնքով և մասնավորա-

(a) The present occupying force of the region under consideration, Roumelia, Constantinople, Anatolia, and Transcaucasia, excluding five Greek divisions occupying Smyrna, is the Army of the Black Sea and the troops in Cilicia, comprising about 50,000 of the British, French, Italian, and Greek Governments. The regular troops of Turkey and Transcaucasia to be disbanded in the same region at the convenience of the mandatory government aggregate about 92,000 men. The gendarmerie of Turkey amounts to about 30,000 men. The loss of man power in Turkey has been appalling, and too many men are still absent from work and carrying rifles.

It is not thought that any serious disorder would attend this substitution of the troops of the mandatory power for the army of occupation and for the native regular forces.

(b) During the formation of an efficient native constabulary, a period of six months to a year, small garrisons would have to be furnished along the railroads and in isolated towns, especially

պես նախկին սահմաններում, որտեղ ազգամիջյան կրքերը խիստ բորբոքված են: Սա անվտանգություն կապահովի, մինչ տարբեր ազգեր կհայրենադարձվեն, կվերակառուցեն իրենց տները և կհարմարվեն նոր պայմաններին: Որոշ վայրերում արդեն գոյություն ունեցող անօրինական խմբերի ճնշումը, որոնց ձևավորումը արևելյան երկրներում անփոփոխ կերպով երկար պատերազմից հետո բերում է բանակի կազմալուծման, պետք է հանգեցնի Միացյալ Նահանգների զորքերի որոշ քանակության մշտական օգտագործման՝ մինչև ոստիկանական ծառայության ամբողջական կազմակերպումը: Այս ընթացքում քաղաքացիական բնակչության զինաթափումը կհասցվի ավարտին:

(գ) Մանդատարարի առաջին պարտականությունը կլինի երկրում կյանքի և գույքի ապահովություն երաշխավորելը և այս նպատակով նրա ամենաառաջին քայլերը պետք է ուղղված լինեն ազգային գյուղական կարգի պահպանմանը կամ ոստիկանական ուժերի ստեղծմանը՝ քաղաքներից դուրս ավազակությունը, անօրինությունը և այլ հանցանքներ ճնշելու համար: Այս ուժը ռազմական կազմակերպության հետ պետք է լինի խաղաղության պահապանների ուժ, ինչ-

on the old frontiers, where feeling runs high between races. This would give security while the various nationals are being repatriated, reconstructing their homes, and adjusting themselves to new conditions. The suppression of outlaw bands, which already exist in some localities, and the formation of which in eastern countries invariably follows the disbandment of armies after a long war, would call for constant use of a certain number of United States troops pending the completion of the constabulary organization for service. During this period the disarmament of the civilian population would be accomplished.

(c) The first duty of a mandatory would be to guarantee the safety of life and property through the country, and to this end its earliest efforts should be directed to the establishment of a native rural police or constabulary for the suppression of brigandage, outlawry, and other crimes outside the towns. This force, with a military organization, should be a force of peace officers as that term is used in our

պէս այդ տերմինն օգտագործվում է մեր սեփական երկրում՝ լիազորված լինելով իրականացնել բոլոր տեսակի հանցագործների ձերբակալություններ, ծառայել հրամանների, իրականացնել ձերբակալությունների հրամաններ և այլն: Ապակենտրոնացված լինելով իր կառավարչությունում և դատապարտված լինելով գործել փոքր մարմիններով, այն պետք է լինի ֆեդերալ՝ համագործակցելով նահանգային պաշտոնյաների հետ, բայց ոչ ծառայելով նրանց: Նրա անձնակազմը պետք է կլանի ներկա ժանդարմերիայի լավագույն տարրերը և նաև կազմալուծված զորքերի արժանավոր ծառայողներին համապատասխան աշխատանքով ապահովի: Մի զգալի ժամանակահատված նրա բարձրաստիճան ծառայողները պարտադիր ամերիկացիներ կլինեն, բայց հենց որ տեղի ծառայողների որակը շտկվի, այդ ուժը կդառնա ազգային: Ոստիկանական ուժը պետք է այնպիսին լինի, որ կարողանա հանձն առնել կարգուկանոնի ապահովում քաղաքների սահմաններից դուրս և հնարավորինս կարճ ժամկետներում ազատ արձակել ամերիկյան զորքերին: Ոստիկանության կազմակերպումը պետք է համընկնի արդյունավետ մունիցիպալ ոստիկանության ստեղծման հետ:

own country, empowered to make arrests of criminals of all kinds, serve warrants, execute orders of arrest, etc. While decentralized in its administration, and destined eventually to operate in small bodies, it should be a Federal force, cooperating with but not serving under provincial officials. Its personnel should absorb the best elements of the present gendarmerie, and also provide suitable employment for deserving officers of the disbanded armies. For a considerable period its highest officers would necessarily be Americans, but as fast as the quality of the native officers justifies, the force should become native. The strength of the constabulary should be such as to enable it to take over the whole task of maintaining order outside the towns and release American troops at the earliest practicable date. Coincident with the organization of the constabulary would be the creation of efficient municipal police.

(դ) Հաշվի առնելով հարևան բնակիչների անկայուն խառնվածքը, գաղթական քրդերի ու արաբների ավանդական ապօրինությունները և որոշ շրջանների մեկուսացվածությունը, որտեղ անցյալի սխալների համար հատուցում պահանջելու փորձերը կտեսն գոնե մեկ սերունդ ընդգրկող ժամանակահատված, ձեռքի տակ պետք է ունենալ որոշակի ուժ՝ անհրաժեշտության դեպքում ազգային ոստիկանության շարքերը համալրելու համար: Նման ուժ անհրաժեշտ կլինի նաև ընդհանուր բարոյական ազդեցության համար: Դրա սուկ գոյությունը կկանխի չափից դուրս մեծ ծավալների միտվող կազմակերպված անկարգությունները, որը խաղաղապահ զորքը պետք է սանձահարեր: Այսպիսի ուժը պետք է տեղակայված լինի մայրաքաղաքին մոտ մի վայրում՝ վերապատրաստված արագ էքսպեդիցիոն աշխատանքի համար և պետք է ուղարկվի այնտեղ, որտեղ անհրաժեշտ է:

Զորքերի բնույթը պետք է համապատասխանի այն նպատակին, որի համար դրանք օգտագործվում են: Էքսպեդիցիոն նպատակների համար նավատորմը կամ հրետանային հետևակագործ լավագույն ընտրությունն է: Ներքին բարոյահոգեբանական ազդեցության համար ոստիկանության ձևավորման ըն-

(d) Considering the uncertain character of the neighboring populations, the traditional lawlessness of migratory Kurds and Arabs, and the isolation of certain regions where the temptation to reprisals for past wrongs will be strong for at least a generation, a certain force must be kept in hand to supplement the native constabulary when needed. Such a force will also be necessary for general moral effect. Its mere existence will prevent organized disorder on a scale too large for a peace force to handle. Such a force would be stationed near the capital, trained for quick expeditionary work, and sent where needed.

The character of the troops should be suited to the purpose for which used. For expeditionary purposes, marines or infantry with artillery would be best. For moral effect in the interior and during the period of constabulary, organization cavalry would be preferable. A small

թացքում հեծելազորի կազմավորումը նախընտրելի կլինի: Փոքր արդյունավետ օդային ծառայություն պետք է պահպանվի: Օդանավը ոչ միայն արագ հեռահաղորդակցության միջոց է, այլև կիսավայրենի ցեղերի փոքր խնդիրները կարգավորելու տեսանկյունից անգնահատելի նշանակություն ունի: Այս երկիրը շատ նման է Մեքսիկային, և պայմաններն էլ թերևս լինեն այնպիսին, ինչպիսին մեր սահմանային հեծելազորին: Երկաթուղային ինժեներիայի գունդը անհրաժեշտություն կլինի: Մանդատի իրականացման սկզբնական շրջանում զորքերը կբախվեն առողջապահության և մաքրման ընդհանուր խնդրին, և առողջապահական զորքերի լրացուցիչ քանակ անհրաժեշտ կլինի:

Մանդատարար պետության զորքերի անհրաժեշտ քանակը շատ է տատանվում՝ 25.000-ից մինչև 200.000: Պայմաններն այնքան արագ են փոփոխվում, որ զորքերի օգտագործման վերաբերյալ այսօր մշակված ծրագրերը վեց ամսվա ընթացքում կարող են հնանալ: Մանդատի առաջադրման ու ընդունման ժամկետի անորոշությունը մղում է խիստ մոտավոր գնահատականների: Այն պայմաններում, որոնք գոյություն ունեն այսօր, ներքոստորագրյալիս համոզմամբ երկու ամերիկյան դիվիզիա մի քանի

efficient air service should be maintained. The aeroplane is not only a means of very rapid communication, but its value for dealing with a distant small problem among half-wild tribes can not be overestimated. The country much resembles Mexico, and the conditions would be not unlike our border cavalry service. A regiment of railway engineers would be a necessity. During the initial period of the mandatory, troops would be needed in connection with the general problem of sanitation and cleaning up, and an extra proportion of sanitary troops would be necessary.

Estimates of the necessary number of mandatory troops vary greatly – from 25,000 to 200,000. Conditions change so rapidly that plans made to-day for the use of troops might be obsolete in six months. Uncertainty as to the time the mandate will be tendered and accepted make estimates merely approximate. Under conditions as they exist to-day the undersigned believes that a force of two American divisions, with several hundred extra officers,

հարյուր հավելյալ ծառայողներով կամ 59.000-անոց ընդհանուր զինուժով միանգամայն բավարար կլինի: Նման ուժը պետք է հասուն կազմակերպված լինի. մեկ օդանավային էսկադրիլիա, նվազագույն հրետանի, ոչ ավելի, քան մեկ գունդ՝ սպառազինված 75 մոտոտեխնիկայով, մասնավոր ծառայությունների նվազագույն քանակ, սովորականից չորս անգամ ավել առողջապահական զորքեր, հեծելազորային չորս գունդ, կազմակերպության մեջ աննշան փոփոխություններով մանդատային կառավարության պարուն գլխավոր սպայի հայեցողությամբ: Այս ուժը պետք է զգալիորեն նվազի երկու տարի անց, 50 տոկոսով՝ երեք տարի անց: Դրանից հետո որոշակի հետագա կրճատում կարող է դանդաղորեն իրականացվել, բայց չկրճատվող նվազագույնը պետք է հասած լինի մոտավորապես մեկ դիվիզիայի հզորության:

Վերոնշյալ բանակի զինուժին հատկացված տարեկան առավելագույն գումարը կլինի.

Առաջին տարվա համար \$ 88,500,000
Մոտ երկու տարվա ավարտին ... 59,000,000
Երրորդ տարվա ավարտին44,250,000

Հետագայում այս գումարի սպառումը զգալիորեն կկրճատվի տեղական եկամուտների հաշվին:

or a total force of 59,000 would be ample. Such force would be specially organized; one aeroplane squadron; a minimum of artillery; not to exceed one regiment of 75's motorized; a minimum of the special services ; four times the usual number of sanitary troops; four regiments of cavalry, with minor changes in organization at the discretion of the senior general officer on duty with the mandatory government. This force should be substantially reduced at the end of two years, and by 50 per cent at the end of the third year. After that some further reduction could be slowly effected, but the irreducible minimum would be reached at about the strength of one division.

The annual cost for the force of the army above stated would be at the maximum:

For the first year \$88,500,000
At the end of two years perhaps...
..... 59,000,000
At the end of three years
.....44, 250,000

with thereafter a continuing appropriation of that sum less such amount as the local revenues could afford,

Մեր ծախսերը փոխհատուցելու համար հասանելի կլինի գոնե ծովային և ռազմական բյուջեների մի մասը, որը մինչ օրս օգտագործվում է տարածաշրջանում կազմալուծված բանակներին աջակցություն ցուցաբերելու համար: Պատերազմից առաջ Թուրքիայում այս բանակի տարեկան հատկացման գումարը կազմել է մոտ \$ 61,000,000 ներառյալ ռազմածովային նավատորմին տրամադրված \$ 5,000,000-ը:

Ռազմածովային հաստատությունները պետք է ներառեն մեկ նավային կայարան մայրաքաղաքի համար և, ըստ երևույթին, մեկական՝ Ջմյունիայի, Մերսինի, Բաթումի և Բաքվի համար այնտեղ գործերի արագ տեղաշարժման խնդիրները հոգալու նպատակով: Ամբողջ գունդը տեղափոխելու համար նախատեսված փոխադրամիջոցը մշտապես պետք է տեղակայված լինի մայրաքաղաքային կայարանում: Չորսից վեց մարտանավ անհրաժեշտ կլինի հաղորդակցության ու բարոյական ազդեցության համար: Ածխագործական, վերանորոգման ու հիվանդանոցային ծառայությունները նավատորմում պետք է լինեն համաչափ: Հին անգործածական նավերը հավանաբար կգործարկվեն, բայց ոչ որպես մայրաքաղաքային

probably a very substantial fraction of the cost.

To offset our expenditures there would be available at least a part of the naval and military budget hitherto used for the support of the disbanded armies in the region. In Turkey before the war this totaled about \$61,000,000 annually for the army, including \$5,000,000 for the navy.

The naval establishment should consist of a station ship for the capital, and probably one each for Smyrna, Mersina, Batum, and Baku, to meet local needs in quick transportation of troops. A transport of light draft capable of carrying a complete regiment should be permanently on station at the capital. Four to six destroyers would be needed for communication and moral effect. Collier, repair, and hospital service afloat should be in proportion. Old ships of obsolete type would probably answer for all except the station ship at the capital and the destroyers. Some ships of the Turkish Navy, of which there are

կայարանի նավ և ոչ էլ՝ որպես մարտանավեր: Թուրքական նավատորմի որոշ նավեր, որոնց թիվը 30-ից ավելի է, անկասկած, կարող են օգտագործվել ամերիկյան նավային անձնակազմով, որը շուտով կփոխարինվի ազգային կազմով:

Նավատորմի հաստատումը չի կարող հանգեցնել լրացուցիչ դաշնային հատկացումների: Մահմանված հատկացումների մեջ հավանաբար չեն մտնի նավերն իրենց անձնակազմով: Միակ հավելյալ ծախսն, ըստ երևույթին, կլինի ապրուստի և խմելու ջրի արժեքի տարբերությունը Մերձավոր Արևելքում:

Շատ կարևոր է, որ հենց սկզբից մանդատային կառավարությունն ուղղորդվի համապատասխան ռազմածովային կարգադրություններով: Ոչ մի տեղ աշխարհում հեղինակությունն այնքան չի կարևորվում, և ոչ մի տարածաշրջանում ժողովուրդն այսքան տևականորեն բռնի իշխանության չի ենթարկվել: Մանդատարարը չէր կարող հենց սկզբից ոչ անհրաժեշտ ռիսկերի դիմել մի բնակչության շրջանում, որը ընդգծված կերպով անիրազեկ է մեր ռեսուրսներին և ազգային հատկանիշներին:

over 30, could doubtless be used with American crews soon to be replaced by natives.

The naval establishment might not entail any additional Federal appropriations. Ships and personnel could probably be drawn from existing establishment; the only additional expense would probably be the difference in cost of maintenance in near eastern and home waters.

It is very important that a proper military and naval setting be given the mandatory government at the beginning. In no part of the world is prestige so important, and in no region have people been so continuously governed by force. The mandatory could at the outset afford to take no unnecessary risks among such a population in densest ignorance as to our resources and our national traits.

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս առաքելությունը միշտ նկատի է ունեցել, որ իր հետազոտության ընթացքում պիտի կարողանա նաև բարոյախոսական ազդեցություն ունենալ այցելած տարածաշրջանում: Ֆրանսիայից մեկնելուց մի քանի ամիս առաջ խիստ մտահոգիչ զեկույցներ են ստացվել Անդրկովկասից, մասնավորապես Թուրքական բանակի կողմից Թուրքիայի և Ռուսաստանի միջև նախկին միջազգային սահմանին սպառնացող կազմակերպված հարձակումների մասին: Թուրքիայով առաքելության երթուղին ծրագրվել է՝ այս զեկույցներն աչքի առաջ ունենալով և դրանց հավաստիությունը քննելու մտադրությամբ և հնարավորության դեպքում սահմանափակող ազդեցություն ունենալու համար: Մենք գործնականորեն անցել ենք Թուրքիայի ողջ սահմանը՝ Սև ծովից մինչև Պարսկաստան և այս զեկույցները հաստատող որևէ բան չենք գտել: Թուրքական բանակը սահմանի երկայնքով խմբված չէ. նրանց կազմակերպությունները խիստ նվազել են, և երկ-

CONCLUSIONS

This mission has had constantly in mind the moral effect to be exercised by its inquiry in the region visited. Very alarming reports had been received from Transcaucasia for several months before its departure from France, particularly as to organized attacks by the Turkish Army impending along the old international border between Turkey and Russia. The itinerary of the mission through Turkey was planned with those reports before it and with the intention of observing as to their truth and if possible to exert a restraining influence. We practically covered the frontier of Turkey from the Black Sea to Persia, and found nothing to justify the reports. The Turkish Army is not massed along the border; their organizations are reduced to skeletons; and the country shows an appalling lack of people,

րում մարդկանց սարսափելի պակաս կա՝ և՛ ռազմական, և՛ քաղաքացիական: Յուրաքանչյուր առաջատար քաղաքում, որտեղով մենք անցել ենք, առաքելության ղեկավարը խորհրդակցություն է անցկացրել թուրք պաշտոնյաների հետ: Հարցումներ են կատարվել քրիստոնեական հասարակության շրջանում, նրանցից ոմանք մշտապես հարցաքննվել են, իր սեփական միսիոներների և բնիկ քրիստոնյաների նկատմամբ ամերիկացիների հետաքրքրությունը խիստ ընդգծված էր, հայերի տեղահանումները, կոտորածները, փրկվածների վերադարձը քննարկվում էին յուրաքանչյուր առիթով, ինչպես նաև այլ քայլեր էին ձեռնարկվում համոզելու համար թուրք պաշտոնյաներին, որ նրանց երկիրը կանգնած է աշխարհի դատարանի առջև: Առաքելության այցը զգալի բարոյական ազդեցություն ունեցավ քրիստոնյաների կյանքի և գույքի անվտանգությունն ապահովելու հարցում՝ մինչև Խաղաղության կոնֆերանսի որոշման իրականացումը:

Մենք կրկին ընդգծում ենք, որ եթե Ամերիկյան ընդունի այս առաքելության այցելած տարածաշրջանի մանդատը, նա անկասկած կանի դա միջազգային պատասխանատվության բարձր զգացումից և Ազգերի Լիգայի՝ իր գործընկերների (հա-

either military or civilian. At every principal town through which we passed the chief of the mission held a conference with the Turkish officials. Inquiry was made as to the Christian Community, some were always interviewed; the interest of America in its own missionaries and in the native Christians was invariably emphasized; the Armenian deportations, the massacres, and the return of the survivors were discussed on each occasion, as well as other matters intended to convince Turkish officials that their country is on trial before the world. The visit of the mission has had a considerable moral effect in securing the safety of Christian lives and property pending action by the peace conference.

We would again point out that if America accepts a mandate for the region visited by this mission, it will undoubtedly do so from a strong sense of international duty, and at the unanimous desire — so expressed at

մենայն դեպս այդպես արտահայտած) միաձայն ցանկությամբ: Ստանձնել այս բարդ նախաձեռնությունը՝ առանց պայմանների անվտանգությունը նախապես ապահովելու, ճակատագրական կարող է լինել հաջողություն գրանցելու առումով: Միացյալ Նահանգները պետք է իր սեփական պայմանները առաջնային դարձնի ինդիվիդուալ մանդատի ընդունումից առաջ, և ոչ թե հետո, քանի որ կան բազմաթիվ շահեր, որոնք կհակասեն ցանկացած ամերիկացու կողմից երկրի վարչությունը պատշաճ դիտարկելուն: Միջազգային բարդությունների դեմ ձեռք առնվող յուրաքանչյուր հնարավոր նախազգուշացում պետք է իրականացվի նախապես: Մեր կարծիքով պետք է լինեն հստակ երաշխիքներ Ֆրանսիայի և Անգլիայի հետ պաշտոնական համաձայնությունների առումով, և՛ Գերմանիայի, և՛ Ռուսաստանի կողմից որոշակի հավաստիացումներ Թուրքիայում և Անդրկովկասում կարգադրությունների իրականացման առնչությամբ և նրանց հարգելու խոստում:

Հատուկ կարևորություն ունեն հետևյալ կարգադրությունները.

- Թուրքական կայսրության արտաքին հարաբերությունների նկատմամբ լիակատար վերահսկողություն, ոչ մի դեսպան,

least – of its colleagues in the League of Nations. Accepting this difficult task without previously securing the assurance of conditions would be fatal to success. The United States should make its own conditions as a preliminary to consideration of the subject – certainly before and not after acceptance, for there are a multitude of interests that will conflict with what any American would consider a proper administration of the country. Every possible precaution against international complications should be taken in advance. In our opinion there should be specific pledges in terms of formal agreements with France and England and definite approval from Germany and Russia of the dispositions made of Turkey and Transcaucasia, and a pledge to respect them.

Of particular importance are the following:

Absolute control of the foreign relations of the Turkish Empire, no ambassador, envoy, minister, or dip-

պատվիրակ, նախարար կամ դիվանագիտական գործիչ չպետք է լիազորվի գնալ Թուրքիա, և վերջինս ոչ մեկի չպետք է ուղարկի արտասահման:

- Բացառիկ արտոնություններ ընդգրկող զիջումները պետք է ենթարկվեն վերանայման, եթե դրանք հակասում են պետության լավագույն շահերին:
- Մանդատարարի տեսանկյունից անցանկալի զիջումները, որոնց ուղղությամբ դեռ աշխատանք չի կատարվել, չեղյալ համարել: Անհրաժեշտության դեպքում սեփականատերերին փոխհատուցման թույլտվություն:
- Հրաժարվել այն համակարգից, որի միջոցով հատուկ եկամուտներ են սահմանվում որոշակի նպատակների համար: Բոլոր եկամուտները պետք է վերահսկի գանձատունը, և բոլոր վարկատուները որպես վճարման աղբյուր պետք է դիտարկեն միայն գանձատունը:
- Արտաքին վերահսկողություն Թուրքիայի ֆինանսական մեքենան կանգնեցնելու հարցում, ինչը նշանակում է Օսմանյան պետական պարտքի վարչական խորհրդի կազմա-

lomatic agent to be accredited to Turkey, and the latter to send none such abroad.

Concessions involving exclusive privileges to be subject to review if shown to be contrary to the best interests of the State.

Concessions undesirable from the standpoint of the mandatory upon which work has not been started to be canceled. Compensation to be allowed to holders when necessary.

The system by which specified revenues are assigned for particular purposes to be discarded. All revenues to be controlled by the treasury, and all creditors to look only to the treasury as the source of payment.

Foreign control over Turkey's financial machinery to cease, meaning the dissolution of the council of administration of the Ottoman public debt, reserving the

լուծում՝ իրավունք վերապահելով պահպանել խորհրդի որոշ անհատ անդամների որպես խորհրդականներ Օսմանյան ֆինանսների հետ կապված նրանց քաջատեղյակ լինելու պատճառով:

- Կայսրության բոլոր արտաքին պարտավորությունները պետք է միավորվեն ու փոխհատուցվեն:
- Այն երկրները, որոնք ստանում են Թուրքական կայսրության տարածքներ, ինչպես օրինակ՝ Միջագետքը, պետք է ստանան նաև դրամական արժույթի արտաքին պարտավորությունների և հնարավոր փոխհատուցման վճարների՝ իրենց ողջամիտ բաժինը:
- Թուրքիայի հետ ունեցած առևտրային պայմանագրերի վերացում ըստ նկատառման:
- Մանդատի տերության կողմից նշված ժամկետում բոլոր արտասահմանյան կառավարություններն ու զորքերը պետք է դուրս բերվեն մանդատի տարածքային սահմաններից:

Այս միջոցառումներից շատերի իրականացման վերաբերյալ հեշտ չի լինի համաձայնության գալ: Այժմ շատ ազգեր Օսմանյան կայսրու-

right to retain some individual members of the council as advisors because of their familiarity with Ottoman finances.

All foreign obligations of the Empire to be unified and refunded.

Those countries receiving territory of the Turkish Empire, e. g., Syria and Mesopotamia, to assume their reasonable share of the paper currency, of the foreign obligations, and of obligation for possible reparation payments.

Abrogation, on due notice, of existing commercial treaties with Turkey.

All foreign Governments and troops to vacate territorial limits of mandate at dates to be fixed by the mandatory power.

Consent to many of these measures would not easily be obtained. Many nations now have some sort of

թունում որոշակի ֆինանսական վերահսկողություն ունեն, և նրանք առանց դիմադրության թույլ չեն տալու այս վերահսկողությունը:

Ինչևէ, ապացուցելու կարիք չկա, որ Միացյալ Նահանգները չի կարող հանդուրժել, որ իր ֆինանսական քաղաքականությունը վերահսկվի օտար կապիտալների կողմից: Պարտքի մարումը կապիտալի արժեքի հնարավոր նվազման հետ դժգոհության ալիք կբարձրացնի, բայց դա պետք է արվի: Հակառակ դեպքում ամերիկյան վարչակազմը պարտքերով ծանրաբեռնված և վարկաբեկվելու վտանգի տակ կլինի:

Առաքելությունը չի կարծում, թե Մերձավոր Արևելքում Միացյալ Նահանգների կողմից մանդատի ընդունման առաջարկություն կներկայացվի: Հետևաբար այն պարզապես ներկայացնում է 6 շաբաթների ընթացքում տարածաշրջանի մարդկանց հետ մշտական շփման արդյունքում ստացված ողջ ինֆորմացիայի հիման վրա նման գործողության կողմ և դեմ ամփոփի պատճառները:

ԿՈՂՍ ՊԱՏՃԱՌՆԵՐ

1. Միացյալ Նահանգները՝ որպես Ազգերի Լիգայի ձևավորման գլխավոր մասնակիցներից մե-

financial control within the Ottoman Empire, and they would not see this control taken away without protest.

It needs no argument, however, to show that the United States could not submit to having her financial policies controlled from foreign capitals. The refunding of the debt, possibly with a reduction of the capital amount, would raise a storm of protest, but it should be insisted upon. Otherwise an American administration would be embarrassed and run the risk of being discredited.

The mission has not felt that it is expected to submit a recommendation as to the United States accepting a mandate in the Near East. It, therefore, simply submits the following summary of reasons for and against such action, based on all information obtainable during six weeks constant contact with the peoples of the region:

REASONS FOR.

1. As one of the chief contributors to the formation of the League of

կը, բարոյապես պարտավորված է ընդունել մանդատային իշխանության պատասխանատվություններն ու պարտավորությունները:

2. Աշխարհի խաչմերուկներում համաշխարհային խաղաղության ապահովում, կիզակետում՝ պատմության սկզբից պատերազմի գաղափարով վարակվելը:
3. Մերձավոր Արևելքն այս ժամանակաշրջանում մարդասիրություն դրսևորելու լավագույն հնարավորությունն է ընձեռում՝ պարտականություն, որի համար Միացյալ Նահանգներն ավելի լավ թեկնածու է, քան որևէ այլ երկիր, ինչպես վկայում են Կուբան, Պուերտո Ռիկոն, Ֆիլիպինները, Հավայան կղզիները, Պանաման և մեր այլասիրական քաղաքականությունը՝ զարգացնելու մարդկանց, ոչ թե միայն նյութական ռեսուրսները:
4. Ամերիկյան, գործնականորեն, ներգրավված բոլոր ժողովուրդների միաձայն ընտրությունն ու ջերմեռանդ հույսն է:
5. Ամերիկյան արդեն միլիոններ է ծախսում Թուրքիայի և Անդրկովկասի սովահար մարդկանց փրկելու համար և այս ամենն ավելի էֆեկտիվ կերպով կիրականացնեն, եթե համընդհանուր

Nations, the United States is morally bound to accept the obligations and responsibilities of a mandatory power.

2. The insurance of world peace at the world's cross-ways, the focus of war infection since the beginning of history.
3. The Near East presents the greatest humanitarian opportunity of the age – a duty for which the United States is better fitted than any other – as witness Cuba, Porto Rico, Philippines, Hawaii, Panama, and our altruistic policy of developing peoples rather than material resources alone.
4. America is practically the unanimous choice and fervent hope of all the peoples involved.
5. America is already spending millions to save starving peoples in Turkey and Transcaucasia and could do this with much more effi-

վերահսկողություն սահմանված լինել: Ով էլ որ վերցնի այս տարածքների մանդատը, մեզնից դեռ ակնկալելու է օգնության ֆինանսավորում, և մենք հավանաբար ի վերջո կտրամադրենք կապիտալ նյութական զարգացման համար:

6. Ամերիկյան հայերի միակ հույսն է: Նրանք մտավախություն ունեն, որ Մեծ Բրիտանիան կգոհաբերի իրենց հետաքրքրությունները մահմեդական հասարակական կարծիքին, քանի դեռ այն վերահսկում է այդ հավատքի հարյուր միլիոնավոր ներկայացուցիչների: Մյուսները վախենում են Բրիտանիայի իմպերիալիստական քաղաքականությունից և նրա սովորությունից մնալ այնտեղ, որտեղ նա դրոշ է բարձրացնում:

Մանդատի համար Ամերիկյան ոչ միայն Մերձավոր Արևելքի բոլոր ժողովուրդների, այլ նաև իրենից հետո յուրաքանչյուր գերտերության ընտրությունն է:

Ամերիկյան ուժն ադեկվատ է, նրա պատմությունը մաքուր է, նրա շարժառիթները՝ անխաբոյալ:

7. Մանդատը կլինի ինքնուրույն սկզբնական շրջանից հետո ոչ ավել, քան հինգ տարի: Երկաթուղիների կառուցումը լայն հնա-

ciency if in control. Whoever becomes mandatory for these regions we shall be still expected to finance their relief, and will probably eventually furnish the capital for material development.

6. America is the only hope of the Armenians. They consider but one other nation, Great Britain, which they fear would sacrifice their interests to Moslem public opinion as long as she controls hundreds of millions of that faith. Others fear Britain's imperialistic policy and her habit of staying where she hoists her flag.

For a mandatory America is not only the first choice of all the peoples of the Near East, but of each of the great powers, after itself.

American power is adequate; its record clean; its motives above suspicion.

7. The mandatory would be self-supporting after an initial period of not to exceed five years. The

րավորություններ կառաջարկի մեր մայրաքաղաքին: Առևտրական մեծ առավելություններ կլինեն ոչ միայն մանդատի տարածաշրջանում, այլ նաև Ռուսաստանի, Ռումինիայի և այլ երկրների մերձակայքում:

Ամերիկյան կմաքրի հիվանդությունների և զարշելիության այս օջախը, ինչպես վարվեց Կուբայի և Պանամայի դեպքում:

8. Միջամտությունը կլինի ազատական կրթություն համաշխարհային քաղաքականության մեջ մեր ժողովրդի համար՝ քաջության և էներգիայի վառ օրինակ ծառայելով:

9. Այն միանշանակ վերջ կտա հայերի և մյուս քրիստոնյաների հետագա կոտորածներին, արդարադատություն կտա թուրքերին, քրդերին, հույներին և մյուս ժողովուրդներին:

10. Այն կմեծացնի արտասահմանում Միացյալ Նահանգների ուժն ու հեղինակությունը և երկրի ներսում հետաքրքրություն կառաջացնի Մերձավոր Արևելքի վերածննդի նկատմամբ:

11. Ամերիկյան խիստ զգայուն հետաքրքրություններ ունի տարածաշրջանում՝ մեր առաքելություններն ու դպրոցները:

building of railroads would offer opportunities to our capital. There would be great trade advantages not only in the mandatory region, but in the proximity to Russia, Roumania, etc.

America would clean this hotbed of disease and filth as she has in Cuba and Panama.

8. Intervention would be a liberal education for our people in world politics; give outlet to a vast amount of spirit and energy and would furnish a shining example.

9. It would definitely stop further massacres of Armenians and other Christians, give justice to the Turks, Kurds, Greeks, and other peoples.

10. It would increase the strength and prestige of the United States abroad and inspire interest at home in the regeneration of the Near East.

11. America has strong sentimental interests in the region; our missions and colleges.

12. Եթե Միացյալ Նահանգները չվերցնի այս տարածաշրջանի պատասխանատվությունը, հավանական է, որ միջազգային կասկածամտությունը բերի թուրքերի աննկարագրելի անկարգությունների շարունակականության:

13. «Եվ Աստված հարցրեց Կայեֆին. «Որտեղ է քո եղբայր Աբելը»: Եվ նա պատասխանեց. «Ես չգիտեմ, մի թե ես իմ եղբոր պահակն եմ»:

Ավելի լավ է միլիոններ մանդատի համար, քան միլիարդներ հետագա պատերազմներին:

14. Սա տղամարդու գործ է, որն, ինչպես աշխարհն է ասում, ավելի լավ, քան Ամերիկյան այլ երկիր չի կարող իրականացնել: Ամերիկյան կարող է իրեն թույլ տալ ծախսեր, ունի մարդիկ, ոչ մի մտավախություն չկա, թե իր սեփական ժողովուրդը կարող է տուժել, մեկուսացման նրա անվանական քաղաքականությունը նրան հեռու չի պահել Մեծ պատերազմին հաջող մասնակցությունից: Արդյոք ասվելու է, թե մեր երկիրը նոր ու դժվար պարտականություններ ստանձնելու քաջության պակաս ունի:

12. If the United States does not take responsibility in this region, it is likely that international jealousies will result in a continuance of the unspeakable misrule of the Turk.

13. "And the Lord said unto Cain, Where is Abel thy brother? And he said: 'I know not; am I my brother's keeper?'"

Better millions for a mandate than billions for future wars.

14. Here is a man's job that the world says can be better done by America than by any other. America can afford the money; she has the men; no duty to her own people would suffer; her traditional policy of isolation did not keep her from successful participation in the Great War. Shall it be said that our country lacks the courage to take up new and difficult duties?

ԴԵՍ ՊԱՏՃԱՌՆԵՐ

1. Միացյալ Նահանգներն ունի նախընթաց և ավելի սերտ արտաքին պարտավորություններ և ներքին խնդիրների հետ կապված մեծ պատասխանատվություն, որ ծագել են պատերազմի արդյունքում:
2. Այս տարածաշրջանը դարեր շարունակ եղել է միլիտարիզմի և իմպերիալիզմի մարտադաշտ: Հավանական է, որ իշխանատենչ ազգերը դեռ մանևրելու են նրա վերահսկողության համար: Դա կթուլացնի Մոնրոյի դոկտրինի առնչությամբ մեր դիրքորոշումը և հավանաբար մեզ ի վերջո կընդգրկի վերակառուցված Ռուսաստանի կազմում: Այս տարածաշրջանի մանդատի ստանձնումը Միացյալ Նահանգները կընդգրկի Հին աշխարհի քաղաքականության մեջ՝ հակառակ Արևելյան կիսագնդի գործերից զերծ մնալու մեր ավանդական քաղաքականության:
3. Մարդասիրությունը պետք է սկսվի տանից: Բավականաչափ թվով բարդ իրավիճակներ կան, որոնք մեր գործողության կարիքն ունեն ամերիկյան ազդեցության քաջ հայտնի ոլորտներում:

REASONS AGAINST

1. The United States has prior and nearer foreign obligations, and ample responsibilities with domestic problems growing out of the war.
2. This region has been a battle ground of militarism and imperialism for centuries. There is every likelihood that ambitious nations will still maneuver for its control. It would weaken our position relative to Monroe doctrine and probably eventually involve us with a reconstituted Russia. The taking of a mandate in this region would bring the United States into the politics of the Old World, contrary to our traditional policy of keeping free of affairs in the Eastern Hemisphere.
3. Humanitarianism should begin at home. There is a sufficient number of difficult situations which call for our action within the well-recognized spheres of American influence.

4. Միացյալ Նահանգները ոչ մի կերպ չի նպաստել և պատասխանատվություն չի կրում այս տարածաշրջանում հասունացած քաղաքական, սոցիալական կամ տնտեսական պայմանների համար: Միանգամայն կշռադատված կլինի հրավերը մերժելը:
5. Ամերիկյան մարդասիրությունը և բարեգործությունն աշխարհին են հայտնի: Նման քաղաքականությունը տանելու է մեզ միջամտության կամ մեր մարդասիրության քաղաքականության ուժասպառության աստիճանի:
6. Այլ տերություններ, մասնավորապես Մեծ Բրիտանիան և Ռուսաստանը շարունակական հետաքրքրություն են ցուցաբերել Հայաստանի բարօրության հարցում: Մեծ Բրիտանիան կայացած է իր փորձառությամբ և կառավարմամբ, ունի դրամական մեծ ռեսուրսներ և կիրթ անձնակազմ և չնայած նա կարող է ըմբռնումով չմտենալ հայկական ձգտումներին, նրա իշխանությունը կերաշխավորի անվտանգություն և արդարություն:

Միացյալ Նահանգները չի կարող պահպանել արտաքին քաղաքականության շարունակականություն: Մի կոնգրեսը չի կարող մյուսին ինչ-որ բան պարտավորեցնել: Ան-

4. The United States has in no way contributed to and is not responsible for the conditions, political, social, or economic, that prevail in this region. It will be entirely consistent to decline the invitation.
5. American philanthropy and charity are world wide. Such policy would commit us to a policy of meddling or draw upon our philanthropy to the point of exhaustion.
6. Other powers, particularly Great Britain and Russia, have shown continued interest in the welfare of Armenia. Great Britain is fitted by experience and government, has great resources in money and trained personnel, and though she might not be as sympathetic to Armenian aspirations, her rule would guarantee security and justice.

The United States is not capable of sustaining a continuity of foreign policy. One Congress can not bind another. Even treaties can

զամ պայմանագրերը կարող են չեղյալ համարվել հասկացումների դադարեցմամբ: Մեր կառավարությունում դժվար է հասնել անկուսակցականության:

7. Մեր երկիրը պետք է մեծ ծախսեր անի, որոնք ըստ երևույթին կընդգրկեն բանակի և նավատորմի ընդլայնման ծախսերը: Ամերիկացիների մի սովոր գանգված ստիպված կլինի ծառայել զգվելի ու վտանգավոր հիվանդությունների երկրում: Եվ դեռ հարց է, թե արդյոք երկաթգծերը կկարողանան տարիներ շարունակ վճարել ներդրումների տոկոսները իրենց շատ բարդ կառուցվածքում: Երկաթգծերի համար կապիտալը չի հասնի նրանց առանց կառավարության երաշխիքի:

Գործադրած ջանքերն ու ծախսած դրամը պիտի հանգեցնեն առավել մոտ երկրների հետ առևտրի, քան ակնկալվում էր ունենալ Ռուսաստանում ու Ռումինիայում:

Մեր ձեռքումն ու մրցակցությունը կմեծացնեն մեր՝ կոնֆլիկտի մեջ ընդգրկվելու հավանականությունը այն պետությունների քաղաքականության և ձգտումների հետ, որոնք այժմ մեր ընկերներն են և դառնալու են մեր թշնամիները:

8. Մեր ոգին ու էներգիան կարող են ասպարեզ գտնել ներքին նա-

be nullified by cutting off appropriations. Nonpartisanship is difficult to attain in our Government.

7. Our country would be put to great expense, involving probably an increase of the Army and Navy. Large numbers of Americans would serve in a country of loathsome and dangerous diseases. It is questionable if railroads could for many years pay interest on investments in their very difficult construction. Capital for railways would not go there except on Government guaranty.

The effort and money spent would get us more trade in nearer lands than we could hope for in Russia and Roumania.

Proximity and competition would increase the possibility of our becoming involved in conflict with the policies and ambitions of states which now our friends would be made our rivals.

8. Our spirit and energy can find scope in do-

խաձեռնություններում կամ մեզանից հարավ և արևմուտք ձգվող մեր հողերում: Միջատությունը Մեր ձավոր Արևելքում կխլի մեզանից ռազմավարական առավելությունը Ատլանտյան օվկիանոսի երկայնքով, որն անցնում է մեր և հնարավոր հակառակորդների միջև:

Մեր արդար վարվելակերպի վարկանիշը կարող է արժեզրկվել: Մանդատի արդյունավետ վերահսկողությունը նման հեռավորության վրա դժվար կամ անհնարին կլինի: Մենք կարիք չունենք կամ չենք ցանկանում թրծվել հետագա համաշխարհային քաղաքականության մեջ:

9. Խաղաղություն ու արդարություն հավասարապես ապահովված կլինեն մեծ տերություններից ցանկացածի հսկողության տակ:

10. Դա կթուլացնի և կցրի մեր ուժը, որը պետք է պահպանվի ապագա պատասխանատվությունների համար Ամերիկյան մայրցամաքներում և Հեռավոր Արևելքում: Կ.Պոլսի հետ մեր շփման զիծը պետք է այլ ռազմածովային գերտերությունների վերահսկողության տակ լինի, հատկապես հետևյալ երթուղով. Մեծ Բրիտանիա՝ Ջիբրալթար, Մալթա և այլն:

mestic enterprises, or in lands south and west of ours. Intervention in the Near East would rob us of the strategic advantage enjoyed through the Atlantic which rolls between us and probable foes.

Our reputation for fair dealing might be impaired. Efficient supervision of a mandate at such distance would be difficult or impossible. We do not need or wish further education in world politics.

9. Peace and justice would be equally assured under any other of the great powers.

10. It would weaken and dissipate our strength which should be reserved for future responsibilities on the American continents and in the Far East. Our line of communication to Constantinople would be at the mercy of other naval powers, and especially of Great Britain, with Gibraltar and Malta, etc., on the route.

11. Այս ինստիտուտները հարգված են եղել անգամ թուրքերի կողմից պատերազմի ու ջարդերի ընթացքում, և ցանկացած այլ մանդատարարի կողմից համակրանք ու հարգանք կդրսևորվի:
12. Խաղաղության կոնֆերանսը Թուրքական կառավարությանն անշուշտ հայտնել է, որ վերջինս կարող է անցնել մանդատի տակ: Անհասկանալի է, որ Ազգերի Լիգան թույլ տա այս հիմնովին վարկաբեկված կառավարության կողմից հետագա անվերահսկելի ղեկավարում:
13. Ամերիկյան առաջին հերթին պարտականություններ ունի իր սեփական ժողովրդի և ավելի մոտ հարևանների առաջ:

Մեր երկիրն առնվազն մեկ սերնդափոխության ընթացքում պետք է ներքաշված լինի այս համարձակ ձեռնարկության մեջ, և, ըստ հաշվարկների, Կոնգրեսը պետք է պատրաստ լինի որոշ դեպքերում նախապես այնպիսի գումարներ վճարել և երբեմն էլ այնպիսի հաշիվներ, որ թուրքական և անդրկովկասյան եկամուտները չեն կարող իրենց թույլ տալ առաջիկա հինգ տարիների ընթացքում:

11. These institutions have been respected even by the Turks throughout the war and the massacres; and sympathy and respect would be shown by any other mandatory.
12. The peace conference has definitely informed the Turkish Government that it may expect to go under a mandate. It is not conceivable that the League of Nations would permit further uncontrolled rule by that thoroughly discredited government.
13. The first duty of America is to its own people and its nearer neighbors.

Our country would be involved in this adventure for at least a generation and in counting the cost Congress must be prepared to advance some such sums, less such amount as the Turkish and Transcaucasian revenues could afford, for the first five years, as follows:

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ	
Գլխավոր կառավարություն	\$ 100,000,000
Հաղորդակցություն, երկաթուղիներ և այլն	20,000,000
Օժանդակություն, հայրենադարձություն, կրթություն և այլն	50,000,000
Բանակ և նավատորմ	88,500,000
Առողջապահություն	17,000,000
Ընդամենը	275,000,000

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ	
Գլխավոր կառավարություն	75,000,000
Հաղորդակցություն, երկաթուղիներ և այլն	20,000,000
Օժանդակություն, կրթություն և այլն	13,000,000
Բանակ և նավատորմ	59,000,000
Առողջապահություն և այլն	7,264,000
Ընդամենը	174,264,000

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ	
Գլխավոր կառավարություն	\$ 50,000,000
Հաղորդակցություն, երկաթուղիներ և այլն	20,000,000
Օժանդակություն, կրթություն և այլն	100,000,000
Բանակ և նավատորմ	20,000,000
Առողջապահություն և այլն	<u>50,000,000</u>
Ընդամենը	123,750,000

FIRST YEAR.	
General government	\$100, 000,000
Communications, railroads, etc	20, 000,000
Relief, repatriation, education, etc	50,000,000
Army and Navy	88, 500, 000
Sanitation	17,000,000
Total	275, 000,000

SECOND YEAR.	
General government	75, 000, 000
Communications, railroads, etc	20, 000, 000
Relief, education, etc	13, 000, 000
Army and Navy	59, 000, 000
Sanitation, etc	7, 264, 000
Total	174,264,000

THIRD YEAR.	
General government	50, 000, 000
Communications, railroads, etc	20,000,000
Relief, education, etc	\$100, 000,000
Army and navy	20, 000,000
Sanitation, etc	50,000,000
Total	123,750,000

ՉՈՐՐՈՐՄ ՏԱՐԻ	
Գլխավոր կառավարություն	25,000,000
Հաղորդակցություն, երկաթուղիներ և այլն	20,000,000
Օժանդակություն, կրթություն և այլն	4,500,000
Բանակ և նավատորմ	44,250,000
Առողջապահություն և այլն	3,000,000
Ընդամենը	96,750,000

ՀԻՆՉԵՐՈՐՄ ՏԱՐԻ	
Գլխավոր կառավարություն	15,000,000
Հաղորդակցություն, երկաթուղիներ և այլն	20,000,000
Օժանդակություն, կրթություն և այլն	4,500,000
Բանակ և նավատորմ	44,250,000
Առողջապահություն և այլն	3,000,000
Ընդամենը	85,750,000

ԱՄՓՈՓՈՒՄ	
Ընդամենը առաջին տարում	275,500,000
Ընդամենը երկրորդ տարում	174,264,000
Ընդամենը երրորդ տարում	123,750,000
Ընդամենը չորրորդ տարում	96,750,000
Ընդամենը հինգերորդ տարում	85,750,000
Ընդհանուր գումար	796,014,000

FOURTH YEAR.	
General government	25,000,000
Communications, railroads, etc	20,000,000
Relief, education, etc	4,500,000
Army and navy	44,250,000
Sanitation, etc	3,000,000
Total	96,750,000

FIFTH YEAR.	
General government	15,000,000
Communications, railroads, etc	20,000,000
Relief, education, etc	4,500,000
Army and navy	44,250,000
Sanitation, etc	3,000,000
Total	85,750,000

SUMMARY	
Total first year	275,500,000
Total second year	174,264,000
Total third year	123,750,000
Total fourth year	96,750,000
Total fifth year	85,750,000
Grand total	756,014,000

Առանց Մերձավոր Արևելք այցելելու ամերիկացու համար անհնար է նույնիսկ աղոտ պատկերացում կազմել այն հարգանքի, հավատի ու ջերմության մասին, որ վայելում է մեր երկիրը այդ ողջ տարածաշրջանում: Արդյո՞ք աշխարհասփյուռ հեղինակությունն է, որ վայելում ենք արդար վարվելակերպի համար, միգուցե խաչակրաց ոգու մեծարումը, որ տանում է մեզ դեպի Մեծ պատերազմ՝ ոչ մի դեպքում չհուսադրելով, թե այդ ոգին կարող է լուծել այն մեծ խնդիրները, որոնք ծագել են այդ հակամարտությունից կամ թե անշահախնդիր և անաչառ առաքելությունն ու կրթական ազդեցությունը, որ գործադրվել են մեկ դարաշրջան, դա վստահությունն է, որ տաժում են նույն կերպ քիստոնյաներն ու մահմեդականները, հրեաները և հեթանոսները, արքայազնը ու գյուղացին Մերձավոր Արևելքում: Դա շատ ուրախալի է հայրենիքից հեռու գտնվող ամերիկացիների համար: Բայց դա բերում է մեծ խնդիրներ լուծելու ծանր պատասխանատվության այնպիսի լրջությամբ, որին արժանի է այդ վստահությունը: Նման պատասխանատվության բեռը, կարելի է ենթադրել նման տրամադրություններից, որ պետք է տանել ոչ պակաս, քան մեկ սերունդ այնպիսի պայմաններում, երբ մենք կարող ենք հեշտությամբ կորցնել աշխարհի

Without visiting the Near East it is not possible for an American to realize even faintly the respect, faith, and affection with which our country is regarded throughout that region. Whether it is the world-wide reputation which we enjoy for fair dealing, a tribute perhaps to the crusading spirit which carried us into the Great War, not untinged with hope that the same spirit may urge us into the solution of great problems growing out of that conflict, or whether due to unselfish and impartial missionary and educational influence exerted for a century, it is the one faith which is held alike by Christian and Moslem, by Jew and Gentile, by prince and peasant in the Near East. It is very gratifying to the pride of Americans far from home. But it brings with it the heavy responsibility of deciding great questions with a seriousness worthy of such faith. Burdens that might be assumed on the appeal of such sentiment would have to be carried for not less than a generation under circumstances so trying that we might easily forfeit the faith of the

վատահուրթունք: Եթե մենք հրա-
ժարվենք ստանձնել նման պատաս-
խանատվություն, անկախ այն բա-
նից, թե մեզ բավարարող ինչ պատ-
ճառներով կանենք դա, միլիոնավոր
մարդիկ կհամարեն, որ մենք անա-
վարտ ենք թողել այն խնդիրը, որի
համար մտել ենք պատերազմի մեջ,
և որ դավաճանել ենք իրենց հույսե-
րը:

Հարգանքներով՝

ՋԵՅՄՍ Գ. ՀԱՐԲՈՐԴ,

*Գեներալ-մայոր, Միացյալ
Նահանգների բանակ,
առաքելության ղեկավար*

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. – Ա-
ռաքելությունն աջակցության հա-
մար երախտագիտություն է հայտ-
նում Ամերիկյան գերագույն հանձ-
նակատար փոխծովակալ Մարկ Լ.
Բրիսթոլին (Միացյալ Նահանգների
նավատորմ) և Կ. Պոլսի գլխավոր
հյուպատոս Գ. Բ. Ռավնդալին,
Ամերիկայի հյուպատոսներ Ջեքսո-
նին՝ Հալեպում և Դուլիթլին՝ Թիֆ-
լիսում, ինչպես նաև Հայաստանում
դաշնակցային գերագույն հանձնա-
կատար գնդապետ Ու. Ն. Հասկելին
(Միացյալ Նահանգների բանակ):
Շնորհակալություն ենք հայտնում
նաև Կ. Պոլսի Կանանց ուսումնա-
րանի նախագահ դոկտոր Մերի
Միլլս Պատրիկին, Ռոբերտ քոլեջի

world. If we refuse to assu-
me it, for no matter what
reasons satisfactory to our-
selves, we shall be conside-
red by many millions of
people as having left unfini-
shed the task for which we
entered the war, and as ha-
ving betrayed their hopes.

Respectfully submitted.

JAMES G. HARBORD,

*Major General, United
States Army, Chief of
Mission.*

NOTE. – The mission is in-
debted for assistance to the
American high commis-
sioner, Rear Admiral Mark
L. Bristol, United States
Navy, and to Consul Gene-
ral G. B. Ravndal at Cons-
tantinople, to American
Consuls Jackson at Aleppo,
and Doolittle at Tiflis, as
well as to the allied high
commissioner to Armenia,
Col. W. N. Haskell, United
States Army. Acknowledg-
ments are also made to Dr.
Mary Mills Patrick, presi-
dent of the Woman's Col-
lege of Constantinople; to
the authorities of Robert

հեղինակավոր մասնագետներին,
մասնավորապես պրոֆեսոր Հու-
սեյն Բեյին, պարոնայք Բարթոնին,
Չեմբերսին, Քրիստիին, Ռիգսին,
Փարթրիջին, Ազգային համալսա-
րանի պրոֆեսոր Ռոբերտ Փ. Բլեյ-
քին, պարոն Բենջամին Բուրգես
Մուրին, Աստրկովկասում, Թիֆլի-
սում ամերիկյան քաղաքական հե-
տախուզական առաքելության ղե-
կավարին և տիկնայք Գրաֆամին ու
Ֆինենգային, ինչպես նաև Մերձա-
վոր Արևելքում Ամերիկյան օգնու-
թյան կոմիտեի և մի քանի միսիոներ-
րական կենտրոնների տարբեր ներ-
կայացուցիչների: Բոլոր այս նվիր-
ված միսիոներներն այս երկրում
աքսորի տարիներ են անցկացրել՝
իրենց կյանքը նվիրաբերելով նրա
բարօրությանը և վայելելով ոչ միայն
այն մարդկանց հարգանքը, ում
շրջանում նրանք ապրում են, այլ
նաև տարբեր օտարերկրյա ներկա-
յացուցիչների, ում կողմից նրանք
ճանաչված են: Ամերիկյան առաքե-
լությունն ու դպրոցները 100 տարի
շարունակ ակնհայտ ու հեռահար
արդյունքներ են ապահովել Ասիա-
կան Թուրքիայում և վատահուրթուն
են մեր երկրի համար: Առաքելու-
թյունը նաև պարտավորվածություն
ունի այն բոլոր երկրների պետա-
կան պաշտոնյաների առաջ, որտեղ
այցելել է և որտեղից իր գործունեու-
թյան ժամանակ բարեհաճ օգնու-
թյունից բացի ոչինչ չի ստացել:

College, particularly Prof.
Hussein Bey; and to Messrs.
Barton, Chambers, Christie,
Riggs, Partridge, Prof. Ro-
bert P. Blake, of National
University, Mr. Benjamin
Burgess Moore, chief Ame-
rican political intelligence
mission to the Transcauca-
sus, Tiflis, and Misses Graf-
fam and Fenanga, as well as
to various other representa-
tives of the American com-
mittee for relief in the Near
East, and of the several mis-
sionary centers. All of these
devoted missionaries have
passed years of exile in this
country, offering their lives
for its betterment, and have
the high respect of not only
the people among whom
they live, but of the various
foreign representatives to
whom they are known. Ame-
rican missions and schools
have for 100 years produced
striking and far-reaching re-
sults in Asiatic Turkey, and
are a credit to our country.
The mission is also under
obligation to government
officials in all the countries
visited, from whom it has
received nothing but cour-
teous assistance in its work.

ՅՈՒՑԱՆՄՈՒՇ Գ.

**ԱՆԱՏՈՒԼԻԱՅԻ ԵՎ ՌՈՒՄԵԼԻԱՅԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼԻԳԱՅԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ
ՏԵՍԱԿԵՏՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ
ՀԱՄԱՌՈՏ ՄԵՍՈՐԱՆՂՈՒՄ**

I. Մեր լիգան դեռևս գոյություն չուներ, երբ Բարձր Դուռը կնքել է 1919 թ. սեպտեմբերի 30-ի զինադադարը:

Այս կոնվենցիայի ավարտից հետո ազգությունների սկզբունքի հիման վրա, ինչպես ձևակերպել է Նախագահ Վիլսոնը, մեր ազգը հաստատապես հույս ուներ, թե ստանալու է արդարացի խաղաղություն և մեծ անհամբերությամբ ակնկալում էր խնդրի նման հանգուցալուծում: Իրողությունն այն է, որ զինադադարի իրագործումն Անտանտի տերությունների շրջանում տեղի տվեց օրինազանցությունների և դրա դրույթների խախտման:

Ոչ մահադատական հատվածները, ում հետ մենք հնուց ի վեր համատեղ կյանք ենք վարել, Ատլանտյան տերությունների կողմից իրենց նկատմամբ ցուցաբերված աջակցությունից ոգեշնչված՝ բաց հարձակման գնացին հա-

EXHIBIT C.

**CONDENSED
MEMORANDUM
CONCERNING THE
ORGANIZATION AND
POINTS OF VIEW OF THE
LEAGUE FOR THE
DEFENSE OF THE
RIGHTS OF ANATOLIA
AND ROUMELIA**

I. Our league was not in existence when the Sublime Porte signed the armistice of September 30, 1919.

After the conclusion of this convention on the basis of the principle of nationalities as formulated by President Wilson, our nation firmly entertained the hope that it would obtain a just peace and was eagerly looking forward to such a consummation. As a matter of fact, the carrying out of the armistice gave arbitrarily rise on the part of the Entente Powers to daily increasing transgressions and violations of its clauses.

The non-Moslem elements with which we have led a joint existence ab antique, encouraged by the favor shown to them by the Entente Powers, broke into open attacks on the

նուն ազգի և պետության արժանապատվության և իրավունքների:

Կ. Պոլիսը՝ իսլիֆայության և գահի նստավայրը, օկուպացված էր Անտանտի տերությունների ուժերի կողմից խիստ դաժան և բռնի կերպով: Ոստիկանությունն ու ժանդարմերիան անցել էին օկուպացնող ուժերի վերահսկողության տակ: Սա նշանակում էր փաստացի միջամտություն մայրաքաղաքի վարչական գործերին ու երկրի անկախությանը:

Ադանայի ու Ադալիայի շրջանները շրջափակված էին ընդհուպ մինչև Քոնիա: Չմյուռնիայի և շրջակա տարածքների, ինչպես նաև Թրակիայից մինչև Հունաստան ընկած տարածքների զիջումը և ընդարձակ հայկական պետության ստեղծումն Արևելյան Անատոլիայում մի կողմից և Կայսրության Սևծովյան ափի երկայնքով Պոնտական հանրապետության ստեղծումը մյուս կողմից սկսեցին լրջորեն քննարկվել:

Նման հանգամանքներում, բնական է, որ թուրք ժողովուրդը մեծապես ազդված կլինի իր տարածքային ամբողջականության և անկախության, ինչպես նաև իր արժանապատվության և այլ օրինական իրավունքների դեմ ուղղված գործողություններով:

Մյուս կողմից Կ. Պոլսում գումարված Պատգամավորական պալատի լուծարումով այն խորհուրդները, որոնք ժառանգաբար իշխանության են եկել և կազմված են եղել անաշխատունակ

dignity and rights of the nation and State.

Constantinople, the seat of the caliphate and throne, was occupied by the forces of the Entente Powers in a brutal and oppressive form. The police and the gendarmerie having been placed under the control of the occupying powers. This constituted a de facto interference with the administration of the capital and the independence of the country.

The regions of Adana and Adalia were occupied right up to Koniah. The cession of Smyrna and the surrounding territory as well as of Thrace to Greece and the creation of an extensive Armenian State in eastern Anatolia on the one hand, and of a Republic of the Pontus along the Black Sea shore of the Empire on the other hand, began to be seriously discussed.

It was natural, under these circumstances, that the Turkish nation should feel deeply affected by these operations directed against the integrity of its territory and independence as well as against its dignity and other legitimate rights.

On the other hand, the Chamber of Deputies, in session at Constantinople, having been dissolved, the cabinets which came to power in succession and were composed of incapable indivi-

անձանցից, ազգային ուժերի կողմից հեղինակություն չվայելեցին և խուսափեցին ազգի ներկայացուցիչների վերահսկողությունից: Ներկայումս հասկանալի է, որ այս կաբինետները ոչ միայն ազգի արժանապատվության ու իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ որակներ չունեին, այլ փաստորեն հույս էին դրել արտասահմանյան տերությունների, մասնավորապես Անգլիայի ցանկությունների բավարարմանը, ում ձեռքին նրանք պարզապես խաղալիք էին դարձել:

Այսպիսով, պարզվում է, որ ազգը, որ սկսել էր լրջորեն մտահոգվել իր գոյության հարցով, իր անհատական միջամտությամբ անմիջականորեն իր իշխանությունը և վարչական գործունեությունն ի ցույց դնելու անհրաժեշտություն է գգում:

Հետևանքն եղավ այն, որ երկրի բոլոր անկյուններում տարերայնորեն ստեղծվեցին ազգային կազմակերպություններ:

Այս կազմակերպություններից հասկապես կարևոր են հետևյալները. Հայրենիքի պաշտպանության Էրզրումի միությունը, Հայրենիքի պաշտպանության Դիարբեքի միությունը, Ազգային իրավունքների պաշտպանության Կիլիկիայի միությունը, Ազգային իրավունքների պաշտպանության Զմյուռնիայի միությունը (այս միությունը վերջերս ստացավ «Ազգային իրավունքների պաշտպանության և տարածքային զիջումների կանխման միություն»), Թրակիայի և Բլի փաշայի միությունը (այս միությունը, միավորվելով Արև-

duals did not derive their authority from the national forces and escaped the control of the representatives of the nation. Presently it was realized that these cabinets were not only lacking in the necessary qualities for defending the rights and dignity of the nation, but that they actually lent themselves to the satisfaction of the ambitions of the foreign powers, principally England, in whose hands they had become simple toys.

Thus it came to pass that the nation, which began to feel seriously concerned about its existence, felt the necessity of manifesting directly its power and administrative action by its personal intervention.

As a consequence, national organizations sprang up spontaneously in every part of the country.

Of these national organizations the following are the principal: The Erzeroum Association for the Defense of the Fatherland; the Diarbekir Association for the Defense of the Fatherland; The Cilicia Association for the Defense of National Rights; The Smyrna Association for the Defense of National Rights (this association latterly assumed the name of “Association for Defending the National Rights and Preventing Cession of Territory”); The Thrace and

մտյան Թրակիայի միությունների հետ, ընդունել է «Թրակիայի միություն» ընդհանուր անվանումը): Մի շարք միություններ ձևավորվեցին նաև Կ. Պոլսում, որոնցից ամենակարևորն է Ազգային միասնություն ասոցիացիան:

Այս ասոցիացիաները որևէ կապ չունեն գործող կամ ձևավորման ընթացքի մեջ գտնվող քաղաքական կուսակցությունների հետ: Ընդհակառակը, դրանք բացարձակապես զերծ են ամեն տեսակ քաղաքական նկրտումներից և իրենց գոյության համար պարտական են բացառապես ազգի և պետության տարածքային ամբողջականությունը պահպանելու և այլ իրավունքների ընդհանուր նպատակին: Նրանք բոլորը գործում են՝ ելնելով նույն ազդեցություններից և դրդապատճառներից:

II. Մինչ երկրի ողջ տարածքով ձևավորված այս ասոցիացիաները զբաղված էին իրենց կազմակերպությունը խիստ կարգապահորեն ու խաղաղասեր կերպով ընդարձակելով, նրանք անհամբերությամբ սպասում էին իրավունքի և արդարության սկզբունքների հաստատման: Հույներն օկուպացրել էին Զմյուռնիան և շրջապատող երկիրն Անտանտի երկրների հովանու ներքո և այս առիթով անասելի վայրագություններ էին իրականացնում: Հունական զորքերը և տեղի հույները, որ միացել էին նրանց և դարձել զինակիցներ, սկսում են մահմեդական բնակչության ընդհանուր բնա-

Pasha Ili Association (this association having combined with the associations of Western Thrace adopted the general denomination of “Association of Thrace”) A number of associations were also formed in Constantinople, of which the National Unity Association is the principal.

These associations have no connection whatsoever with the existing political parties or those in course of formation. On the contrary, they are entirely free from all political ambition and owe their existence exclusively to the common aim of safeguarding the territorial integrity and other rights of the Nation and State. They are all acting under the same influences and causes.

II. It was while these associations formed throughout the country Were busy extending their organization in a perfectly orderly and peaceful manner – they were looking forward with confidence to the assertion of the principles of right and justice – that the Greeks occupied Smyrna and the envioning country under the patronage of the Entente rowers and committed on this occasion untold atrocities. The Greek troops and the local Greeks who had joined them in arms started a general massacre of the Mussulmen population in which the officials

ջնջում, որի ընթացքում պաշտոնյաները և Օսմանյան սպաներն ու զինվորները, ինչպես նաև խաղաղ բնակիչները, առանց խտրականության մահվան են դատապարտվում և ենթարկվում խոշտանգումների ու տաժանակրության, որոնք հատուկ են ինկվիզիցիային, և գրանցվում են մարդու իրավունքների ոտնահարման բարբարոս դեպքեր:

Բնականաբար մահմեդական բնակչության շրջանում դժգոհության մեծ ալիք է բարձրանում: Նրանք օգնություն են խնդրում: Այսպիսով Ջյուռնիայի անմեղ ու տանջահար մահմեդականների ձայնը տարածվում է ողջ երկրով մեկ: Ողջ ազգը մեկ մարդու նման ոտքի էր կանգնել հույների բարբարոս թշնամական գործողությունների դեմ: Քաղաքներում և անգամ գյուղերում բողոքի ցույցեր են կազմակերպվում և հարյուրավորների կողմից հեռագրեր են ուղարկվում Անտանտի տերություններին և ողջ քաղաքակիրթ աշխարհին՝ թախանձագին խնդրելով պաշտպանություն և օգնություն: Մարդու իրավունքների ու արդարության վերականգնման համար մի ամբողջ ժողովրդի խնդրանքը մնում է անտեսված: Ընդհակառակը, հույներն ընդլայնեցին իրենց գործողությունների տարածքը, որոնք ուղեկցվում են իրենց նախկին զազանությունների շարունակականությամբ: Կ. Պոլսում անգլիացիների ճնշամիջոցները, գործելով Կեստրոնական կառավարության հետ համատեղ, ավելի խիստ բնույթ կրեցին: Իտալական զորքերն ընդարձակվել էին Ադալիայում: Կիլիկիայում մահմեդական բնակչությունը

and Ottoman officers and soldiers as well as the peaceful inhabitants were indiscriminately put to death and subjected to forms of torture and savagery worthy of the Inquisition and constituting in any case a barbarous violation of the laws of humanity.

Naturally the outcry was great among the Mussulmen population. It appealed for help. The voice thus raised by the innocent and tormented Mussulmen of Smyrna reverberated throughout the land. The whole nation rose as one man to oppose the barbarously hostile action of the Greeks. Meetings were organized in the towns and even in the villages and telegrams dispatched by the hundred to the Entente Powers and the whole civilized world, tearfully appealing for protection and help. These solicitations of a whole people for a reversion to the laws of humanity and justice remained unheard. On the contrary the Greeks extended the zone of their operations to the continued accompaniment of their first atrocities. In Constantinople the oppressive measures of the English acting in conjunction with the Central Government took a severer form. The Italian forces in Adalia were increased. In Cilicia the Mussulmen population conti-

շարունակում էր ենթարկվել անարգանքի ու բռնության և ավելի ուժեղ միջոցներ էին որդեգրվել թուրքական իշխանությունը ճնշելու համար: Հունական հրոսակախմբերը, որոնց գործողությունները ղեկավարվում էր Կ. Պոլսից ու Ջյուռնիայից, բազմապատկում էին մահմեդականների նկատմամբ բռնությունները*:

Այս ընթացքում Ֆերիդ փաշայի կաբինետին, որ բացարձակապես անհաղորդ է իր ժողովրդի ապրումներին ու պահանջներին, առաջարկվում է պատվիրակություն ուղարկել Փարիզ: Վերաբերմունքը, որին մեր պատվիրակներն արժանացան կոնգրեսի ընթացքում, անհարգալից վերաբերմունքի ևս մեկ օրինակ էր, որ ընդունված է ցուցաբերել թուրքիայի նկատմամբ:

III. Ազգը, գիտակցելով, որ իր փրկությունն ընդհանուր և համատեղ կազմակերպության ձևավորման մեջ է, գործում է կատարելապես միասնաբար: Տրապիզոնի ու Էրզրումի բնակչությունը 1919-ի հունիսին համաժողովի հերթական գումարման ժամանակ քայլեր ձեռնարկեց այն վերջին քաղաքում, որտեղից պետք է սկսվեր արևելյան վիլայեթների միավորումը: Միևնույն ժամանակ Սվազի համագումարի՝ Ամասիայում կայացած նիստի ընթացքում որոշում է ընդունվում ողջ Անատոլիայի և Ռումելիայի միավորման վերաբերյալ:

nued to be subjected to insult and outrage and reenforced measures were adopted for the suppression of Turkish authority. The Greek bands whose activity was directed from Constantinople and Smyrna indulged in increased outrages at the expense of the Mussulmen element.

At this juncture the Ferid Pasha cabinet, which in no wise represents the feelings and wishes of the nation, was invited to send a delegation to Paris. The treatment with which our delegates met at the congress was only another instance added to so many others of the offensive attitude so easily adopted toward Turkey.

III. The nation, realizing that salvation resided in the formation of a general and joint organization acting in perfect unity. The population of Trebizond and Erzeroum took steps in June, 1919, in view of the convocation of a congress in the latter town which was to bring about the unification of the eastern vilayets. At the same time a resolution was adopted at Amassia for the meeting of a congress at Sivas for the unification of the whole of Anatolia and Roumelia.

* Իշխանությունը գրավելու իր գործողությունները Մուստաֆա Քեմալը արդարացնում է՝ հույներին մեղադրելով նրա մեջ, ինչի հեղինակներն իրենք թուրքերն են: (Ա. Ղ.)

1919-ի հուլիսի 23-ին Էրզրումում գումարվում է նախատեսված համաժողովներից առաջինը: Այն կազմված էր Արևելյան Անատոլիայի վիլայեթների, ենթապրեֆեկտուրաների և կազաների (Թուրքիայի հանրապետության առաջին տարիներին համապատասխան վարչական միավոր ուներ կազանվանումը) ընտրյալ ներկայացուցիչներից: Նստաշրջանը տևեց 15 օր: (Իր հիմնական որոշումներով, կազմակերպման համակարգով, նպատակներով և տեսակետներով հայտարարագիրը սկզբունքորեն նույնն է, ինչ Սվազի կոնգրեսի հայտարարությունը և կցված է այս հուշագրի թուրքական բնօրինակին):

1919 թ. սեպտեմբերի չորսին երկրորդ համագումարը տեղի ունեցավ Սվազում: Այն կազմված էր Արևմտյան Անատոլիայի և Ռումելիայի ընտրյալ ներկայացուցիչներից և Էրզրումի կոնգրեսի անունից գործող արտոնյալ պատվիրակներից և գործում էր Արևելյան Անատոլիայի անունից: Դրա կազմում ընդգրկված էին Արևելյան Անատոլիայից և Ռումելիայից ընտրված ներկայացուցիչներ և Արևելյան Անատոլիայի անունից հանդես եկող արտակարգ լիազորված պատվիրակների խումբ՝ ընտրված Էրզրումի համաժողովի կողմից: Վերջին կոնգրեսն արդեն հաստատել է ազգային շարժման գործողության առանցքային դրույթները, Սվազի կոնգրեսն ավարտեց քննարկումները և մեկ շաբաթվա ընթացքում կայացրեց իր վճիռները: (Այդ բանաձևերը, ինչպես վերը նշվեց, կցված են ներկա հուշագրին):

On the 23d of July, 1919, the first of the intended congresses met at Erzeroum. It was composed of the elected representatives of all the vilayets, sub-prefectures, and cazas of eastern Anatolia. It remained in session 15 days. (The proclamation embodying its essential resolutions, system of organization, aims, and points of view is in principle the same as that of the congress that followed at Sivas and is annexed in the Turkish original to this memorandum.)

On the fourth of September 1919, the second Congress met at Sivas. It was composed of the elected representatives of western Anatolia and Roumelia and, acting in the name of eastern Anatolia, a body of fully empowered delegates elected by the Congress of Erzeroum. The latter Congress having already established the principal basis of action of the national movement, the Sivas Congress completed its deliberations and adopted its resolutions in the course of a week. (These resolutions as mentioned above are annexed to the present memorandum.)

Այդ ընդհանուր համաժողովում ևս մեկ անգամ հաստատվեց, որ կայսրության բոլոր այն հատվածները, որ Թուրքիայի իշխանության տակ էին Բարձր Դռան և Անտանտի տերությունների միջև զինադադարի կնքման ժամանակ, տարածքային մեկ ընդհանուր միավոր էին կազմում և որ նույն հավատքի մեր հայրենակիցները կազմում էին միավորված մարմին՝ հետապնդելով կատարյալ միաբնությունում մեկ նպատակ: Այս կոնգրեսն ստացավ «Անատոլիայի և Ռումելիայի իրավունքների պաշտպանության լիգա» անվանումը: Այս կերպ ողջ ազգը և նրա զավակներից հավաքագրված օսմանյան բանակը, ում առաջնահերթ պարտականությունը հայրենիքի պաշտպանությունն է, կազմում են մեր ուժի աղբյուրները:

«Ներկայացուցիչների կոմիտե» էր ընտրվել գերտերությունների կողմից ընդհանուր հայտարարի գալու և կազմակերպության գործերը վարելու համար:

IV. Ինչպես նշված է կից կարգվորումների ցանկում, մեր Լիգայի ամենազխսավոր նպատակը մի կողմից արդեն նշված սահմաններում Օսմանյան հայրենիքի տարածքային ամբողջականության պահպանման և ազգային անկախության, խալիֆայության իրավունքների և գահի պաշտպանության գործնի ներքո ազգային ուժեր ստեղծելն է, և մյուս կողմից՝ ազգային կամքի գերակայության հաստատումը:

At this general Congress it was once more established that all those parts of the Empire which were under Turkish authority at the time of the conclusion of the armistice between the Sublime Porte and the Entente Powers formed one joint block of territory and that our compatriots of the same faith formed a united body pursuing one aim in perfect unison. This Congress took the name of "League for the Defense of the Rights of Anatolia and Roumelia." In this fashion the whole nation and the Ottoman Army which is recruited from among the sons of the nation and whose primary duty is the defense of the Fatherland form the sources of our strength.

A "committee of representatives" was elected with powers to pursue the common end and to administer the affairs of the organization.

IV. As shown in the annexed regulations, the foremost object of our league is, on the one hand, to constitute the national forces into a factor for the maintenance of the territorial integrity of the Ottoman Fatherland within the borders already mentioned and for the defense of the national independence and the rights of the caliphate and throne and, on the other hand, to establish the supremacy of the national will.

Ինչ վերաբերում է մեր ոչ մահմեդական հայրենակիցներին, ում հետ միասին մենք ապրել ենք այսքան երկար տարիներ (հայեր, հույներ, հրեաներ և այլք), մենք միայն անկեղծ լավագույն մտադրություններ ունենք նրանց նկատմամբ և նրանց կատարելապես հավասար ենք համարում մեզ իրենց իրավունքներով: Մենք միանգամայն համոզված ենք, որ եթե երկիրն ազատվի չար ազդեցություններից և առաջարկներից, որոնք մինչև այժմ գործել են, ապա կայսրության տարբեր ազգեր մեկը մյուսի հետ կապրեն խաղաղության մեջ և կվարեն ընդհանուր ուրախ և բարգավաճ կյանք (հատկանշական է խոստովանությունը հայերի հետ Թուրքիայում հավասար իրավունքներ ունենալու խոստովանությունը Մուստաֆա Քեմալի կողմից, պետք է միայն հարցնել՝ թե ի՞նչ եղան այդ հայ հայրենակիցները – Ա. Ղ.):

Մեր բարձր ու վեհ նպատակները բացառում են Անտանտի տերությունների դեմ որևէ ագրեսիվ մտադրություն: Ինչևէ, մեզ համար բնական և անխուսափելի կլինի պաշտպանել ինքներս մեզ և վրեժխնդիր լինել ի պատասխան հարձակումների ընդդեմ մեր գոյության՝ խախտելով արդարության և մարդկության օրենքները:

V. Ցավալի է, որ երբ մեր նպատակների էությունը պետք է բխի մեր մեկնաբանություններից, ինչպես նաև մեր գործողություններից, մի շարք չարամիտ և չարակամ անհատներ, սկսելով խեղաթյուրված և սուտ լուրերի արշավ, ձգտում են մեր մտադրություն-

Concerning our non-Moslem compatriots with whom we have lived together for such a long time (Armenians, Greeks, Jews, etc.) we have no other point of view or feeling than to be sincerely animated with the best intentions toward them and to consider them entitled to perfect equality with ourselves. We are absolutely certain that if the country is freed from the evil influences and suggestions which have been at work in its midst so far, the different races of the Empire will live in peace with one another and lead, in common, a happy and prosperous life.

The high and pure aims which are ours exclude all aggressive intentions against the Entente Powers. It will be natural and inevitable for us, however, to defend ourselves and retaliate in answer to attacks in a material form upon our existence in violation of the laws of justice and humanity.

V. It is to be deplored that whereas the nature of our aims was to be gathered from our explanations as well as from our acts, a number of evil-minded and malevolent individuals, starting a campaign of misrepresentation and false ru-

ներին այնպիսի ձևեր վերագրել, որոնք երբևէ չեն անցել մեր մտքով և որևէ կապ չունեն ճշմարտության հետ: Այս առումով ամենահեռուն են գնացել անգլիացիները և Ֆերիդ փաշայի կաբինետը, որն, ինչպես արդեն ասվել է, ոչ այլ ինչ է, եթե ոչ գործիք նրանց ձեռքին:

Ֆերիդ փաշան և իր գործընկերները համոզված են, որ իրենք չէին կարողանա վայելել որևէ իշխանություն, եթե կառավարումն իրականացվեր սահմանադրական ու ազատական ուղիներով և ապավիներ ազգային ուժերին: Ահա թե ինչու իր հասունությունն ապացուցած և իր ընդհանուր կարողությունը, ինչպես նաև իր քաղաքացիական և բնական իրավունքների գիտակցումը ցույց տված ազգը այս կաբինետի միակ մտահոգությունն է. այն ցանկանում է ջախջախել ազգային կազմակերպությունը և դրա գործունեությունը: Այս արշավում նրա զենքերից մեկը վախն է միութենականներից, նրանցից, ովքեր նման աննախանձելի համբավ են ձեռք բերել ողջ աշխարհում մի քանի տարի տևած վատ կառավարմամբ՝ ի վնաս ազգի և իրենց վերջին հանցագործությամբ, որը տանում էր երկիրը դեպի անդունդ, որից դուրս գալու համար նման դժվարությունների միջով է անցնում: Շահարկելով նման մտավախությունը, ներկա կաբինետն անմտորեն ձգտում է վարկաբեկել մեր գործունեությունը, որը զերծ է ամեն տեսակ շահադիտական նկրտումներից և կատարելապես ազգային նպատակներ է հետապնդում՝ դրանք ներկայաց-

mors, sought to attribute to our intentions forms which never crossed our minds and had no connection whatever with truth. In this respect, those who went furthest are the English and the Ferid Pasha cabinet which, as already stated, is but a tool in their hands.

Ferid Pasha and his colleagues are convinced that they could not enjoy any authority whatsoever if the administration was run on constitutional and liberal lines and rested on the national forces. That is why, the nation, having given proof of its maturity and shown its general capability as well as its consciousness of its civil and natural rights, the only concern of this cabinet is to crush the national organization and its action. In this campaign one of its weapons is the fear of the unionists, those unionists who gained such unenviable notoriety the world over by their misrule lasting several years to the great detriment of the nation and by their last crime which was to plunge the country into an abyss from which it is experiencing such difficulty in extricating itself. Speculating on this fear the present cabinet is fatuously seeking to discredit our action which is free from every kind of self-seeking ambition and is pursuing thoroughly national aims by representing these as

նելով որպէս միասնականության բաղկացուցիչ մաս: Մյուս գէնքը, որից կաբինետը կառուում է, վախն է բոլշևիզմից: Պաշտոնական հաղորդագրություններում նրանք ձգտում են գլուխ բերել նահանգային կառավարիչների հարցը, նրանք չեն ամաչում պնդել, թէ բոլշևիկները մտել են Անատոլիա և մեր բոլոր ակտիվիստները ոգեշնչված են նրանցով:

Իրականում մենք ավելի լավ ենք հասկանում և գնահատում այն ցավալի հետևանքները, դեպի որոնք առաջնորդեց ազգային միութենական այդ շարժումը, քան Ֆերիդ փաշան ու նրա համախոհները: Մեր նպատակը, այնքան հեռու լինելով մեր հայրենիքի և ազգի գոյությանը վերջին հարված հասցնելու մղումից՝ սկսելով արկածներից, շարունակելն է մեծագույն խորաթափանցությամբ և հեռատեսությամբ և միջոցներ գտնել նրանց գոյությունն ու բարեկեցությունն ապահովելու համար: Հետևաբար, մեր և միութենականների միջև չի կարող որևէ հարաբերություն լինել:

Ինչ վերաբերում է բոլշևիկներին, ապա այս վարդապետությունը մեր երկրում տեղ չունի, մեր կրոնը, ավանդույթները, ինչպես նաև մեր հասարակական կարգը խիստ անբարենպաստ են դրանք մեր երկիր ներմուծելու համար: Թուրքիայում ո՛չ խոշոր կապիտալիստներ կան, ո՛չ միլիոնավոր արհեստագործներ ու աշխատավորներ: Մյուս կողմից մենք ծանրաբեռնված չենք ազրարային խնդրով: Ի վերջո, հասարակական տեսանկյունից մեր կրո-

being connected with unionism. Another weapon to which the cabinet clings is the fear of bolshevism. In the official communications they are striving to get through to the provincial governors, they are not ashamed to assert that the Bolsheviks have entered Anatolia and that all our activities are inspired by them.

As a matter of fact we realize and estimate the painful consequences to which unionism has led the nation much better than Ferid Pasha and his likes. Our object, so far from being to deal the last blow to the existence of our fatherland and nation by launching upon adventures, is to proceed with the greatest discrimination and forethought and to find the means for insuring their survival and welfare. Consequently there can be no relationship between us and the unionists.

As to the Bolsheviks, there is no room whatever in our country for this doctrine, our religion and customs as well as our social organization being entirely unfavorable to its implantation. In Turkey there are neither great capitalists nor millions of artisans and workingmen. On the other hand, we are not saddled with an agrarian question. Finally, from the social point of view, our

նական սկզբունքներն այնպիսին են, որ բոլշևիզմի ընդունումը կբաժանի մեզ: Լավագույն ապացույցը, որ թուրք ազգը հակված չէ հոգուտ այս գաղափարախոսության և որ անհրաժեշտության դեպքում պատրաստ է պայքարել դրա դեմ, պետք է գտնել Ֆերիդ փաշայի փորձի մեջ՝ խաբել ժողովրդին՝ վերջինիս մեջ վախ սերմանելով, թէ բոլշևիկները զավթել են երկիրը կամ դա անելու շեմին են: Ֆերիդ փաշայի կաբինետն իսկապես անգլիացիների ծավալապաշտական նկրտումները սահմանափակելու չափանիշ է: Վերջիններս, իրենց ծրագրերը կազմելով Հնդկաստանում, Եգիպտոսում և այլ երկրներում իրենց ունեցած փորձի հիման վրա, որոնց վրա կարողացել են հաստատել իրենց կամայական իշխանությունը, շատ լավ հասկանում են, որ թուրք ազգին իջեցնելով մարդկային արժանապատվության բոլոր զգացումներից և բոլոր ազգային և հայրենասիրական արժանիքներից, ինչպես նաև ազատության և կրթության իրավունքից զուրկ մի ամբողջի դրության, նրանք կկարողանան իջեցնել այն իրենց կամքին ենթարկվող ստրուկների աստիճանի: Սա այն ավարտն է, որի ուղղությամբ նրանք աշխատում են՝ դիմելով բազմաթիվ հնարքների՝ դրանք նպատակին հասցնելու մտադրությամբ: Մեջբերենք մի քանի օրինակ նրանց մարտավարությունից.

ա) Անարդարացիորեն մեղադրանք ներկայացնելով միութենական շարժման ներկայացուցիչ, անգլիացիներին ընդդիմադիր և ոչ ընդդիմադիր մի

religious principles are such as to dispense us with the adoption of bolshevism. The best proof that the Turkish nation has no leanings in favor of this doctrine and that, if necessary, it is ready to combat it, is to be found in the attempt of Ferid Pasha to deceive the nation by way of alarming it into the belief that bolshevism has invaded the land or is on the point of doing so. The Ferid Pasha cabinet is truly a coat cut to measure of the expansionist ambitions of the English. The latter, founding their plans on their experiences in India, Egypt, and the other countries they have succeeded in bringing under their arbitrary rule, realize full well that after reducing the Turkish nation to the condition of a flock deprived of all sense of human dignity and all national and patriotic virtues, as well as of the right of liberty and education, they will be able to degrade it into a troop of slaves bowing to their will. This is the end toward which they are working, having recourse to numberless intrigues in our midst in view of its attainment. To quote a few instance of their tactics:

(a) Falsely accusing quite a number of Ottoman citizens of unionism, opposition to England, and what not, they proceeded to arrest and exile

շարք օսմանյան քաղաքացիների նկատմամբ՝ նրանք ձեռնամուխ են լինում նրանց ձեռքակալմանն ու արտաքսմանը՝ այդպիսով միջամտելով երկրի դատական իրավունքներին: Դրանից բացի նրանք զբաղված են այն ազգայնականների և հայրենասերների ձեռքակալման համար պատճառներ բացահայտելով կամ ստեղծելով, որոնք մնացել են երկրում և օգտագործում են կառավարությունը որպես գործիք նրանց հետապնդելու համար:

բ) Կայսրությունը մասնատելու և բուրքերին ու քրդերին եղբայրասպան պայքարի մղելու մտադրությամբ նրանք վերջիններիս հրահրում էին միանալ Անգլիայի հովանու ներքո անկախ Քուրդիստանի ստեղծման ծրագրին՝ առաջ քաշելով այն փաստարկը, որ բոլոր դեպքերում կայսրությունը դատապարտված էր քայքայման կամ կազմալուծման: Այս նախաձեռնությունն իրականացնելու համար նրանք մեծ գումարներ են ծախսել, դիմել են ամեն տեսակ լրտեսական գործողությունների և անգամ գաղտնի գործակալներ են ուղարկել այնտեղ: Այսպես, Նայվիլ անունով մի անգլիացի սպա այս դիտավորությամբ երկար ժամանակով գործի է անցել Դիարբեքիում, իր գործողություններում կիրառելով ցանկացած տեսակի խարդախություն և խաբեություն: Բայց մեր քուրդ հայրենակիցները, կռահելով, թե ինչ է նախապատրաստվում, վտարում են նրան այնտեղից, ինչպես նաև մի խումբ դավաճանների, ովքեր վաճառել էին իրենց խիղճը հանուն փողի: Դիարբեքիում

them, thus tampering with the country's judicial rights. Besides this, they are busy discovering or creating reasons for the arrest of the Nationalists and patriots remaining in the country and employ the Government as an instrument for persecuting them.

(b) With the idea of bringing about the partition of the Empire and creating a fratricidal struggle between Turks and Kurds, they incited the latter to join in a plan for the establishment of an independent Kurdistan under English protection, the argument put forward by them being that the Empire was, in any case, condemned to dissolution. For the carrying out of this enterprise they spent large sums of money, had recourse to every form of espionage, and even sent emissaries on the spot. Thus an English officer of the name of Naivill exerted himself in this sense for a long time at Diarbekir, having recourse to every kind of fraud and deception in his operations. But our Kurd compatriots, guessing what was on foot, drove him out of the place as well as a handful of traitors who had sold their consciences for money. Disappointed in his action at Kiar-

իր գործողություններից հիասթափված, պրև. Նայվիլն ուղևորվեց դեպի Մալաթիա Բեդրիհան կլանի մի քանի արկածախնդիրների հետ, նրանց կաշառել էր փողով, բայց ովքեր ազգակիցներով, ինչպես օրինակ Կիամուրան, Ջալադոհ և Դիարբեքիլի, Ջեմիլ փաշա Լադե էքրեմ, վստահություն չէին վայելում: Այնտեղ նա վերսկսում է անկախ Քուրդիստան ստեղծելու իր փորձը մութեսարիֆ (ենթակառավարիչ) Խասիլ բեկի հետ համատեղ, ով նույնպես Բեդրիհան կլանի անդամ էր:

Մյուս կողմից, միանալով Ներքին գործերի նախարար Էսապաշտ Աբիլ բեկի և նույնպես Էսապաշտ զինվորական նախարար Սուլեյման Չեֆիկ փաշայի (ուս վստահվել էր ազգային շարժման և հատկապես Սվազի կոնգրեսի դեմ միջոցներ ձեռնարկելու գործը) ձեռքին գործիք դարձած Խարբեքի վալի Ղալիլ բեկին՝ նա իր համախոհների հետ սկսեց աղաղակել այն մասին, թե. «Հայ զինվորները պատրաստվում են տիրանալ մեր երկրին. ի զե՛ն»՝ այդպիսով մտադիր լինելով ապստամբության հրահրել մեր պարզամիտ քուրդ հայրենակիցներին: Այս չարագործ ծրագիրը միտված էր երեք նպատակի՝ վերականգնել քրդերի պառակտվածությունը, կործանել ազգային ուժերը, ընդհարում ու արյունահեղություն ստեղծել միևնույն երկրի զավակների միջև: Դավադիրները չեն վարանում անգամ կանխատեսվող ողբերգության մեջ ներգրավել գորքերի այն գունդը, որ Ղալիլ

bekir, Mr. Naivill betook himself to Malatia with several adventurers belonging to the Bedrihan clan and whom he had won over with money but who enjoy no credit with their kinsmen such as Kiamouran, Djaladoh, and Diarbekirli, Djemil Pasha Lade⁶ Ekrem. There he renewed his attempt in view of the establishment of an independent Kurdistan in collaboration with the mutesarif (sub-governor), Khasil Bey, also a member of the Bedrihan clan.

On the other hand, combining with the Vali of Kharput, Ghalil Bey – an instrument of the self-seeking Minister of the Interior Abil Bey and the likewise self-seeking Minister of War Suleyman Chefik Pasha – who was committed to take measures against the national movement and more especially against the Sivas Congress, he and the crowd of his associates started the cry, “The Armenian soldiers are going to occupy the country – to arms,” intending in this manner to provoke a rising of our simple-minded Kurdish compatriots. The object of this wicked plan was threefold: To resuscitate Kurdish particularism, to destroy the national forces, and to create a conflict and the shedding of blood between children of the same

⁶ S D—66-2—vol 15—35

բեկը խնդրել էր՝ պատրվակով, թե անձամբ հետապնդում են հրոսակների այն խմբին, որին թելադրվել է կողոպտել փոստը: (Այս գործին առնչվող որոշ փաստաթղթեր կցված են ներկա հուշագրին):

Այս մարդիկ շփոթության մեջ են ընկնում, ինչը կարելի էր ակնկալել նրանց կողմից ազգային ուժերը թերագնահատելու պատճառով: Տեղի բնակչությունը, որն անմասն էր մնացել բոլոր այս դավադրություններից, շատ շուտով հասկացավ դրանց հանցագործ նշանակությունը և պատրաստվում էր հանցագործներին կալանավորել, երբ նրանք արդեն փախել էին:

գ) Մինչ Էսկի Շեհիրում կատարյալ անդորր էր տիրում, անգլիական զորքերը մտնում են տեղի հրամանատար գնդապետ Աթիֆ բեկի տուն և նրա դեմ ներկայացնելով ամենաանհավանական զրպարտություններ՝ իր զինվորների առաջ նրան նվաստացնում են և ուղարկում Կ. Պոլիս հատուկ ուղեկցությամբ: Ի բացատրություն տեղի բնակչության մեջ ծագած շատ բնական հուզումների և վրդովմունքի՝ ընդդեմ նման բռնության, անգլիացիները հաղորդագրություններ են տարածում այն մասին, թե բուլշևիկներն ու միութենականները տիրել են այդ շրջանին և այս պատրվակով այդ տեղանքում հատուկ ռազմական միջոցներ են ձեռնարկվում:

country. The conspirators did not even shrink from trying to implicate in the projected tragedy a detachment of troops Ghalil Bey had asked for under pretense of pursuing personally a band of brigands which was said to have ransacked the mail. (Several documents concerning this affair are annexed to the present memorandum.)

These individuals met with the confusion which was to be expected of their underestimation of the national forces. The local population which remained innocent of all participation in these intrigues very soon understood their criminal meaning and was proceeding to take the culprits into custody when they fled.

(c) While perfect tranquillity was reigning in Eski Shehir, English troops entered the house of the local commandant, Col. Atif Bey, and putting forward the most unlikely calumnies against him, carried him off under the eyes of his soldiers and sent him under escort to Constantinople. In explanation of the emotion and effervescence very naturally caused among the local population by the outrage the English spread reports to the effect that the Bolsheviks and unionists were invading the district and on this pretense adopted special military measures in the locality.

դ) Ֆերիդ փաշան հեռագրային գործակալությունների միջոցով հրապարակում է մի զեկույց այն մասին, որ խոսվություններ են տեղի ունենում Անատոլիայում, և իր համախոհ անգլիացիները, փաստելով, որ հայերը բռնությունների զոհ են դառնում Սվազում, սպառնական նամակ են հղում Բարձր Դռանը: Մինևույն ժամանակ զավթված տարածքում բողոքի ալիք է բարձրանում ի դեմս այն բանի, որ քրիստոնյաների ջարդը ծրագրվում է Մարզվանում: Իրականում ոչ միայն հիմնովին չի հաստատվել, որ նման դեպք է տեղի ունեցել, այլև ոչ մի հավանականություն չկա, որ նման բան կարող է պատահել: Ընդհակառակը, ընդհարումները, որոնք մինչև ազգային շարժման ձևավորումը տեղի էին ունենում Սամսունի շրջանում, քաղաքական նպատակներով ստեղծված հունական ջոկատների և մահմեդական բնակչության միջև (որոնց դեմ նրանք գործի էին դնում իրենց վայրագությունը և որոնք բանակի ու ժանդարմերիայի կողմից որևէ աջակցության բացակայության պատճառով ստիպված էին անցնել ինքնապաշտպանության) ազգային կազմակերպության կողմից երկու կողմերին տրված խորհրդով և գործելու որևէ միջոց չունենալու պատճառով դադարեցվել են: Այստեղ, ինչպես և երկրի մյուս հատվածներում, ներկայումս կատարյալ խաղաղություն է տիրում:

(d) Ferid Pasha publishes, by means of the telegraphic agencies, the report that disturbances are taking place in Anatolia and his accomplices, the English, making out that the Armenians are being made the victims of outrages in Sivas, addresses a minatory note to the Sublime Porte. At the same time an outcry is raised on the invaded ground that a massacre of the Christians is being planned at Marzivan. As a matter of fact, not only has it been ascertained materially that no such things have happened, but that there is absolutely no likelihood of their occurring. On the contrary, the encounters which were taking place in the region of Samsoun before the organization of the national movement between the Greek bands formed with a political object and the Musulmen population against which the former were practicing their ferocity and who, in the absence of all protection on the part of the army and gendarmerie, was forced to act in self-defense, have stopped as a result of the advice given to both sides by the national organization and without recourse having been had to measures of force. To-day perfect tranquillity reigns in this region as in the other parts of the country.

VI. Հայաստանի Հանրապետության դեմ, որի կենտրոնն է Երևանը, մենք ոչ մի տեսակ անբարյացակամ տրամադրվածություն չունենք: Ներկայումս լիզան ոչ մի կապ չունի այս պետության հետ և հետաքրքրված չէ նրանով: Նրա վերաբերյալ մեր ունեցած տեղեկությունները հիմնված են ասեկոսների ու անուղղակի տեղեկությունների վրա: Իմացածը, սակայն, բավական է փաստելու համար, որ հայերն իրենց նոր պետությունում Հայկական կորպուսի հրամանատարի հրահանգով մահմեդականներին բնաջնջելու գործողություններ են իրականացնում: Մենք ինքներս ենք տեսել նրանց հրամանների պատճենները: Այն, որ Էրիվանի հայերը մահմեդականների բնաջնջման քաղաքականություն են իրականացնում և արյունահեղության ալիքը տարածվել է մինչև մեր սահմանը, ամրագրվում է մեր սահմաններում բազմաթիվ մահմեդականների գտնվելու փաստով, որոնք մահից փախչում են սահմանի մյուս կողմում: Մյուս կողմից, Երևանի կառավարությունը դիմում է բախումների դրող այնպիսի ուղղակի գործողությունների, ինչպես կրակոցների արձակումն է դեպի սահմանային այս գոտի:

Չնայած իրադարձությունների այս ընթացքին, անգլիացիները մի կողմից խրախուսում էին մահմեդականների դեմ հայերի վերաբերմունքը կամ հրահրում հայերին նրանց դեմ, մյուս կողմից, թվելով նախկինում տեղի ունեցած բռնությունները և դրանք անտանելի որակելով, նրանք ստիպում էին մեզ

VI. We entertain no unfriendly dispositions toward the Armenian Republic of which Erivan is the center. For the present the league has no relations with this State and is not interested in it. Our knowledge concerning it is derived from rumors and indirect information. We know, however, so much to be a fact that the Armenians in the new State are carrying on operations in view of exterminating the Mussulmen element in obedience to orders from the Armenian corps commander. We have had copies of their orders under our eyes. That the Armenians of Erivan are following a policy of extermination against the Mussulmen and this wave of sanguinary savagery has spread right up to our frontier is also established by the fact of the presence within our borders of numerous Mussulmen fleeing from death on the other side. The government of Erivan has, on the other hand, resorted to direct acts of provocation such as the practice of gunfire this side of the border.

Although the course of these events the English encouraged on the one hand the Armenians in the attitude adopted by them against the Mussulmen or even stirred them up to it and, on the other hand, enumerating to us the outrages of the former and describing them as unbearable,

հարևան պետության վրա հարձակման ճանապարհով փոխհատուցել: Բայց մենք, հանդուրժելով հայերի հրահրումները, չանսացինք անգլիացիների ցասումի կոչերին՝ համոզված, որ ճշմարտությունը շատ շուտով ջրի երես դուրս կգա: Իրականում մենք կարծում էինք, թե կարող ենք երևան հասնել Հայաստանի դեմ հարձակման որոգայթ լարելու անգլիացիների փորձը. մի ծրագիր, որը թույլ կտար ստեղծել այնպիսի իրավիճակ, որից նրանք կօգտվեին՝ սեփական զորքերն այդ երկիր ուղարկելով: Անգլիացիների բոլոր այս խուսանավումներն սկսվեցին նրանց պաշտոնատար անձանց ու ներկայացուցիչների կողմից այն բանից հետո, երբ նրանք իրենց դատապարտված զգացին շրջափակելու Կովկասը:

Մենք տեղեկանում ենք, որ ընդհարումներ են տեղի ունենում ադրբեջանցիների և Էրիվանի հայերի միջև: Մենք ենթադրում ենք, որ դրանց պատճառը հայերի հրաժարումն էր այն զինակցությանը միանալուց, որով ադրբեջանցիներն ու վրացիները գործում էին Անգլիայի դրածո Դենիկինի դեմ, ով փորձում էր ներխուժել հարավ:

Միանգամայն բնական է, որ Էրզրումի և Վանի մահմեդականները և մասնավորապես նրանց այն հատվածը, որ բնակվում էր սահմանամերձ շրջաններում, Հայաստանում իրագործվող կոտորածներից և մահից փրկված տարաբախտ փախստականների ու նրանց ողբալի դրության մասին ամեն օր ստացվող լուրերի պատճառով խոռ-

they urged us to retaliate by attacking the neighboring State. But we, putting up with the Armenian provocations, turned a deaf ear to the indignations of the English, feeling sure that the truth would make itself known soon enough. As a matter of fact we thought we could detect in the attitude of the English trying to launch us upon an attack against Armenia, the plan of creating a situation of which they would avail themselves to dispatch their own troops into that country. All these maneuvers of the English were started by their officers and representatives after they saw themselves obliged to evacuate Caucasia.

We hear that conflicts are taking place between the Azarbaijanese and the Erivan Armenians. We presume that the reason for this is the refusal of the Armenians to join the alliance concluded between the Azarbaijanese and the Georgians against England's protege, Denikin, who is trying to push southward.

It is quite natural that the Mussulmen of Erzeroum and Van, and more particularly those among them living in the border regions should have reached a high state of excitement as a result of the news reaching them daily of the massacres in Armenia and the sight of the

վոթյան բարձրակետի պիտի հասած լինեին: Ինչը լցրեց նրանց համբերության բաժակը, եթե ոչ հայերի հրաձգությունը մեր սահմանից դուրս: Բայց մեր կազմակերպվածությունը կարողացավ հանդարտեցնել նրանց և կանխել նրանց կողմից ակնկալվող պատասխան բռնությունների հավանականությունը:

VII. Խուսափելով Հայաստանում տարաբախտ մահմեդական բնակչությանն աջակցելուց և Ադրբեջանի մահմեդականների հետ համագործակցելուց՝ մենք անհրաժեշտ ենք համարում սահմանափակել մեր գործողություններն ու նպատակները ի ապահովագրում արդեն գծված սահմանների ներսում հայրենիքի և ազգի հետագա գոյության ու բարօրության: Մենք, ըստ էության, համոզված ենք, որ ֆուրիերիզմը* չարամիտ գաղափար է: Մենք կարծում ենք, որ ցնորքի մեջ ընկած, մեր նյութական ու բարոյահոգեբանական ներուժը ցրիվ տալով մեր սահմաններից շատ հեռու՝ հետապնդելով քիմերին, մենք միայն կթուլացնենք այն ուժը, որ պահանջվում է գահանիստն ու խալիֆայությունը պաշտպանելու համար, որը մեր հայրենիքի սիրտն է և մեր գոյության հանգույցը:

Բոլորովին վերջերս տեղի ունեցած իրադարձությունները, հանգուցալուծվելով մեր աչքի առաջ, սովորեցրել են մեզ հավատարիմ մնալ չափավոր գա-

unfortunate refugees having escaped death and whose condition is lamentable. What adds to their effervescence is the gunfire practice of the Armenians without our border. But our organization has succeeded in appeasing them and all likelihood of violent reaction on their part has been exerted.

VII. Refraining from going to the assistance of the unfortunate Mussulmen population in Armenia and from collaborating with the Mussulmen of Azarbaijan, we consider it indispensable to confine our action and aims to the task of insuring the future existence and welfare of the Fatherland and Nation, within the borders already defined. We are, in effect, convinced that Fouranism is a mischievous conception. We consider that, by dispersing our material and moral forces in the pursuit of chimeras a long distance from our frontiers, we will only weaken the strength we require for defending the seat of the throne and caliphate which is the heart of our Fatherland and the knot of our existence.

Quite recent events, unfolding themselves under our very eyes, have taught us to remain faithful to moderate con-

